

# ԷԶՄԻԱԾԻՆ



1966

8806-34

ՌՆԺԵ  
ԻԳ ՏԱՐԻ


Յունիս

# ԷԶՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ  
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ  
Ս ԷԶՄԻԱԾՆԻ

Զ

1966








## Ն Ո Վ Ա Ն Ի Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

|                                                                                                                                                                                                         | Է՝ |
|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----|
| Կ. ՂԱԳՐԱԿԱՆ— «Տօն կարողիկե Սերոյ էջմիածնի» . . . . .                                                                                                                                                    | 3  |
| Ոմովերջի հանգիստություն Հոգևոր Ճեմարանում . . . . .                                                                                                                                                     | 6  |
| Գ. ԻԳՈՐ ՍՐԿ, ԲՈՒՆԻԱԹՅԱՆ— Ուխտագնացություն ղեպի Տարև . . . . .                                                                                                                                           | 9  |
| Պաշտոնական . . . . .                                                                                                                                                                                    | 12 |
| Ս Ա Յ Ր Ա Թ Ո Ւ Ո Ւ Մ . . . . .                                                                                                                                                                         | 13 |
| Հալաթիաի (Ստամբուլ) հայոց Ուսուցիչ Գրիգոր Նուրակեան եկեղեցու բացումը . . . . .                                                                                                                          | 15 |
| Հյուսիսային Ամերիկայի հայոց արևմտյան բեմի առաջնորդի ընտրությունը . . . . .                                                                                                                              | 17 |
| Հյուսիսային Ամերիկայի հայոց արևելյան բեմի առաջնորդի ընտրությունը . . . . .                                                                                                                              | 18 |
| Սփյուռում . . . . .                                                                                                                                                                                     | 19 |
| Միդագրեի գանցառություն մը . . . . .                                                                                                                                                                     | 21 |
| Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ— Կոմիտասին հետ . . . . .                                                                                                                                                                  | 26 |
| Հ. Ո. ԵՂԻՍԱԿՈՅԱՆ— Սպիտակավոր Ուսուցիչ Աստվածածնի վանքը և նրա վիճակը ար-<br>ժանագրությունները . . . . .                                                                                                  | 31 |
| Ա. Խ. ՍԱՖՐԱՍՅԱՆ— Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի կոմից Թուր-<br>քիայի արդարադատության և դավանանքների միևնույնության ներկայացված<br>հայկական եկեղեցիների և վանքերի ցուցակներն ու բաժնիները . . . . . | 41 |
| Ա. ՄԱՏԹԵՈՍՅԱՆ— Լիմ անապատի զբոսայգի կենտրոնը ԺԳ—ԺԽ դարերում . . . . .                                                                                                                                   | 48 |
| Ո. ՔՈՒՆՔՅԱՆ— Տրանսիլվանիայի հայերի պայքարը ազգային ինքնուրույնության պահ-<br>պանման համար . . . . .                                                                                                     | 56 |
| Մ Ա Յ Ր Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք Ո Ւ Մ . . . . .                                                                                                                                                                 | 61 |



Խմբագրության հասցեն՝

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՈՒ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».

Rédaction de la revue „Etchmiadzine“; Etchmiadzine, Arménie, URSS.

Մար Աթոռ Ա. Էջմիածնի մարտի, 1966 թ.

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱՋՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ





## Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

### «ՏՕՆ ԿԱԹՈՂԻԿԷ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ»

Մեր եկեղեցական օրացույցում, Հարության, Համբարձման և Հոգեգալստյան տոներից անմիջապես հետո, հունիս ամիսը մասնավոր կարևորությամբ և նպատակով նվիրվել է Հայ Եկեղեցու միայն հատուկ ազգային-եկեղեցական դեպքերի հիշատակությանը, դեպքեր, որոնք սերտորեն կապված են Դ դարում Հայաստանում և Հայ ժողովրդի կյանքում քրիստոնեության մուտքով տեղի ունեցած պատմական, կրոնական մեծ իրադարձությունների և մեր ամբողջ պատմության հետ, ինչպիսիք են Հայրապետական Աթոռի հաստատումը, Կաթողիկե Ս. Էջմիածնի հիմնադրությունը, Վաղարշապատում քրիստոնեական առաջին եկեղեցիների շինությունը, Հայ Եկեղեցու նվիրապետության կազմակերպումը:

Սիմեոն Երևանցի կաթողիկոսը, երբ 1775 թվականին Մայր Աթոռի նորահաստատ տպարանում, երկու հատորով հրատարակում էր մեր Տոնացույցը, գեղեցիկ ու ճշմարիտ մտածումն էր ունենում համախմբելու հունիսյան ազգային այդ տոների հանդիսությունները, բարձրացնելու համար հոգևոր սրբություն, ազգային գիտակցության, բարեպաշտության, եկեղեցական ուխտապահության և իրավ հայրենասիրության ոգին և զգացմունքները մեր ժողովրդի սրտում:

Հունիսյան տոների այդ շարքը բացվում է հայրենի հողի վրա, Գ դարի վերջերին և Դ դարի սկզբին Ս. Գրիգոր Լուսավորչի

գործունեությունից առաջ, նոր կրոնի համար նահատակված Հռիփսիմյան և Գայանյան կույսերի նահատակությամբ, «որոց վարդապոյն հեղմամբ սուրբ արեանցն նորոգեաց զաշակերտեալսն ի ձեռն Սրբոյն Գրիգորի» (Ծարական): Քրիստոսի սիրույն նվիրված իմաստուն կույսերի և երկնավոր զինվորների «մարտիրոսությամբ ի մեջ Հայաստանեայց» հոգեպես վերածնվեց հայ ժողովուրդը և «ծնան կուսանք ազգս բազում», որով հետև նրանք իրենց նահատակությամբ դարձան «զոհք փրկութեան... բառնալով զխաւար դիւապաշտ մոլորութեանց յաշխարհէ և եղեն փրկանք աշխարհին» հաւոց (Ծարական):

Հայրենի հողի վրա և հայ հոգիների մեջ թափանցել էր քրիստոնեական լույսը: Մեր առաջին լուսավորիչները՝ Ս. Թադևոսն ու Ս. Բարթողիմեոսը, առաջին հայ նահատակը և առաքելուհին, արքայադուստր Սանդուխտը իրենց արյունը թափել էին Ավետարանի ճշմարտության վկայության համար: Նահատակությամբ չի խափանվում լույսի և կյանքի առաքելական քարոզչությունը հայրենի հողի վրա, մինչև Դ դար, Ս. Գրիգոր Լուսավորիչ, երբ քրիստոնեությունը հաղթանակ է տանում մեր երկրում հեռու մտայնության և բարքերի դեմ: Հայաստանի ամբողջական դարձը տեղի է ունենում Դ դարի սկզբներին, հայ ժողովրդի «լուսաւորութեան լուսաւորի վերակացու, ռաբվիրայ և երկրորդ լուսաւորիչ» (Խորենացի) Գրիգոր Պարթև Հայրապետի օրով:

Դ դարը մեր եկեղեցական պատմության մեջ այս պատճառով կոչվել է երկրորդ լուսավորության կամ կազմակերպության շրջան, երբ Հայ Եկեղեցու սուաշ բացվում է ազատ ու լայն գործունեության, արդյունավետ քարոզչության, քրիստոնեական դաստիարակության ասպարեզը:

Ահա զուտ հայկական, պատմական այդ իրադարձությունների հիշատակության խորհրդին և նշանակության են նվիրված հունիսյան մեր ազգային-եկեղեցական հանդիսությունները, ըստ օրացույցի ցուցմունքների:

Հոփսիսմյան և Գայանյան կույսերի նախատակությունը վճռական նշանակություն է ունենում Ս. Գրիգոր Լուսավորչի ապագա առաքելական գործունեության և Հայաստանում քրիստոնեական կրոնի վերջնական հաղթանակի համար:

Յոթնյակի երրորդ տոնը, շաբաթ օր, նվիրված է Արտաշատի Խոր Վիրապից Լուսավորչի ելնելու հիշատակին: Նա իր «քրիստոսաւեր կոչմամբ... և աստուածգիտութեամբն լուսաւորեաց շահաստան աշխարհս» (Ծարական):

Հունիսյան տոների մեջ, սակայն, իր համագային նշանակությամբ և խորհրդով, մեծ տեղ է գրավում «Տօն Կաթողիկէ Սրբոյ Էջմիածնի, զոր կարգեաց Սուրբն Գրիգոր Լուսաւորիչն մեր, յեւանէն ի Վիրապէն»:

Կաթողիկէ Սուրբ Էջմիածնի տոնը, որը կատարվում է Հոգեգայտյան տոնի երկրորդ կիրակին, հունիսի 12-ին Լուսավորչի Խոր Վիրապից ելնելու հաջորդ օրը, նվիրված է Լուսավորչի աշխարհի, Հայրապետական Աթոռի և նրա նվիրապետական իշխանության հաստատման, հայրենի հողի վրա առաջին հայ եկեղեցու՝ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի կառուցման հիշատակին: «Եւ տեղին այն լիցի Տաճար Աստուծոյ և Տուն աղօթից խնդրվածոց ամենայն հաւատացելոց եւ Աթոռ քահանայապետութեան» (Ագաթանգեղոս):

Մայր Տաճարը, Լուսավորչի լուսեղեն տեսիլքի մարմնացումն է: Միածինը ինքը անձամբ՝ քրիստոնեական Եկեղեցու և հավատի Հիմնադիրը, Գլուխը, իջալ ի Հայաստան աշխարհ, և հաստատեց հայ եկեղեցու Մայր Տաճարը Իր Լույսին, աստվածային և երկնային Իր Ծնորդի ու իր Փառքի մեջ»: Էջմիածինն ի Հօրէ և լոյս փառաց ընդ նմա»: Ու այդ լույսի ու շնորհքի մեջ բյուրեղացան հայ եկեղեցու նվիրապետության նկարագիրը և ազգային, հայկական ոգին: Էջմիածինը դարձավ ձուլարանը մեր մշակույթի և դպրության: Այնտեղ դարբնվեց Վարդանանց ոգին. այնտեղ նաև պայծառացավ հայ ժո-

ղովրդի ճշմարիտ եկեղեցաւիրության, հայրենասիրության զգացմունքը: Հետագայում, մեր եկեղեցու և ժողովրդի գլխին թափվող բյուրավոր չարիքներն ու աղետները չկարողացան երբեք հայության սիրտը օտարացնել իր հոգևոր և իմացական արժեքների Վերնատնից, որ Սուրբ Էջմիածինն է:

Սուրբ Էջմիածինը միաժամանակ խտացումն է մեր հավատքի և մեր լույս իլմերի համագային, նվիրական կոթողը: Լուսավորչի Տեսիլքն իր մեջ ընդգրկեց հայության ընդհանրական, հավաքական ոգին, մեր ժողովրդի ամբողջական գոյությունը: Հավատքը՝ Քրիստոսից, Լույսը Լուսավորչից: Մենք Լուսավորչի սերունդ ենք, Էջմիածնու ազգ և ժողովուրդ:

Այդ օրվանից Սուրբ Էջմիածինը դարձավ նաև խորհրդանշանը, կենտրոնը հայ ժողովրդի ոգեկան միության, ազգային եկեղեցական միասնության. «Եւ սիւնն հրեղէն կաթողիկէ Եկեղեցի է, որ ժողովէ զամենայն ժողովս ի միաբանութիւն հաւատոց ի ներքոյ թեոցն իւրոց» (Ագաթանգեղոս):

Լուսավորչի տեսիլքը և Ս. Էջմիածնի խորհուրդը այնուհետև տիրականորեն իշխել են մեր եկեղեցական մատենագրության և հայ ժողովրդի գիտակցության մեջ: Մեր Ծարականոցի գեղեցիկ երգերը նվիրվել են Էջմիածնին և Լուսավորչի շողակաթ տեսիլքին, օրհնակ, Ծողակաթի կանոնը՝ «Ուրախ լեր» և «Մանկունք»-ը՝ «Էջ Միածինն ի Հօրէ» (Է դար) շարականը, որ Ս. Լուսավորչի տեսիլքի խտացումն է. «Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ, քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի»:

ԺԳ դարի մեծ և հայրենասեր պատմիչ Ատեփանոս արքեպիսկոպոս Օրբելյանը, 1300 թվականին գրած իր սրտառույ «Ողբ ի Սուրբ Կաթողիկէին» ընդարձակ գրվածքում, բաղձանք էր հայտնում Արարատյան դաշտում հավաքված տեսնել տարագիր հայ ժողովրդին, վերականգնված՝ եկեղեցական պատմական կենտրոնը և «զԱթոռ թագաւորին և զգաւազան Պատրիարքին»:

ԺԷ դարի մեր հայրենասեր պատմիչ Առաքել Դավրիժեցին իր «Պատմության» մեջ արտահայտում էր բուլանդակ հայ ժողովրդի հավատն ու զգացմունքները, երբ արձանագրում էր. «Ի վերայ Ս. Աջոյն և Էջմիածնի ամենայն ազգն Հայոց կապեալ կայ»:

ԺԸ դարի մեծագործ կաթողիկոս Սիմեոն Երևանցին իր «Պարտավճար» գրքում Էջմիածինը ներկայացնում է որպէս հայրենասիրության և հայ ժողովրդի հոգևոր միության նվիրական կենտրոն: Երևանցին կոչ էր անում չմոռանալ Ս. Էջմիածինը և մեր ժողովրդի ազգային-եկեղեցական միություն-



նը անքակտելի, ողջ և առողջ պահելու համար հորդորում էր. «Ահա Լուսաւորիչ Հայրն ձեր Սուրբն Գրիգոր և հոգեծին Մայրն ձեր Սուրբ Էջմիածին հանդերձ ամենայն վաւորելիք և եկեղեցեօքն Հայաստանեայց և ամենայն հոգևոր և մարմնաւոր նախնեօքն և երախտաւորք ձերովք միշտ... գրեին... պատուիրեն ամենայն հեռացելոց և տարագրելոց ազգիդ Հայոց հայրական սիրով և ցաւակցական սրտիւ: Եւ դո՛ւք, սիրելի ազգդիմ, ա՛զգ Հայոց, ոչ պարտիք զբանս զայս վայրապար իմանալ և զանց առնել, այլ ճշմարտի գիտասցիք և հաւատասցիք»

Այսօր էլ, աշխարհով մեկ դեռևս ցրվել ենք, բայց միացած ենք Լուսավորչի տեսիլքով, Ս. Էջմիածնի խորհրդով, օրհնությամբ և «ահեղ զօրութեամբ»: Այսօր, ավելի քան երբեք, կենսունակ, պայծառ և հավերժական է Մայր Աթոռ Ս. Էջմիածինը իր գավակների սիրո, հավատարմության և պաշտամունքի մեջ: Էջմիածնասիրությունը հայ ժողովրդի նվիրական ժառանգությունն է, Լուսավորչի լուսեղեն տեսիլքով և նրա սրբազան, հավերժական խորհրդով օծուն:

Այդ տեսիլքը և այդ սերը անբաժանելի են եղել Ս. Էջմիածնից և հայության սրտից:

Ավելի քան սրտառուչ է արձանագրել, որ երկար դարերի փոթորիկներից հետո, այսօր, հայրենի հողի խաղաղ և ազատ պայմաններում Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, Լուսավորչի Գահի արժանաւոր հաջորդի ու Գահակալի՝ Ամենայն Հայոց բազմերախտ Հայրապետի ղեկավարությամբ, մեր նախնաց լուսեղեն ճանապարհով, կատարում է իր փրկարար առաքելությունը Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի կյանքում:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կաթողիկեի տոնի առթիվ, բովանդակ հայության սրտենուանդ աղոթքն է, որ անշարժ, հավերժական և պայծառ մնա մեր հոգևոր, համագային Տունը, Հայ Եկեղեցու նվիրապետության ի վերուստ սահմանյալ կենտրոնը, Ամենայն Հայոց Հայրապետությունը իր Գահակալով, իր ժողովրդով:

«Թագաւոր երկնաւոր, բարեխօսութեամբ վերին քո զօրաց միշտ անշարժ պահեազ Աթոռ Հայկազնեայցս»:







## ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԵՎՈՐ ԾԵՄԱՐԱՆՈՒՄ

Հունիսի 10-ին, ուրբաթ օր, առավոտյան ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության ներքո, Հոգևոր Ճեմարանի հանդիսասրահում, տեղի ունեցավ 1965—1966 ուսումնական տարվա ամավերջի հանդիսությունը, որին ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն Հոգևոր Խորհրդի և վերստուգիչ հանձնաժողովի անդամները, դասախոսական կազմը և մայրավանքի պաշտոնեությունը:

Հանդեսն սկսվեց Հայկական ՍՍՀ պետական հիմնի նվագով: Ապա Ճեմարանի երգչախումբը կատարեց «Որք զարդարեցին» Թարգմանչաց շարականը:

Հոգևոր Ճեմարանի ավագ վերակացու արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարությանը կատարեց հանդիսության բացումը:

Այնուհետև Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ հոգեշնորհ Տ. Ներսես ծայրագույն վարդապետ Պողապալյանը կարդաց Ճեմարանի 1965—1966 ուսումնական տարվա գործունեության ընդհանուր պատկերը՝ ներկայացնող խնամքով պատրաստված զեկուցագիրը. «Վեհափառ Տե՛ր»:

Աստուծո օգնականությամբ և Զերդ Ս. Օծության օրհնությամբ, հունիսյան այս միջօրեին, իննամսյա աշխատանքից հետո, Մայր Աթոռի Հոգևոր Ճեմարանի ղեկները փակում են ամառային երկամսյա արձակուրդով: 1965—1966 ուսումնական տարին ևս հանձնվում է Հոգևոր Ճեմարանի պատմության: Այս տարի ևս, հավատում ենք, որ կարողացանք մեր ուժերի ներածի շահով օգ-

տակար լինել այս սրբազան հաստատության:

Մառայության և նվիրման նույն ոգին մեզ բոլորիս հավաքել է այս սրբազան հարկի ներքո: Մենք ոչ միայն կոչման ջահը հաջորդ սերունդին փոխանցելու պարտականություն ունենք, այլ նաև ունենք գիտակցությունը մեր կյանքի գնով իսկ արժարժեքու այդ ջահի լույսը, որը ժառանգել ենք մեր հավատի հայր Ս. Գրիգոր Լուսավորչից:

Մենք հավատում ենք մեր նախնյաց և կշարունակենք մեր կյանքի ճանապարհը նրանց գծած ուղիով, որպեսզի գալիք սերունդներն ևս ընթանան մեր ճանապարհով՝ ապահովելու համար այս Ս. Սկեղեցու հավերժությունը:

Ճեմարանի 1965—1966 ուսումնական տարին սկսել ենք անցյալ սեպտեմբերի 9-ին, 28 աշակերտներով: Այս տարվա ընթացքում 6 սաներ հեռացվել են և նրանց փոխարինել են 6 նոր սաներ: 28 թիվը մնացել է անփոփոխ, բաշխված հինգ դասարանների վրա:

Անցնող ուսումնական տարվա ընթացքում, Ճեմարանի կրթական ծրագիրը կենսագործվել է ամբողջապես: Պետք է գնահատանքով նշեմ, որ մեր դասախոսները ջանք չեն խնայել իրենց առավելագույնը տալու և կրթական ծրագիրը լիովին իրագործելու:

Ճեմարանի դասախոսական կազմի գլուխն է Վեհափառ Հայրապետը, որ շաբաթվա մեջ մի քանի ժամ, հայրաբար իջնելով Իր Գահից, գալիս է Ճեմարան, հոգեբանության, տրամաբանության և քարոզախոսության ա-



ոարկաները դասավանդելու լսարանի ուսանողության:

Ճեմարանի բոլոր դասախոսներն էլ պատրաստված և փորձառու անձնավորություններ են, լավ մասնագետ իրենց դասախոսությամբ առարկաների գծով: Պարտքն ունեւմ այս տարվա ավարտին շնորհակալություն հայտնելու մեր դասախոսներին՝ իրենց ցուցաբերած խղճամիտ և արդյունավետ գործի համար:

Ճեմարանի սաները, անխտիր, ամեն առավոտ և երեկո, գործուն մասնակցություն են բերել Մայր Տաճարի արարողություններին, մասնակցել են կիրակնօրյա ու տոնական օրերի պատարագներին: Ամեն շորեքշաբթի երեկոյան ժամը 9.30-ին կես ժամով հավաքվել են Մայր Տաճարում Հանգստյան ժամերգություն կատարելու և հոգևոր շինության մասին խոսկալու:

Այս տարի Հոգևոր Ճեմարանից շրջանավարտ են լինում Գ լսարանի 4 բարեշնորհ սարկավազներ՝ Ծղիշե Բաղրամյան, Գրիգոր Բունիթյան, Հովհաննես Հակոբյան և Դավիթ Դիլանյան: Բոլորն էլ անխափան հետևել են Ճեմարանի վեցամյա դասընթացներին: Նրանք արդեն իսկ աշխատում են իրենց ավարտաճանաչի վրա, որոնք հոկտեմբերի 1-ին հանձնվելու են Ճեմարանի տեսչության, և որոնց հաջող բանավոր պաշտպանությունից հետո, ստանալու են Ճեմարանի վկայականները:

Այս տարի Ճեմարանի հարկի տակ երեկուկների թիվը դգալի չափով շատացել էր գրեթե ամեն ամիս, երկու դասախոսություններ ունեցել, մեր հարկի տակ համերգներ են կազմակերպել, հաճախ ուսանողները համերգների են դնացել Երևան:

Կիսամյա և ամավերջի քննությունները որոշյալ ժամանակին են տեղի ունեցել արդյունավետ կերպով:

Գոհություն Աստուծո, այս տարի ուսանողների առողջական վիճակը գոհացուցիչ էր. լուրջ հիվանդություններ չեն ունեցել, անխուսափելի միօրյա անհանգստությունների թիվը ևս զգալի չափով պակասել է:

Այստեղ պարտք ունեւմ շնորհակալության խոսք ասելու էջմիածին քաղաքի պոլիկլինիկայի տեսչության և բժշկական անձնակազմին, որոնք երբեք չեն դլացել մեր սաներին անհրաժեշտ եղող բժշկական խնամքը ջամբելու:

Անդնող ուսումնական տարվա ընթացքում մի շարք միօրյա պտույտներ են կատարել Հայաստանի գեղատեսիլ ու պատմական վայրերը, հաճախ հետիոտն և մերթ ինքնաշարժով: Այցելել են Հովհաննավանք, Սաղ-

մոսավանք, Մուղնու Ս. Գևորգ, Գեղարդավանք, Զվարթնոց, Այդեր լիճ, Պետական թանգարան, Պատկերասրահ, Մատենադարան, Կարմիր բլուր և այլ վայրեր:

Հոգևոր Ճեմարանի գրադարանն այժմ ունի շուրջ 10 000 գրքային ֆոնդ, որից մեր սաները կանոնավորապես օգտվում են:

«Առողջ միտք՝ առողջ մարմնի մեջ»: Մենք հավատում ենք սույն նշանաբանին: Ուսանողներն այս տարի ֆուտբոլի զանազան խաղեր ունեցան այլ խմբերի հետ: Կանոնավորապես ամեն կիրակի կեսօրից հետո, քաղաքի դաշտը վարձվեց փորձերի համար: Ճեմարանում մեր սաները խաղում են վոլեյբոլ, բասկետբոլ, ֆուտբոլ և սեղանի թենիս:

Մեր խոսքը փակելուց առաջ, պարտքն ունենք երախաագիտական խոսք ասելու Վեհափառ Հայրապետին՝ Իր հայրական հոգատարության համար: Հույս ունենք, որ մեր սաները իրենց ուսումնառությամբ, կարգապահությամբ և նվիրումով կաշխատեն երախտահատույց լինել իրենց հետագա կյանքում:

Շնորհակալություններ մեր հայրենի հարազատ կառավարության: Շնորհակալություն Գերագույն Հոգևոր հորհրդի անդամներին, Մայր Աթոռի միաբանության և բոլոր պաշտոնյաներին, որոնք իրենց թանկագին աջակցությունը եկան միացնել մեր ծառայության:

Անձնապես շնորհակալության խոսք ունեւմ Ճեմարանի վերակացու արժանապատիվ քահանա հայրերին՝ հանձինս Տ. Հովհաննես Մարությանին և Տ. Նշան Բեյլերյանին, որոնք անձնվիրությամբ լծվեցին այս հոգեշեն գործին:

Հուսկ ուրեւմ, շնորհակալություն այն բոլոր բարերարներին, որոնց օժանդակությամբ Հոգևոր Ճեմարանն իր գոյությունը շարունակում է պահպանել:

Այսու փորձեցինք հակիրճ տողերով ներկայացնել Հոգևոր Ճեմարանի առօրյան ու նպատակը:

Վստահ ենք, թե նվիրական այս գործի իրականացման ճանապարհին, Աստված կլուսավորե մեր բանականությունը, մեր աշխատանքը, կլիցքավորի մեղ մեր վհատությանց պահերին ու մեր Եկեղեցու եռամեծ հայրերը մեր կողքին կանգնած, բարոյական կորով կջամբեն մեղ մեր սուրբ նպատակի իրագործման համար:

Թող հավետ կեցցե բազմադարյան այս փոքր ածուն: Աստված երկար ու քաջառողջ կյանք պարգևի մեր Հոգևոր Հոր, Վաղգեն Ա Կաթողիկոսին Ամենայն Հայոց, որպեսզի մեր հետագա կյանքը լինի ավելի արդյունավետ ու տեսիլներով լի:

Հանդիսության երկրորդ բաժինը բաղկացել էր խմբերգերից, արտասանություններից և մրցանակաբաշխություններից:

Հոգևոր ձեմարանի երգչախումբը, երաժշտության դասատու խորեն Մեյխանաշյանի շնորհալի ղեկավարությամբ, կատարեց կոմիտասյան «Թագավոր բարով», «Թագավորի մեր», «Լեփո լելե», «Մերիկ շան», «Առնեմ երթամ» խմբերգերը: Ա դասարանի ուսանող խ. Խաչատրյանն արտասանեց Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի»-ն, Գ դասարանի ուսանող Հովհաննես Քըվըքյանը՝ Հ. Արթնյանի «Գարունի աստղերը», Գ լսարանի ուսանող Գրիգոր սարկավազ Բունիաթյանը՝ Գևորգ էմինի «Երգ երգոց»-ը, Ա դասարանի ուսանող Տ. Սահակյանը՝ Ն. Զարյանի «Հայոց լեզուն», Գ լսարանի ուսանող Եղիշե սարկավազ Բաղրամյանը՝ Լ. Միրիշանյանի «Հայերի դարձը»: Գ դասարանի ուսանող Ա. Գալստյանը դաշնամուրի վրա կատարեց Շոպենի «Վալս»-ը:

Ա լսարանի ուսանող Սասունիկ Վարդանյանը, հանուն Հոգևոր ձեմարանի ուսանողության, կարգաց Վեհափառ Հայրապետին ուղղված որդիական երախտագիտության և շնորհակալության շերտ զգացմունքով գրված մի ուղերձ:

«Վեհափառ Տե՛ր.

Ինձ վրա հաճելի և միևնույն ժամանակ դժվարին պարտականություն է դրված թարգմանել լինելու Հոգևոր ձեմարանի ուսանողության զգացմունքների և հույզերի, հաղորդելու իմ եղբայրների երախտագիտությունը՝ ի պատասխան Ձերդ Ս. Օծուխյան հոգատարության:

Տարին վերջացել է:

Դեռ երեկ էր, մեր ուսուցիչներն ու դասախոսները քննում էին մեզ՝ տեսնելու համար, թե իրենց ցանած սերմերը մեր մտքի անդամստանում հասկավորվե՞լ են արդյոք:

Մենք ուզում ենք, որ հավատաք մեզ, հավատաք, որ իզուր չեն Ձեր ջանքերը:

Մենք, ձեմարանի ուսանողներս, պետք է որ անշափ երջանիկ և հպարտ զգանք մեզ, որ գտնվում ենք այստեղ, այս լուսեղեն, այս ոգեղեն կամարների տակ, ուր մարդիկ ոչ միայն հացով են ապրում, այլ նաև հոգով, գաղափարով: Հոգով ապրող մարդը, գաղափարին ծառայող մարդը չի կարող վատ ու չնչին լինել:

Այստեղ իսկապես ամեն բան պատմություն է, հուշ, հուշը մասունք է ու մասունքը՝ սրբություն: Եվ պատահական չէ, որ հայ մարդը մի առանձին հուզումով է խոսում Ս. էջմիաճնի, Մայր Աթոռի և Հոգևոր ձեմարանի մասին: Զե՛ք որ դարեր շարունակ այս

սուրբ ակունքներից է ծագել միակ լույսը հորդառատ, առանց որի խավար կլինեի մեր ժողովրդի ճամբան: Եվ մենք դրոշակաւորն ենք այդ լույսի: Մենք վաղվա ճրագներն ենք. որ պիտի այրվենք:

Մեր բոլորիս խոսքն է՝ շնորհակալություն, Վեհափառ Տե՛ր, շնորհակալություն մեր դասախոսներին և տեսչության, որոնց ինքնամոռաց ու համառ աշխատանքով լուսավորվում են մեր մտքերն ու սրտերը:

Թույլ տվեք, Վեհափառ Տե՛ր, Հոգևոր ձեմարանի ուսանողության կողմից համբուրել Ձեր Ս. Աջը և մաղթել Ձերդ Սրբությանը երկար տարիների առողջ կյանք, որպեսզի Ձեր և շատ այլ գործերի հետ միաժամանակ շարունակեք այն դաստիարակչական, աղօթգուտ գործը, որ սկսել եք Հոգևոր ձեմարանում:

Այնուհետև վերատեսուչ հայր սուրբը հրապարակում է անունները այն ուսանողների, որոնք ուսման, վարքուբարքի և արտադասարանական այլ օգտակար աշխատանքների համար մրցանակների են արժանացել:

Ուսման մեջ առաջնության համար աւարձե՛վատրվեցին.

Գ լսարանից՝ Գրիգոր սարկավազ Բունիաթյան և Եղիշե սարկավազ Բաղրամյան: Ա լսարանից՝ Վրեժ Ներսիսյան և Աբգար Մարտիրոսյան:

Գ դասարանից՝ Հովհաննես Քըվըքյան և Արարատ Գալստյան:

Բ դասարանից՝ Ղազարոս Կյուրեղյան, Խաչիկ Յրանկյան, Վարդան Տյոլեքյան:

Ա դասարանից՝ Տիգրան Ահակյան, Ժիրայր Սիմոնյան:

Երեք ուսանողներ կրկնում են իրենց դասարանը, իսկ յոթ ուսանողներ վերաքննություն ունեն:

Գերագանց վարժի համար, միակ մրցանակը, շահեց Ա լսարանի ուսանող Վրեժ Ներսիսյանը:

Մաղկաբուծության համար պարգևատրվեցին Հովհաննես Քըվըքյանը և Արարատ Գալստյանը:

Մրցանակի արժանացած ուսանողները Վեհափառ Հայրապետի ձեռքից աջահամբուլրով ստացան իրենց նվերները, դահլիճում հավաքվածների ծափերի տակ:

Հոգևոր ձեմարանում 1965—1966 ուսումնական տարվա ամսվերջի հանդիսությունը վերջացավ Վեհափառ Հայրապետի ոգեշունչ խրատականով և հայրական օրհնությամբ:

Հանդիսության ավարտին, դասախոսական կազմն ու ուսանողությունը մոտեցան Վեհափառ Հայրապետին՝ աջահամբուլրով ստանալու նորին Ս. Օծուխյան օրհնությունը:





## ՈՒՒՏԱԳՆԱՅՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ՏԱԹԵՎ

Ուսումնական տարին վերջացել է: Դեռ երեկ էր, որ Հոգևոր Ճեմարանի սրահներում աշխույժ եռուղեւ էր տիրում: Ուսանողները, զոհ իրենց ամբողջ տարվա աշխատության արդյունքներին, ժրաշանորեն պատրաստվում էին ամավերջի հանդեսին:

Ամեն ինչ արդեն վերջացել է, ավարտվել են հանդիսությունները և տոնակատարությունները: Պատրաստվում ենք մեկնելու ուխտագնացության դեպի Տաթև:

Հունիսի 13-ին, երկուշաբթի, վաղ առավոտյան ժամը 6-ն է: Ուսանողներս սրտատրոփ սպասում ենք այն պահին, երբ կսկսվի ուխտագնացությունը դեպի այն սրբավայրը, որի մասին մեր դասերի ընթացքում սովորել և բաղմիցս լսել ու կարդացել էինք:

Առավոտյան ժամը 6.30-ին, 40 ուսանողներ և մի քանի դասախոսներ, երեք ավտոմեքենաներով մեկնում ենք դեպի Տաթև:

Եղանակը արևոտ էր ու պարզ, մեր տրամադրությունները բարձր: Ավտոմեքենաները ամբողջ թափով սլանում էին էջմիածին—Երևան մայր ճանապարհով, անցնում Արարատյան դաշտավայրի կանաչախիտ այգիների ու ծառաստանների միջով:

Մեր ճանապարհը անցնում է Երևանի, Արտաշատի, Արարատյան դաշտավայրի վրայով: Ամեն կողմ կանաչին են տալիս այգիներն ու մրգաստանները: Անցնում ենք շեն գյուղերի միջով: Իսկ քիչ այն կողմ մեր դիմացն է աստվածաշնչական Արարատը, այնքան մոտ, մտերիմ ու հարազատ:

Քիչ հետո հեռվում երևում են բաղմահարկ շենքերի տանիքներ, որոնք, միախառնված սաղարթախիտ ծառերի կանաչի հետ, գծազրույթ են հետաքրքրական մի տեսարան: Արտաշատ քաղաքն է, Սովետական Հայաստանի երիտասարդ և դարգացող քաղաքնե-

րից մեկը, որ տարեցտարի կառուցվում և ավելի է գեղեցկանում:

Առանց կանգ առնելու, անցնում ենք քաղաքի միջով, ուղղություն ենք վերցնում դեպի հարավ-արևելք, խորանալու համար պատմական Հայաստանի վայրց Ձորի գեղատեսիլ բնության մեջ:

Երկու ժամից հետո մեր առջև բացվում է Ջերմուկ քաղաքի գեղեցիկ համայնապատկերը, բարձրադիր և կանաչադարձ մի հարթավայրի վրա: Ջերմուկը երիտասարդ քաղաք է: Ամեն կողմ կանաչ, նորակերտ շենքեր, որոնց մեջ մասնավորաբար իրենց ճարտարապետական ուրույն կառուցվածքով աչքի են ընկնում ամառանոցները և հանգստյան տները: Օդը շատ առողջարար է և հաճելի: Ունի հանքային և բնական անուշահամ ջրեր: Կանգ ենք առնում և երկու ժամվա դադարից ու նախաճաշից հետո, շարունակում մեր ճանապարհը դեպի Սիսիան:

Ճանապարհը նախ անցնում է ահռելի կիրճերի և ձորերի միջով, ապա քիչ-քիչ սկսում է մազլցել սարն ի վեր: Կեսօրին հասնում ենք ճանապարհի ամենաբարձր կետին, լեռան գագաթին, որտեղ հանգստանալուց և ճաշելուց հետո, սկսում ենք մեր վայրէջքը դեպի Սիսիան, դեպի պատմական Սյունյաց աշխարհը:

Երեկոյան Սիսիանում ենք արդեն, ուր գիշերում ենք հյուրանոցում:

Առավոտ ծեփին ոտքի վրա ենք և անհամբեր ծանոթանալու քաղաքին:

Սյունյաց աշխարհն ունի չորս գավառներ՝ Սիսիան, Ջանգեղուր, Ղափան և Մեղրի:

Սիսիանը նախապես բաժանված էր երկու գավառների. հարավ-արևելյան մասը կոչվում էր Մղակ, իսկ հյուսիս-արևմտյանը՝ Ալլախ: Մղակ գավառի համար գործածվել է

նաև Սյունիք կամ Սիսական անունը, որ հանդիսացել է Սյունյաց իշխանների կենտրոնը։ Սիսական անունն է, որ փոփոխվելով հետագայում վերածվել է Սիսիանի։ Ահա այդ գավառի մեջ էլ գտնվում է համանուն փոքրիկ քաղաքը, որն այժմ շրջանային կենտրոն է։ Սիսիանը շատ հարուստ է պատմական հուշարձաններով և միևնույն ժամանակ եղել է Սյունյաց միտրոպոլիտոսի կենտրոնը։

Քաղաքի հյուսիս-արևմտյան կողմում վեր է խոյանում Ս. Հովհաննես եկեղեցին, որ իր ճարտարապետական կառուցվածքով շատ է հիշեցնում Ս. Հռիփսիմեի տաճարը։ Շատ հավանաբար կառուցված է է դարում։ Վերջերս ամբողջովին վերանորոգված է ճարտարապետական հուշարձանների պահպանության պետական կոմիտեի նախաձեռնությամբ։

Քաղաքին ծանոթանալուց հետո, թողնում ենք Սիսիանը և ուղղվում Գորիս, ուր հասնում ենք երեկոյան դեմ։

Գորիսը գտնվում է ընդարձակ ու ծառաշատ մի ձորահովտի մեջ։ Ի տարբերություն հին Գորիսի, որը գտնվում է քիչ ավելի վերևում 4 կիլոմետր հեռավորությամբ, նորից մի հովտի մեջ, այս մասը կոչվում է Նոր Գորիս, որը բուն շրջանային կենտրոնն է։ Հիմնադրված է անցյալ դարի երկրորդ կեսին։ Շրջապատված է բարձր սրածայր բլուրներով, Գորիսը լեռնային ուրույն գեղեցկություն ունեցող մի քաղաք է. մանավանդ իր նորակառույց բազմահարկ շենքերը, փոքրիկ հրապարակները և նորատունկ զբոսայգիները արդիականության հմայիչ մի երանգ են հաղորդում նրան։ Քաղաքն ունի երկու մեծ գործարաններ՝ մեքենաշինական և հյուսվածեղենի։ Ունի շատ սառնորակ ջուր, որը բերվում է Ակներ գետից։ Քաղաքում կա մի փոքրիկ եկեղեցի Ս. Լուսավորիչ անվամբ։

Հաջորդ օրը, վաղ առավոտյան, պատրաստ էինք մեկնելու դեպի Տաթև, որը Գորիսից գրեթե 35 կիլոմետր հեռավորության վրա է գտնվում։

Ճանապարհը դժվարին է։ 20 կիլոմետր անցնելուց հետո, ճանապարհը մեքենաների համար դարձավ շատ վտանգավոր. ուստի թողնելով մեքենաները անտառում, մնացած ճանապարհն անցնում ենք ոտքով։ Ուխտի ենք գնում։

Մինչև Որոտան գետը, որ պետք է անցնի Սատանի կամուրջի վրայով, ճանապարհը զառիվայր էր և առանց մասնավոր դժվարությունների կարողացանք անցնել մեկ ժամում։ Սակայն կամրջից այն կողմ նորից սկսվում էր վերելքը։

Ամեն հոգնություն և ճանապարհի բոլոր դժվարությունները անհետացան, երբ բարձ-

րացանք լեռան գագաթը։

Մեր առաջ կոթողացել էր Տաթևը։

Տաթև, տարիների իմ երազ. հավատի, գիտության փարոս, որ միջնադարյան թանձր խավարի մեջ լուսավորեցիր իմ ժողովրդի ճամբան և մշակութային ու հոգևոր արժեքների շահակիրը եղար։

Կանգնել եմ Տաթևի դիմաց հմայված, հափշտակված։ Անցնում են հուզման «ոռաշին վայրկյանները։ Արդեն վանքի դարբասների առաջ ենք։ Սթափված անցյալի քաղաք, հուշերից, ծնրադիր, խմբովին համբուրում ենք պարսպի դռան պատերը և երկյուղածորեն ներս մտնում։ Ուխտավորներ ենք։

Մեր աչքերի առաջ բացվում է տխուր մի տեսարան. ամբողջ բակն ավերակների մի կույտ է ներկայացնում, որի վրա թագավորում է ամայությունը։ Մտովին իրականություն ենք հակադրում այն ժամանակները, երբ վանքը ծփում էր ռեազմոսթեամբ Խոսնաւորօք, անյաղթ փրիխտփայիւք, անն Իա՛, երաժշտօք և բանիբուն վարդապետօք և յոստուածազգեաց ճգնաւորօք, նաև յոգնապատիկ արհեստաւորօք» (Օրբելյան)։

Մինչև 1931 թվականի երկրաշարժը, կանգուն էր Տաթևի վանքը։

Տաթևի վանքը հիմնադրվել է 895 թվականին, Սմբատ Բագրատունու թագավորության, Սյունյաց Աշոտ իշխանի և Գևորգ Գառնեցի կաթողիկոսի օրով։ Եկեղեցին կառուցվել է Հովհաննես եպիսկոպոսի ձեռքով ԺԱ դարում։ Նվիրված է Պողոս և Պետրոս առաքյալների հիշատակին, որի համար կոչվում է Ս. Առաքելոց վանք։ Ունեցել է մոտ 50 մետր բարձրություն։ Տաճարը շինված է մոխրագույն բազալտ քարերով։ Գմբեթն ունի 48 կանգուն երկարություն և 24 կանգուն լայնություն։ Այն հանգչում է կամարակապ ծածկով երկու հսկայական մույթների վրա։ Բացի ավագ խորանից, եկեղեցին ունեցել է չորս այլ խորաններ ևս։

Ահա Օրբելյանի նկարագրությունը եկեղեցու մասին. «Եւ այսպէս, կատարեալ դեկեղեցին կամար երկնամասն գմբեթայարկ, ճեմարան, իմն հրեշտակաց և քաւարան մարդկան ի տաշածոյ վիմաց և ի քերածոյ քարտնց գաղատոսաշէն իմն յարմարեալ ակնախտիղ տեսողաց ի հարիւր կանգնոյ բարձրութիւն նորա և ի քառասուն ութ կանգնոյ երկայնութիւն նորա և ի քսան չորս կանգնոյ լայնութիւն նորա, ունելով յինքեան չորս խորանս բաց յաւազ խորանին։ Եւ ըստ Սոլոմոնեան յարկին և կամ Զօրաբերելեանին կառուցեալ ի մէջ տանն երկուս սինս հրաշակերտս... որք հաստահեղոյս խարսխօք և գեղեցկադիր և բարձրաբերձ թակադաղօք պարարարձեալ ունին զահագին թանձրու-



թիւն երկնածնողուն քարակարկառ յարկին. և այս ի խորհուրդ երկուց գլխավոր առաքելոցն Պետրոսի և Պօղոսի, յորոց նշխարացն եղան ի ներքոյ սևանցս»:

Եկեղեցու հարավային պատի տակ թաղված է յոթնալույս վարդապետը՝ Ս. Գրիգոր Տաթևացին, սպիտակ քարերով կառուցված մատուռ-դամբարանի մեջ: 1787 թվականին Տաթևի առաջնորդ Հովակիմ եպիսկոպոսը չորս վիմաքարս կանգնել էտ ի սուրբ աթոռս՝ գերկուսն ի մէջ մեծի տաճարին առջնթևի երկուց սևանց՝ ղմին ի վերայ դամբարանի եօթնալույս վարդապետին Սրբոյն Գրիգորի Տաթևացւոյ, վարդարուն խաչիւք քանդակեալ ի քարանց, և հոյակապ յօրինուածով կոփածոյ քարամբ գեղեցկատես մատուռ իմն շինեալս:

Ս. Առաքելոց վանքի հարավային պատին կից կառուցված է Լզել Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, որ այժմ կիսով չափ ավերված է:

Վանքին կից Լզել է սյունազարդ երիզված նախասրահ, որտեղ, Պղատոնի ակադեմիայի օրինակով, ուսուցումը կատարվել է բացօթյա:

Վանքի հարավակողմում կոթողանում է Գավազան-սյունը, որի բարձրությունը 15 մետր է, իսկ շրջագիծը 3 մետր: Այս սյունը ունի շարժվելու ունակություն. բավական է մի փոքրիկ հպում և այն կսկսվի տատանվել: Ավանդությունն ասում է, որ Տաթևյան վարդապետները գավազանի իրավունքը ստանում էին այս սյան առջև և եթե որեւէ մեկը իրապես արժանի էր գավազանի իշխանություն ստանալու, սյունը ինքն իրեն սկսում էր շարժվել:

Որպես պարիսպ վանքը պատում են միաբանական խցերը, մթերանոցները, դասատներն ու գրապահոցները, որոնք ներկայացնում են շատ հետաքրքրական ճարտարապետական մի կառույց:

Տաթևի դերը շատ մեծ է եղել մեր եկեղեցական, մշակութային կյանքում: Նա հանդիսացել է հավատի, ներշնչման ու գիտության աղբյուր: Վանքին կից եղել է համալսարան, որն ունեցել է 10 000-ից ավելի ձեռագրեր և թվով մի քանի հարյուրի հասնող ուսանողություն: Համալսարանը հիմնել է Հովհան Որոտնեցին 1345 թվականին, որը գործել է շուրջ 70 տարի:

Օրբելյանն այսպես է պատկերում վանքն ու համալսարանը. «Ջահաւորեալ իբրև զա-

բեզական ի մէջ աստեղաց՝ երեկի էր ի մէջ տմենայնի, ոչ միայն շինուածովք, այլ և պայծառանայր քահանայական և կրօնաւորական դասիւք ի չափ 500 եղբարց. լի էր և ծովամատոյց փիլիսոփայիւք երաժշտական երգոց, ճոխ էր և վարժարանն վարդապետական կրթութեամբն. նաև արհեստաւորօչ նկարչացն և գրողաց անհամեմատք»:

Տաթևը ժամանակակիցների կողմից կոչվել է «երկրորդ Աթէնք», «Յիսուսական համալսարան»:

Որոտնեցու մահից հետո, նրա գործը շարունակում և զարգացնում է Գրիգոր Տաթևացին, որն հանդիսանում է Տաթևյան դպրոցի փառքն ու պարծանքը: Նա շարունակելով հաստատ մնալ իր եռամեծ ուսուցչի դիրքի վրա, անգիշող գիրք գրավեց ունիտորների դեմ մղված մշակութային, եկեղեցական պայքարի մեջ և կարողացավ փրկել հայ եկեղեցին, մեր մշակույթն ու հավատը: Տաթևացին կարողացավ իր գործը շարունակել և բազմաթիվ զարգացած վարդապետներ հասցնել և իր հետնորդ սերունդներին թողեց հարուստ գրական ժառանգություն:

Ժամեր ենք անց կացնում այդ սրբությունների և սրբացած նշխարների հարևանությամբ մեջ, հաղորդվելով մեր եռամեծ վարդապետների անմահ հոգիների հետ:


Հինավուրց տաճարի մեջ հավաքված, աղոթում ենք: Թնդում են «Ուրախ լեր Ս. Եկեղեցի», «Աշակերտք Քրիստոսի», «Որք զարդարեցին» շարականները: Տեսուչ հայ սուրբը «Հոգւոց» է արտասանում մեր եռամեծ, տիեզերալույս վարդապետների խնկելի հիշատակին:

Երեկո է արդեն, օրը տարածամում է: Դժվարությամբ բաժանվում ենք Տաթևի սրբություններից և վերջին անգամ մեր հարգանքի, սիրո, երախտագիտության համբույրը դրոշմում սրբատաշ քարերին, տաճարի խորաններին ու պատերին և վերադառնում Գորիս:

Հոգևոր ճեմարանի ուսանողության համար, Տաթևյան ուխտագնացությունը հանդիսացավ մեծագույն զասը, կրկնակի նվիրական, ոգեշունչ ու ապրեցնող:

Հունիսի 15-ին, ուրբաթ օր, չորս օրվա շրջապտույտից հետո, ուսանողությունը վերադարձավ Մայր Աթոռ քաղցր ու անջինջ տպավորություններով:

ԳՐԻԳՈՐ ՍԱՐԿԻՍՅԱՆԻ ԲՈՒՆԻԱԹՅԱՆ





## Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Ք

Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Վաղգեն Ա Վեհափառ Հայրապետի նախագահութեան տակ հունիսի 28-ին, երեքշաբթի օր, երեկոյան ժամը 6-ին, Վեհարանում գումարվեց Գերագույն Հոգևոր հորհրդի հերթական նիստը:

Ժողովին մասնակցում էր նաև վերջերս Մայր Աթոռ ժամանած Հնդկաստանի և Հեռավոր Արևելքի Հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը՝ որպես անգամ Գերագույն Հոգևոր հորհրդի:

Վեհափառ Հայրապետը հանուն Գերագույն Հոգևոր հորհրդի ջերմորեն ողջունեց Հայկազուն սրբազանի ներկայութիւնը ժողովում:

Այնուհետև Հայրապետական պատվիրակը ամփոփ կերպով ժողովին ներկայացրեց Հնդկաստանում և Հեռավոր Արևելքում շուրջ երկամյա իր գործունեության ղեկուցագիրը, որն արժանացավ բարձր գնահատութեան Վեհափառ Հայրապետի և Գերագույն Հոգևոր հորհրդի կողմից:

Վեհափառ Հայրապետը Գերագույն Հոգևոր հորհրդի սույն նիստում հայտնեց իր ցան-

կութիւնը և որոշումը գերաշնորհ Հայկազուն արքեպիսկոպոսին հրավիրելու մշտական աշխատանքի Ս. էջմիածնում՝ կոչելով նրան Գերագույն Հոգևոր հորհրդի ատենապետի և Մայր Տաճարի լուսարարապետի բարձր պաշտոններին, միաժամանակ պահելով նրա Հնդկաստանի և Հեռավոր Արևելքի Հայրապետական պատվիրակի հանգամանքը և պաշտոնը, որը գերաշնորհ սրբազանը կկատարի պարբերական այցելութիւններով:

Վեհափառ Հայրապետը հայտնեց նաև իր որոշումը Մայր Աթոռում հաստատելու կարելի էր և պատասխանատու մի պաշտոն՝ Ս. էջմիածնի գանձատան տեսչի: Գանձատան տեսուչ նշանակվեց գերաշնորհ Տ. Հուսիկ եպիսկոպոս Սանթուրյանը:

Գերագույն Հոգևոր հորհրդի անդամները խանդավառ ուրախութեամբ ողջունեցին Վեհափառ Հայրապետի սույն որոշումները և շնորհավորեցին գերաշնորհ սրբազան հայրերի նոր պաշտոնները:







## Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ Ո Ւ Մ

Հունիսի 5-ին, կիրակի, Առաջին կիրակի ղկնի հոգեգալստեան: Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Հսկոր քահանա Հակոբյանը:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Երեկոյան ժամը 6-ին Մայր Տաճարում կատարվեց Ս. Հովհաննիսիանց տոնի նախատոնակը:

Հունիսի 6-ին, երկուշաբթի, «Տօն Սրբոց կուսանացն Հովհաննիսիանց». օրվա տոնի առթիվ հանգիստավոր Սուրբ պատարագ մատուցվեց Ս. Հովհաննիսիանց տաճարում: Պատարագեց և քարոզեց արժանապատիվ Տ. Նշան քահանա Բեյլերյանը «Անձինք նուիրեալ սիրոյն Քրիստոսի» բնաբանով:

Հունիսի 7-ին, երեքշաբթի, «Տօն Սրբոց կուսանացն Գայիանեանց». օրվա տոնի առթիվ Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը:

Հունիսի 9-ին, հինգշաբթի, «Տօն սրբոյն Յովհաննու Կարապետին և Աթանագինեայ եպիսկոպոսին»: Ս. Շողակաթի տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարուքյանը:

Հունիսի 10-ին, ուրբաթ, Այսօր, որպես ուխտավոր Մայր Աթոռ ժամանեց լիբանանահայ ծանոթ մտավորական Սիմոն Հովհովյանը:

Հունիսի 11-ին, շաբաթ, «Տօն Սրբոյն Գրիգորի Լուսաուորչին մերոյ ելն ի Վիրապէն»: Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Գևորգ վարդապետ Սարայդար-

յանը «Մեծահրաշ այս խորհուրդ աւանդութեամբ առ մեզ հասնալ» բնաբանով:

Հունիսի 12-ին, կիրակի, երկրորդ կիրակի ղկնի հոգեգալստեան. «Տօն կաթողիկէ Ս. Էջմիածնի»: Մայր Տաճարում մատուցվեց եպիսկոպոսական հանդիսավոր պատարագ: Պատարագեց և քարոզեց գերաշնորհ Տ. Հուսիկ եպիսկոպոս Սանթրոյանը «Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ քանզի ի սմա, ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի» բնաբանով:

Հավարտ Սուրբ պատարագի կատարվեց Հայրապետական մաղթանք Վեհափառ Հայրապետի հանդիսադրութեամբ՝ Ս. Իշման Սեղանի առաջ:

Մայր Աթոռի տոնի առթիվ Վեհափառ Հայրապետը բարեհաճեց Վեհարանում ժամը 4-ին Իրեն սեղանակից դարձնել Մայր Աթոռի միաբանության, Գերագույն Հոգևոր Խորհրդի, վերստուգիչ հանձնաժողովի անդամներին և Հոգևոր Ծննդաբանի դասախոսներին:

Հունիսի 13-ին, երկուշաբթի, Այսօր որպես ուխտավոր Մայր Աթոռ ժամանեց լոնդոնահայ ծանոթ ազգայիններից էդ. Պեննեյան: Հարգելի հյուրը իր ուխտը Մայր Տաճարում կատարելուց հետո ընդունվեց Վեհափառ Հայրապետի կողմից:

էդ. Պեննեյանը Մայր Աթոռից մեկնեց լավագույն տպավորութիւններով հունիսի 19-ին, կիրակի օրը:

Հունիսի 18-ին, շաբաթ, Երեկոյան Մայր Աթոռ ժամանեց Հնդկաստանի և Հնուվոր Արևելքի Հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը:

Երևանի օդանավակայանում հանուն Վեհափառ Հայրապետի Հայկազուն Սրբազանին



դիմավորեցին գերաշնորհ Տ. Հուսիկ եպիսկոպոս Սանթուրյանը, հոգեշնորհ Տ. Նարեկ և Տ. Գևորգ վարդապետները: Հաջորդ օրը, կիրակի Ս. պատարագից հետո, ի պատիվ Հայկազուն Սրբազանի Վեհաբանում կազմակերպվել էր, ժամը 4-ին, բարի գալստյան ընդունելություն, որի ընթացքում Վեհափառ Հայրապետը հայրական ջերմ սիրով և ուրախությամբ ողջունեց Հնդկաստանի և Հեռավոր Արևելքի Հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսի ժամանումը Մայր Աթոռ:

Սրբազանին բարի գալուստ մաղթեցին նաև գերաշնորհ Տ. Հուսիկ եպիսկոպոսը՝ հանուն Մայր Աթոռի միաբանության, ճարտարապետ Միքայել Մազմանյանը՝ հանուն Գերագույն Հոգևոր Խորհրդի, հոգեշնորհ Տ. Ներսես Ս. վարդապետ Պողոպալյանը՝ հանուն Հոգևոր Ծեմարանի դասախոսական կազմի և ուսանողության, դիվանապետ Հայկ Առաքելյանը՝ հանուն Մայր Աթոռի պաշտոնեականության: Վերջում երախտագիտության և շնորհակալության ջերմ խոսք ասաց գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսը:



Հունիսի 19-ին, կիրակի, երրորդ կիրակի դեպի հոգեգալստյան. Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանը:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:



Հունիսի 20-ին, երկուշաբթի, Այսօր, առավոտյան Մոսկվա մեկնեց Վեհափառ Հայրապետը, մասնակցելու համար Մոսկվայում խաղաղության պաշտպանության սովետական կոմիտեի նիստին:

Վեհափառ Հայրապետին ընկերակցում էին գավազանակիր հոգեշնորհ Տ. Արսեն վարդապետ Բերբերյանը և դիվանապետ Հայկ Առաքելյանը: Երևանի օդանավակայանում Վեհափառ Հայրապետին ճանապարհեցին Մայր Աթոռի միաբանությունը և պաշտոնեականները:

Ամսի 22-ին, չորեքշաբթի օր, Մոսկվայում գումարվեց խաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեի նիստը, որը քննության առավ փերչերս Ժնևում գումարված խաղաղության պաշտպանության համաշխարհային խորհրդի կողմից ընդունված բանաձևերն ու որոշումները: Նիստում լսվեցին մի շարք կարևոր զեկուցումներ, ամբողջ աշխարհում խաղաղության պաշտպանության հարցերի նվիրված: Մոսկվայում գումարված խաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեն իր լիակատար համաձայնությունն հայտնեց Ժնևում ընդունված խաղաղության պաշտպանության համաշխարհային կոմիտեի բանաձևերին և որոշումներին:

Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռ վերադարձավ ամսի 25-ին, շաբաթ օր:



Հունիսի 26-ին, կիրակի, չորրորդ կիրակի դեպի հոգեգալստյան. Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Գրիգոր վարդապետ Եղիայանը «Գրիգորիոս սին լուսոյ Հայաստանեայց Եկեղեցւոյ» շնարհով:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:



Հունիսի 30-ին, հինգշաբթի, «Տօն Սրբոց Թարգմանչացն մերոց Սահակայ և Մեսրոպայ»: Ազգային և եկեղեցական մեծ տոնի առիթով չորեքշաբթի, երեկոյան ժամը 7-ին Մայր Տաճարում կատարվեց նախատոնակ: Հինգշաբթի առավոտյան, ժամը 11-ին միաբանությունը ուխտի գնաց Օշական, ուր պաշտվեց օրվա հանդիսավոր Սուրբ պատարագը. պատարագեց և քարոզեց Արարատյան թեմի փոխանորդ գեր. Տ. Վահան եպիսկոպոս Տերյանը «Որք զարդարեցին տնօրինաբար» բնաբանով:

Հավարտ Սուրբ պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն հայ մշակույթի հին և նոր բոլոր վաստակավորների հիշատակին:







## ՂԱԼԱԹԻԱԿ (ՍՏԱՄԲՈՒԼ) ՀԱՅՈՑ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՆՈՐԱԿԵՐՏ ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱՅՈՒՄԸ

Մայիսի 15-ին, կիրակի օր, հանդիսավոր ու խանդավառ իրադրության մեջ, կատարվել է Ղալաթիայի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ նորակերտ եկեղեցու պաշտոնական բացումը:

Եկեղեցու նավակատիքն ու օծումը կատարվել էին անցյալ տարի օգոստոսին:

Հանդիսությանը նախագահել է Թուրքիայի հայոց ամենապատիվ Տ. Շնորհք սրբազան պատրիարքը, շրջապատված եկեղեցական և աշխարհական պաշտոնական անձնավորություններով:

Առավոտյան ժամը 10-ին, սրբազան պատրիարքն առաջնորդվել է եկեղեցի թափորով, «որուն պաշտոնապես և հանդիսավորապես դուռները կբացվեն, մոտավորապես վեց հարյուր տարվան պատմական ու փառավոր անցյալ մը ունեցող Հայ Առաքելական Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցվուն, ի հիմանք գեղեցկորեն վերակառուցված այս տաճարին», — գրում է ականատես թղթակիցը:

Օրվա հանդիսավոր սուրբ պատարագը մատուցում է սրբազան պատրիարք հայրը:

Տաճարի աշակողմյան և ձախակողմյան դասերում տեղ են գրավել քույր եկեղեցիների և այլ դավանությանը հոգևոր պետեր, աղային-եկեղեցական մարմինների պաշտոնական ներկայացուցիչներ, հայ վարժարանների տեսուչներ, եկեղեցական հոգաբարձությանը և թաղական հոգաբարձու-

թյանց անդամներ, երգչախմբերի, դպրաց դասի և բարենպաստ հաստատությանը ներկայացուցիչներ:

Հանդիսության անձամբ ներկա է Կոստանդնուպոլսի Հունաց Տիեզերական Պատրիարք Նորին Սրբություն Աթենագորասը իր շքախմբով:

Նորակերտ տաճարը լիքն է նաև հավատացյալների խուռնեցի բաղմունքով:

Սուրբ պատարագի Կոմիտասյան քառաձայն երգեցողությունը դաշնորեն կատարում է իր անվան արժանի «Կոմիտաս» երգչախումբը, ղեկավարությամբ Կարո Արմանի:

«Հայր մեր»-ի ժամանակ սրբազան պատրիարքը քարոզում է, տալով իր պատգամը և շնչտելով հայ հավատացյալ ժողովրդի եկեղեցաշինության ոգին և հուսկ ուրեմն շնորհակալություն է հայտնում հանդիսությանը ներկա հոգևոր պետերին, պաշտոնական մարմիններին և անձնավորությանը, որոնք եկել էին բաժանելու Հայ Եկեղեցու այսօրվա ուրախությունը և իրենց աղոթքները միացնելու հայ հավատացյալների աղոթքներին:

Այնուհետև, սրբազան պատրիարք հոր փափագի վրա, Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու խնամակալության ատենապետ դուկտ. Գ. Գևորգյանը թուրքերեն լեզվով ներկայացնում է եկեղեցու պատմականը, սկզբից մինչև մեր օրերը:



Հավարտ սուրբ պատարագի, սրբազան պատրիարք հոր նախագահության, տեղի է ունենում հոգեհանգստյան հատուկ պաշտոն եկեղեցու հին և նոր նվիրատու բոլոր ննջեցյալների հոգու խաղաղության համար:

Եկեղեցական արարողությանց ավարտին, սրբազան պատրիարք հայրը, բոլոր ներկա հոգևոր պետերն ու հյուրերը, եկեղեցական թափորով, առաջնորդվում են խորհրդարան, ուր հայոց պատրիարքը, օրվա մեծ հանդիսությանց առիթով, շնորհավորություններ է ընդունում:

Հյուրասիրությունից հետո, պատրիարք սրբազանի առաջնորդությամբ, բոլոր հյուրերը կրկին անգամ իջնում են Մայր Եկեղեցի, հանգանորեն ծանոթանալու համար տաճարի ճարտարապետական կառույցին և մանրամասնությանց:

Նորակերտ եկեղեցին դիտելուց հետո, նորին Սրբություն Աթենագորաս պատրիարքն ասում է. «Այն կմարմնավորե հազարավոր տարիներու հայ ճարտարապետության և եկեղեցական շինարարության ոճը: Մասնավորաբար կշնորհավորեմ ճարտարապետը այս գեղեցիկ շինության համար»:

Ավելի ուշ, Ղայաթիայի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու և կենտրոնական լիցեյի խնամակալությունը, ի պատիվ հյուրերի և պաշտոնական անձանց, կազմակերպում է սիրո սեղան «Պարկ» հյուրանոցում, սրբազան պատրիարք հոր նախագահությամբ: Սեղանն Օրհնում է պատրիարք հայրը. այն վարում է Կարպիս Մուրադյանը: Դոկտ. Ն. Տիլսիզյանը, հանուն հայոց պատրիարքի և հայ համայնքի, շնորհակալություն է հայտնում պետական ավագանուն, նրա ցույց տված ազնվության և բարյացակամության համար, շեշտելով միաժամանակ, որ հայ եկեղեցու շինությամբ և ապա հանդիսության

առթիվ կվայելեն նաև երկրին գեղեցիկ գործ մը պարգևելու հրճվանքը»:

Այնուհետև եկեղեցու խնամակալության ատենապետ Գրիգոր Սարաֆյանը կարդում է Տաճարի շինության ընդհանուր տեղեկագիրը: Ելույթ է ունենում նաև դոկտ. Գ. Գևորգյանը: Հանդիսության գեղարվեստական բաժնին իրենց մասնակցությունն են բերում Ստամբուլի հայերից սիրված դեմքեր մեններգերով, արտասանություններով:

Հանդիսությունը փակվում է սրբազան պատրիարք հոր շնորհակալության և օրհնության խոսքով:

«Պարտք կզգամք,— ասում է սրբազանը,— մասնավորաբար շնորհավորելու Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցվո նախադասվածը՝ Պետրոս Առաքյալը, այս սպասիչ և լուրջ աշխատության համար, որուն պատրաստած հատակագիծը էջմիածնի ճարտարապետական ժողովին կողմն ալ գովեստով գնահատվեցավ. այս տաճարին, այս կոթողին համար մեք օրհնության գիրք կուտանք իրենք»:

Ներկաների երկարատև և սրտագին ծուփերի մեջ ճարտարապետ Պետրոս Առաքյալը սրբազան պատրիարք հոր ձեռքից ստանում է օրհնության դիրք:

Այնուհետև սրբազան պատրիարք հայրը շնորհակալությամբ և օրհնությամբ հիշատակում է անունները տիկին Պայծառ Փանոսյանի, խնամակալության նախկին ատենապետ Կարապետ Ղազարյանի՝ նրանց մեծագումար նվիրատվության համար, ինչպես նաև անձնվեր աշխատանքները դոկտ. Գ. Գևորգյանի, էրմուշ Թրփանճյանի, Գալուստ Օգգաճյանի, Ստեփան Սեդրոսյանի և ամբողջ հայ հավատացյալ համայնքի:

Հանդիսությունը փակվում է սրբազան պատրիարք հոր աղոթքով և «Պահպանիչ»-ով:







70A-7098

## ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋԵՆՈՐԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

1966 թվականի մայիսի 7-ին Սան Ֆրանցիսկոյում, Ս. Հովհաննես հայոց եկեղեցում գումարվել է Հյուսիսային Ամերիկայի Հայոց Արևմտյան թեմի պատգամավորական ժողովը, մասնակցությամբ 53 հոգևորական և աշխարհական պատգամավորների և մեծ թվով ունկնդիրների:

Նիստի սկզբին ներկաները հոտրեկայս և ակնածալիւր հարգանքով ունկնդրեցին Ամենայն Հայոց Հայրապետի ողջույնի գիրը ուղարկված պատգամավորական ժողովի բացման առթիվ:

Ժողովի օրակարգի գլխավոր հարցը Թեմական առաջնորդի ընտրությունն էր:

Թեմական խորհրդի ներկայացրած եռանուն ցանկի վրա, որպես թեկնածու, կային հետևյալ անունները.

Տ. Ծղիշե եպիսկոպոս Սիմոնյան

Տ. Հմայակ ծ. վարդապետ Ինթոյան

Տ. Վաչե վարդապետ Հովսեփյան:

Պատգամավորական ժողովը գաղտնի քվեարկությամբ Արևմտյան թեմի առաջնորդ ընտրեց, 47 քվեներով, գերաշնորհ Տ. Ծղիշե եպիսկոպոս Սիմոնյանին:

Պատգամավորական ժողովի դիվանի կողմից ընտրության արդյունքը պաշտոնապես հաղորդվում է Մայր Աթոռ:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Իր 7 հունիս սրբատառ կոնդակով հաստատում է ընտրությունը:





## ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ՍՌՆՋՆՈՐԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Ապրիլի 29—30 օրերին Նյու Ճըրզի քաղաքի Ս. Թովմաս հայոց եկեղեցում գումարվել է Հյուսիսային Ամերիկայի Արևելյան թեմի 64-րդ տարեկան պատգամավորական ժողովը:

Թեմական պատգամավորական ժողովը իր վերջին նիստում, ապրիլի 30-ին, ղեկավարել է առաջնորդական ընտրության հարցով:

Ժողովին մասնակցել են 124 հոգևորական և աշխարհական պատգամավորներ:

Առաջնորդական ընտրության եռանուն ցանկի վրա եղել են հետևյալ թեկնածուների անունները.

Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյան

Տ. Թորգոմ եպիսկոպոս Մանուկյան

Տ. Մյուռոն ծ. վարդապետ Կրճիկյան:

Պատգամավորական ժողովի գաղտնի քվեարկությամբ Արևելյան թեմի առաջնորդ է ընտրվում գերաշնորհ Տ. Թորգոմ եպիսկոպոս Մանուկյանը՝ 64 քվեով:

Պատգամավորական ժողովի դիվանի կողմից առաջնորդական ընտրության արդյունքը պաշտոնապես հաղորդվում է Վեհափառ Հայրապետին:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը իր 2 հունիս սրբատառ կոնդակով հաստատում է ընտրությունը:







## Ս Փ Յ Ո Ւ Ռ Գ Ո Ւ Մ

### ՀՅՈՒՄԻՍԱՑԻՆ ԱՄԵՐԻԿԱՑԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

1966-ի ապրիլի 27—28 օրերին Թեննիսայքադաքի Ս. Թովմաս եկեղեցում տեղի ունեցավ Հյուսիսային Ամերիկայի Արևելյան թեմի հոգևորականների տարեկան համագումարը, նախագահությամբ՝ առաջնորդ գեր. Տ. Սիոն արք. Մանուկյանի, Համագումարի ատենապետ էր ընտրվել հոգ. Տ. Եղիշե Ժ. Վրգ. Կիդիրյանը և ատենադպիր արժ. Տ. Բաբկեն ա. քհն. Մագսուտյանը:

Համագումարին ներկա էին շուրջ 40 եկեղեցականներ:

«Հայր մեր»-ից և «Իմաստութիւն հօր Յիսուս» աղոթքից հետո առաջնորդ սրբազանը ժողովը բացեց ողջույնի ջերմ խոսքերով:

Այա ժողովի ատենապետը կարգաց Ամենայն Հայոց Հայրապետի, ապրիլ 15 թվակիր, հետևյալ ողջույնի և օրհնության գիրը՝ ուղղված համագումարին, որն ունկնդրվեց հոտնկայս:

«Այսօր, երբ մեր եկեղեցին կգտնվի Քրիստոսի Սուրբ Հարության շնորհներում և Երթալ, Մենք՝ Ձեր Հայրապետը, Սուրբ Էջմիածնեն Աստուծո օրհնությունը կքերենք Ձեր թեմի եկեղեցիներում և ի մասնավորի Ձեզի՝ քրիստոսասեր սպասավորներ, որ ի մի հավաքված եք Ձեր բարեջան սրբազան առաջնորդի շուրջ, միասին աղոթելու և միասին մտածելու ապագա Ձեր աշխատանքներու մասին, հատավել շինություն Ձեր և Ձեր ժողովուրդի հոգևոր կյանքին:

Թող Աստված հաստատ և միշտ շեն պահե Ձեր թեմը իր համայնքներով, և միշտ ամբողջ ու անխոռվ պահպանե Ձեր Հոգևոր Եղբայրությունը ի փառս Հայաստանայց Ս. Եկեղեցվո՝ աստվածասեր Ձեր մեծ երկրին՝ Միացյալ Նահանգաց մեջ:

Ձեզի բոլորիդ, սիրելիներ և հարազատներ Մեր, լիառատ օրհնություն երկնային և անսպառ բարի եռանդ՝ Ձեր նվիրական առաքելության լուսափայլ ճամբում վրա:

«Բանգի ո՞վ է մեր յոյս՝ կամ խնդրություն կամ պսակ պարծանաց մերոց, եթե ոչ դուք ի Տէր՝ առաջի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի Նորա գալստյան: Զի դուք էք փառք մեր և խնդրություն»: (Ա. Թեա. 19—20):

Հայրապետական կոնդակի ընթերցումից հետո համագումարը որդիական սիրո և երախտագիտության հետևյալ հեռագիրը հղեց առաջնորդ գեր. Տ. Սիոն արք.-ի ստորագրությամբ Վեհափառ Հայրապետին:

Վեհափառ Տե՛ր,

«Մեր թեմի հոգևորականաց տարեկան համագումարը ակնածանքով ունկնդրեց Ձեր Սրբության ողջույնի և Հայրապետական օրհնության գիրը, որով բարեհաճած էիք օրհնել մեր համագումարը: Ամերիկահայ թեմի մեր հոգևոր պաշտոնակիցները այսու մեղի հետ կուգան Ձեր Սրբության մատուցանելու իրենց որդիական հարգալից սիրո արտահայտությունը և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հավա-

տարմության ուխտը՝ միասին աշխատելու Ամերիկահայ թեմի և Աստուծո փառքին համար»:

Այնուհետև Համագումարը իր հաջորդական երեք նիստերի ընթացքում անցավ օրակարգի հետևյալ հարցերի քննարկմանը:

ա. Տոնացույցը նոր սերնդին մատչելի դարձնելու հարց (զեկուցողներ արժ. Տ. Առնակ քհն. Գասպարյան և արժ. Տ. Տաճատ քհն. Դավթյան):

բ. Հոգևորականության կենցաղագիտության հարց (զեկուցող՝ արժ. Տ. Արտեմ քհն. Աշճյան):

գ. Քարոզի բովանդակությունն ու պատրաստությունը, արվեստն ու տեխնիկան (դասախոսություններ՝ արժ. Տ. Տաճատ քհն. Դավթյան և հոգ. Տ. Գարեգին ժ. վրդ. Գաղանճյան):

Օրակարգի հարցերի ու դասախոսությունների շուրջ տեղի ունեցան համագումարի պատգամավորների միջև մտքերի աշխույժ և հետաքրքիր փոխանակություններ:

Օրակարգից դուրս քննության առնվեցին նաև բույր եկեղեցիների հետ հայ հավատացյալների հարաբերության, քահանաների կյանքի ապահովագրության և թեմական կանոնադրության մեջ բարեփոխություններ մտցնելու հարցերն ու առաջարկները:

Հյուսիսային Ամերիկայի Հայոց առաջնորդական վիճակի հոգևորականների տարեկան համագումարը իր աշխատանքներն ավարտեց հինգշաբթի օր, ապրիլի 28-ին երեկոյան ժամը 6-ին, խմբովին երգված տերունական աղոթքով և Առաջնորդ Սրբազանի «պահպանիչով»:







## ՄԵՂԱԴՐԵԼԻ ԶԱՆՑԱՌՈՒԹՅՈՒՆ ՄԸ\*

Անոնք, որ պատահություններ ունեցան կարգալու Կիլիկիոյ Տ. հորին Ա Կաթողիկոսի այս կոնդակը, որ հանված էր հայերեն Աստվածաշունչի տպագրության 300-ամյակին առթիվ, հավանաբար շնչմարեցին, կամ քիչեր թերևս նկատեցին ծանր զանցառություն մը, որ գործված էր այդ կոնդակին մեջ:

Հայերեն Աստվածաշունչի առաջին տպագրության կոթողական գործը, իբրև հղացում և իբրև գործադրություն, վերագրված էր Ոսկան վարդապետին, պաշտոնական այդ գրության մեջ: Արդարև, տարակույսն վեր են Ոսկան վարդապետի գերմարդկային ճիգերը այս ձեռնարկին հաջողությամբ պսակվելուն մեջ: Հետևաբար ամեն ոք սիրով պիտի ձայնակցեր այդ կոնդակի մեջ Ոսկան վարդապետի անվան և գործին շուրջ հյուսված գովասանական տողերուն, ըսելով իր կարգին. «Արժան և իրաւ»: Սակայն չէինք կրնար ակնկալել, որ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցիի նվիրապետական Աթոռներեն մեկու մը Գահակալին պաշտոնական մեկ դրության մեջ բոլորովին անտեսվեր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կատարած կարևոր դերը Աստվածաշունչի առաջին տպագրության տաժանագին գործին մեջ: Վասնզի բացահայտ և կարևոր պատմական իրողություն է, որ տպագրական այս գործին նախաձեռնողը,

գործնականապես զայն հետապնդողը և Ոսկան վարդապետը այս նպատակով Եվրոպա ղրկողը օրվան Ամենայն Հայոց Հայրապետ Հակոբ Զուղայեցի Կաթողիկոսը եղած է, որուն անունն անգամ չէ հիշված այդ կոնդակին մեջ:

Որպեսզի պայծառ դարձնենք Հակոբ Զուղայեցի Կաթողիկոսի դերը այս մարզին մեջ, հառաջ բերենք Հայաստանյայց Եկեղեցվո պատմության մեծ հեղինակություն Օրմանյան պատրիարքի այս մասին ավանգածներեն բանի մը տողեր, քաղելով զանոնք իր «Ազգապատում» պատմական գործին: Օրմանյան անդրադառնալով Զուղայեցի Կաթողիկոսի հայերեն Աստվածաշունչը տպագրելու աշխատանքներուն, կուտա հետևյալ տեղեկությունները. «Հիշենք ևս Հակոբ Կաթողիկոսի հայկական տպագրության համար ունեցած հոգածությունը...: Հակոբ Կաթողիկոս հետամուտ էր [տպագրության] արհեստը աղղային կեդրոնին մեջ զարգացնել: Այդ նպատակով, յուր կաթողիկոսության սկիզբը Եվրոպա ուղարկեց Մատթեոս Ծարեցի սարկավագը, որ... 1658-ին գնաց Հոլանդիո մայրաքաղաք ... Ամստերդամ...: Բայց գործը չավարտած, 1661-ին կմեռնի Ծարեցին»: Սկսված գործը կշարունակեն Ավետիս Ղրլըջենց Երևանցի վաճառականը և Կարապետ Անգրիանցի վարդապետը, «որ էջմիածնեն ղրկված էր Ծարեցիին մահեն հետը: Ավետիս յուր եղբայրը՝ Ոսկան Երևանցի վարդապետը խնդրած էր [Հակոբ] Կաթողիկոսեն գործին զուլի կանգնելու համար»: Ասյա կեդրականցն Օրմանյան. «Այդ ամեն աշխատությանց հովանավորող և ոգևորությունները միշտ Հակոբ Կաթողիկոսն էր, որուն զխավոր նպատակներեն մին ալ տպագրված Աստվածաշունչ մը ունենալն էր՝ Սուրբ Կիրք տարածելու համար» («Ազգապատում», Բ, էջ 2510):

\* Ստամբուլի «Մարմարա» օրաթերթի 1966 թվականի մայիսի 13, 14, 15 համարներում հրատարակվել է «Մեղադրելի զանցառություն մը» վերնագրով խորհրդածությունների մի շարք «Վերծանող» ստորագրությամբ: Հոգվածադիրը, երևում է, որ հեղինակավոր մի անձնավորություն է, քաջածանոթ մեր եկեղեցական պատմության, մատենագրության և Անթիլիասի տաղնապի ներքին ժալքերին: «Էջմիածին» ամսագրում արտատպում ենք խորհրդածությունների այս շարքը՝ իր շահեկանության և այժմեականության համար:— Խմբագրություն «Էջմիածին» ամսագրի:



Երբ այս է պատմական իրականությունը, անդին Անթիլիասի Կաթողիկոսարանի կոնդակին մեջ ոչ միայն անունն անգամ չէր հիշված Հակոբ Կաթողիկոսին, այլ նաև Ամենայն Հայոց Հայրապետի պատմական դերն ալ, տպագրական այս գործին մեջ, վերագրված էր Երևանցիին սա տողերով. «Ոսկան վարդապետ... հոգևոր և մտավոր լուսի ծարավ (այսպես) և աղգային նախանձախնդրությամբ վառված Աստուծո այս ծառան, Ս. էջմիածնեն ուղևորեցավ (չըսվիր ուղարկվեցավ—Վ.) դեպի Եվրոպա, տպագրելու համար Աստվածաշունչ մատոյանը, զայն իր ժողովուրդին մեջ տարածելու հստակ և վճռական առաջադրությամբ»:

Հասկնալի է, որ կոնդակն մը չենք ակնկալեր, նման պարագաներուն, պատմությունը ներկայացնել իր բոլոր մանրամասնությամբ մեջ. սակայն մյուս կողմեն ներելի չէ անտեսել, մանավանդ կոնդակի մը մեջ, նման պարագաներուն, պատմության հիմքը և ջիղը կազմող իրականությունները, մասնավորաբար, երբ խնդրո առարկա իրականությունները կապ ունեն Եկեղեցիի մը պետին անձին և գործունեության հետ:

Զափերը և համեմատությունները պահելով Աստվածաշունչի առաջին տպագրության գործին մեջ, Հակոբ Կաթողիկոսի և Ոսկան վարդապետի գործակցությունը համանման է Ս. Սահակ Հայրապետի և Ս. Մեսրոպ վարդապետի գործակցության: Ի՞նչ պիտի խորհեին Անթիլիասի կոնդակին հեղինակները, եթե, անկարելի ենթադրությամբ մը, ասկե շուրջ 30 տարիներ առաջ, այդ օրվան Ամենայն Հայոց Տ. Խորեն Կաթողիկոս (Մուրազբեգյանց) իր հանած կոնդակին մեջ, Աստվածաշունչի թարգմանության ամբողջ գործը վերագրեր Ս. Մեսրոպի և անունն անգամ հիշած չըլլար Ս. Սահակի: Միջոց չափերը և համեմատությունները պահելով, իրականին մեջ այս է պատահածը Մեծի Տանն Կիլիկիո Տ. Խորեն Կաթողիկոսի կոնդակին մեջ, ուր Աստվածաշունչի առաջին տպագրության սրբազան գործը ամբողջությամբ Ոսկան վարդապետին ընծայված է, և հիշատակությունն անգամ չէ եղած այս նպատակի համար զայն ղրկող մեծավորին:

Արդ, ինչի՞ վերագրել այս պոռագող լուծությունը, որ պահված է Ս. էջմիածնի Գահակալին նկատմամբ. պատահական մոռացումի՞, կամ պատմական տվյալներու անգիտությամբ...: Ոչ միույն, և ոչ ալ մյուսին: Անթիլիաս ունի համալսարան տեսած վարդապետներ և եպիսկոպոսներ, որոնք պիտի շարտենեին նման մոռացում կամ անգիտություն: Ավելորդ է մխրճվիլ բավիղներու մեջ ևս ի՞նչ ենթադրություններու, որոնք կրնային

վիճելի ըլլալ: Սակայն մեկ ենթադրություն կկարծենք որ անվիճելի պիտի մնար. եթե Ոսկան վարդապետը հովանավորողը և Աստվածաշունչի տպագրության համար զայն առաջողը Կիլիկիո Կաթողիկոս մը եղած ըլլար, հիշատակության և գովասանքի առյուծի բաժինը Կաթողիկոսը պիտի ստանար: Ուրեմն Հակոբ Կաթողիկոսի միակ հանցանքը, այս անտեսումին արժանանալու համար, եղած է Ս. էջմիածնի Աթոռին Գահակալ մը ըլլալ...: Անցնող 10 տարիներու ընթացքին Անթիլիասի բռնած դիրքը հանդեպ Մայր Աթոռ Ս. էջմիածնի, իր ծանոթ ելույթները և առհասարակ դրսևորված ոգին բացահայտ ապացույցներ են մեր վերոհիշյալ հավաստումին:

Մեր սրտերը հաճախ հեգնանքով, երբեմն ալ վրդովմունքով կհամակվին, երբ օտարներ կամ Հայ Եկեղեցվո ամբողջութենեն անջատվածներ հայ պատմությունը «մշակումի կենթարկեն», այսինքն կաճեցնեն ու կծաղկեցնեն իրենց հաշվույն եկած պատմական պարագաները, իսկ կկտրատեն կամ կխեղաթյուրեն և կամ բոլորովին մոռացության կուտան իրենց ձգտումներուն հակասող կետերը: Անթիլիաս կմիտի ժառանգորդը դառնալ այս արդեն իսկ լքված մեթոդին և ի վերջո նպատակին չծառայող ճիգին: Կրտսմի ենթարկված խոսք մըն է, օրինակ, կոնդակին մեջ հետևյալը. Ոսկան վարդապետ «Ս. էջմիածնեն ուղևորեցավ դեպի Եվրոպա»: Այս հավաստումը իրավ է, թե բացի բաց չի հակասեր պատմության, բայց երկաթյա վարագույրի ետին կծածկե Ս. էջմիածնեն զինք ղրկողը, և Մայր Աթոռի դերը:

Արդ, պատմությունը բացահայտորեն կհաստատեն, որ «Երբ Հակոբ Կաթողիկոս եպիսկոպոսական ձեռնադրություն աւելավ արևմուտք ուղևորեց (այսինքն ուղարկեց), Աստվածաշունչի տպագրությունը [իր] գլխավոր նպատակն էր» («Աղգապատում», Բ, էջ 2539, ընդգծումը մերն է—Վ.): Երբ այս է պատմական իրողությունը, չէ՞ր արժեք արդյոք օրհնության և երախտիքի գեթ խոսք մըն ալ կրթանվեր այս Հայրապետի հիշատակին ըսել: Հայրապետ մը, որ պատմության մեջ ձգած է գործունյա, ժողովրդանվեր և նախանձախնդիր հոգևորականի անուն: Անձնդիր հովիվ մը, որ իր հոտի բարիքի՞ համար ավելի քան ութսունամյա տարիքին ձեռնարկած ճամբորդութենն մը հետո իր աչքերը փակեց իր Աթոռեն հեռու, այս հայաշատ քաղաքի մեջ, ուր իր գերեզմանը ցայսօր կպատվվի, ոչ միայն մերիններեն, այլ մինչև իսկ օտարներեն, իբրև սրբակյաց և հրաշագործ «Հոգևոր Տէր» և Աստուծո մարդը:



Եթե մինչև իսկ իր նախաձեռնությունները տպագրված առաջին հայ Աստվածաշունչի երեքհարյուրամյակի տոնակատարությունը հրահանգող կոնդակի մը մեջ մոռացությունը տրված ըլլա իր անունը, այդ անունը սակայն անջնջելի կերպով կմնա առաջին էջին վրա այդ Աստվածաշունչին, «ճշմարտասէր» թարգմանիչներու կողքին: Վերարտադրենք այստեղ գեթ քանի մը տողերը այդ առաջին էջին, ի հիշատակ, ժողովրդային գնահատումով և համոզումով իսկ Եկեղեցւոյ սրբակյաց հայրապետներու դասին բարձրացած այս արժանավոր Կաթողիկոսին:

#### Ա Մ Ա Շ Ո Ւ Ն Չ

ՀՆՈՑ ԵՒ ՆՈՐՈՑ ԽՏԱԿԱՐԱՆԱՅ  
ՇԱՐԱԿԱՐԳՈՒԹԵԱՄԲ ՆԱԽՆԱՅՆ  
ՄԵՐՈՑ ԵՒ ԶԵՄԱՐՅԱՍԷՐ ԹԱՐԳՄԱՆՉԱՅ

... Հրամանաւ Վեհափառից Տեսուց Յակոբայ  
Հայոց Կաթողիկոսին...

Կտրգեալ...նուստի ումնմն Բանի Տեսուց  
սպասաւորի

Ոսկանի Երևանցւոյ

ՅԱՄՍՏԵՐԴԱՄ

Ներ տպարանում Սրբոյն էջմիածնի  
ի թուում Փրկչէն 1666

Կոնդակներ կրնան թաղվիլ մոռացության անդունդը: Առաջին տպագրչալ հայ Աստվածաշունչը, սակայն, հավերժորեն կոթողչալ պիտի մնա, իր առաջին էջովը, հայ մատենագրության գանձարանին մեջ, ի հիշատակ նաև պանծալի Հակոբ Կաթողիկոս Զուղայեցիի և իր քաջարի գործակցին՝ Ոսկան վարդապետին:

ՎԵՐԾԱՆՈՂ

Ստամբուլ

Ի Դ Ե Պ.— Առանց մտնելու մանրամասն լաբյուրինթոսի մեջ, այս առթիվ անցողակի կհարուցանենք սա կարևոր և հիմնական հարցը, թե երբ Ամենայն Հայոց Հայրապետը այսքան բովանդակալից կոնդակ մը հանած էր արդեն հայ Աստվածաշունչի տպագրության 300-ամյակը տոնախմբելու հրահանգով, կոնդակ մը, որ ուղղված էր նաև մեր նվիրապետական երեք Աթոռներու գահակալներուն, հանձնել, ինչ որ այլևս եկեղեցական ավանդություն դարձած է համալգային կամ համանկեղեցական բնույթ կրող հարցերու հրապարակումի և հրահանգումի պարագային, պետք կա՞ր այլևս. որ Կիլիկիո Կաթողիկոսն ալ նույն նպատակի համար նմանօրինակ կոնդակ մը հրապարակ դնե՞ր. կոնդակ մը, որ ոչ միայն ուղղված է իր իրավասության ներքև գտնվող հոգևորական

դասին և Յ տեսակ մեծ ու պղտիկ ժողովներու, այլ նաև՝ «Համօրէն հաւատացեալ ժողովրդեան մերոյ Հայկազնեան ցեղի որ ի սփիւռս աշխարհի»: Ներկա Կիլիկիո Կաթողիկոսին երջանկահիշատակ նախորդները, որչափ կհիշենք, նման կոնդակներ չէին հանած շատ ավելի մեծ և կարևոր երկու նախորթաց համալգային տոնակատարությունց առթիվ: Առաջինը՝ 1913-ին, հայ դրերու գլուխին 1500-ամյակին և հայ տպագրության 400-ամյակի միացալ տոնակատարության, իսկ երկրորդը՝ 1935-ին, Աստվածաշունչի հայերեն թարգմանության 150-ամյակին առնչությամբ:

Այդ ժամանակներու Կիլիկիո Կաթողիկոսները, Սահակ հապայան և Բաբեղն Կյուլեմեզյան, որոնք նվաղ գիտակից և նվաղ աղդասեր կամ եկեղեցասեր հայրապետներ չէին, ընդհակառակն, ուրույն կոնդակ չէին հանած, մինչև իսկ ուղղալ իրենց որույն հոտին, Ամենայն Հայոց Հայրապետի կոնդակը բալ համարելով ձեռնարկի համալգային նպատակին:

Ինչպես ըսինք, հիմնական հարց մըն է սա, որուն ծալքերուն մեջ մտնելը դժեղ շատ հեղուկները սիտի տաներ, և որուն մասին շատ սրտցալ ըսելիքներ պիտի ըլլային. սակայն կհրաժարինք առ այժմ այս մասին անգրադառնալ և ձեռք կառնենք ավելի երկրորդական հարց մը, գրեթե քերականական խնդիր մը, ըսելու համար համառոտիվ մեր տեսականները այդ մասին:

Մեծի Տանն Կիլիկիո Տ. Խորեն Կաթողիկոսի կոնդակին սկզբնավորության մեջ իր տիտղոսներու շարքին մեջ կա նաև հետևյալը. «ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ (շեղագրումը մերն է—Վ.) ՄԵՆԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ»: Կրնա ըլլալ, որ Տ. Խորեն Կաթողիկոս ինք չէ ստեղծած այս տիտղոսը, կրնա ըլլալ, որ այդ բանաձևին գործածությունը ունենա իր նախնի-թոցը: Ասոր քովն ի վեր, սակայն, կու նաև նախնի-թոց գործածությունը, Սսո հին Կաթողիկոսներու կոնդակներու մեջ, «Պատրիարք Տանն Կիլիկիոյ» կամ նման տիտղոսներու, զորս հրաժարած են գործածել Կիլիկիո վերջին Կաթողիկոսները, մեջն ըլլալով Տ. Խորեն Կաթողիկոս, եթե չենք սխալիր, Կիլիկիո վերջին Կաթողիկոսները, սկսալ Սահակ Կաթողիկոսեն, հրաժարած էին նաև Ամենայն Հայոց» հավելադրության գործածությունից, հավանաբար անդրադառնալով անոր անլըրջության և կամ ավելի բարեմիտ ենթադրություն մը ընելով՝ ի հարդանս Ամենայն Հայոց» տիտղոսին իսկական իրավատերին: Կիլիկիո վերջին Կաթողիկոսները, սկսալ Սահակ հապայանեն, առհասարակ կրսնին իրենց կոնդակներուն սկզբնավորության մեջ

ևս «Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ», որ պատշաճ և պատմական տիտղոսն է Հայաստանյայց եկեղեցւոյ այս մասնավոր Կաթողիկոսութեան:

Պահ մը մեկ կողմ ձգենք եկեղեցա-կանոնական տեսակետե՝ «Կաթողիկոս ԱՄՆՆԱՅՆ ՀԱՅՈՑ Մեծի Տանն Կիլիկիոյ» տիտղոսին գործածութեան ոչ-իրավական հանգամանքը, հարցը քերականորեն կամ տրամաբանորեն վեր առնված պարագային ևս չարդարանար: «Կաթողիկոս Ամենայն Հայոց» տիտղոսը կգործածվի առանց ուրիշ հավելվածական հատկացուցիչի: Սխալ է, ոչ միայն եկեղեցականոնական տեսակետե, այլ նաև տրամաբանորեն, ըսել, օրինակ, «Կաթողիկոս Ամենայն Հայոց Ս. Էջմիածնի», ոչ միայն սխալ, այլ նաև ծիծաղելի է, և ըսողին տգիտութունը միայն կարտահայտե, հոգ չէ, թե ով է այդ բանաձևը գործածողը: Երբ «Կաթողիկոս Ամենայն Հայոց» տիտղոսն հետո ուրիշ հատկացուցիչ մը ավելցվի, «Ամենայն Հայոց»-ը կամ առնվազն «Ամենայն»-ը կդառնա քերականորեն, այսինքն տրամաբանորեն, ավելորդ և անպետ: «Կաթողիկոս Հայոց Մե-

ծի Տանն Կիլիկիոյ» բանաձևը ինքնին իր մեջ կրողանգակե «Մեծի Տանն Կիլիկիոյ» կոչված եկեղեցական շրջանակի բոլոր հայերը, որոնց Կաթողիկոսն է տիտղոսը գործածողը:

Այս բոլորն կհետևի, որ «Կաթողիկոս Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ» տիտղոսը «Ամենայն» հավելումը տղայական պաշտօնանք մըն է, զոր կգործածեն, ըստ բանին Պողոս առաքյալի, «տղու պես խոսողները, տղու պես խորհողները, և տղու պես գատողները», իսկ երբ մեկը գիտակցութեան կհասնի, «տղայութունները ի բաց կխափանեն» (Ա. Կորնթ. ԺԳ 11), եթե Կիլիկիո Կաթողիկոսութեան ենթակա թեմերը և հովութունները հետևեն իրենց մեծավորի օրինակին, այն ատեն Լիբանանի հայոց առաջնորդը ինքզինքը պիտի հորջորջե «Առաջնորդ Ամենայն Հայոց Լիբանանու», Տրիպոլիի քահանան ինքզինք պիտի կոչե «Հոգևոր Հովիվ Ամենայն Հայոց Տրիպոլիի», իսկ Բեյրութի Ս. Նշան եկեղեցիի ավագերեցն ալ ինքզինք պիտի հռչակե «Աւագերէց Ամենայն Հայոց Ս. Նշանի»: Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ», վ.







Հ. Տ. ՍԻՐՈՒՆԻ

## Կ Ո Մ Ի Տ Ա Ս Ի Ն Հ Ե Տ \*

### XII.— Կոմիտաս և իր սաները

Կոմիտաս չսպասեց երաժշտանոցին՝ ձեռնասուններ հասցնելու համար: Ան պետք ուներ անմիջական ուժերու, որպեսզի լծե իր առաքելության: Ու անոնք պետք է երկար մարդվեին նախ, կարենալ աջակցելու համար իրեն:

Ձեռնասուններ Կովկաս ալ փորձեր էր ունենալ Կոմիտաս, ու իր շունչին տակ քանի մը ընտիր երաժիշտներ կրցան հասուննալ: Բայց հոն չկրցավ, ավելի ճիշտ ատեն ու հնարավորություն չունեցավ ձեռնասուններ պատրաստելու գործին նվիրվիլ:

Հիմա, Պոլսո մեջ, ան տարրեր ուներ ձեռքին տակ, որոնցմե պիտի կարենար մարդել իր գործը շարունակողներ:

Իր սաները վեց էին ի սկզբան, և հետևյալներն էին. Արտաշես Ապաճյան, Միհրան Թումաճան, Բարսեղ Կանաչյան, Վարդան Սարգիսյան, Հայկ Սեմերճյան, Վաղարշակ Սրվանձադյան:

Կոմիտաս լրջորեն կպարապեր իր սուլն վեց սաներով: Երաժշտանոցը գեռ չկար, բայց տեսակ մը երաժշտանոց դարձած էր իր բնակարանը, ու անոր առաջին բերքը իր վեց սաները պիտի ըլլային:

Սխալ պիտի ըլլար իր վեց սաներով փակել թիվը իր շուրջ բոլորված երիտասարդներ-

բուն: «Գուսան» երգչախումբն դեռ շատերը կային, որ անպակաս էին իր բնակարանեն, շնչելով այն մթնոլորտին մեջ, զոր Կոմիտաս ստեղծեր էր իր շուրջը: Եվ եթե անոնք երաժշտական ասպարեզին չհարեցան հետո, բայց հայ երաժշտության բարեկամներ մնացին ցմիշտ և Կոմիտասի շունչը վառ պահեցին ըլլա Պոլսո, ըլլա հայ Սփյուռքի մեջ: Ոմանք ալ, երաժշտության նվիրվեցան հետագային, ու անոնցմե ունեցանք արժեքավոր երաժշտագետներ ու երգչախմբի վարիչներ:

Կոմիտասի սաներուն մեջ ստիպված ենք հիշել Գրիգոր Կարապետյանն ալ, հետագային հոգևորական և եպիսկոպոս, ծանոթ առավելապես իր «Գուսան» մակդիրով: Հակառակ վերապահումներուն, զորս կդրդե մեղ ունենալ իր անձն ու կյանքը, պետք է ըսենք, որ ան երկար ատեն Կոմիտասի ավանդությունները վառ պահեց Վոսփորի ափերուն վրա:

Գրիգոր Գուսան վարդապետ իրավամբ կպարծի, թե ինքն էր, որ նախաձեռնեց Կոմիտասի պատարագը երգել տալու Գուրուչեշմեի և Օրթաքյոյի հայ եկեղեցիներուն մեջ, նպատակ ունենալով «Մեծ վարպետն իր գործով ծանոթացնել ամեն անոնց, որոնք բախտը չունեցան զինքը տեսնելու, իր տիրական ձայնը լսելու և վայելելու իր երգը, մանավանդ երգելու ձևը»<sup>90</sup>:

Կոմիտաս ուղղակի հաջորդ շթողուց սակայն մեղի՝ իր ձեռնասուններեն: Կյանքի

\* Նարունակված «Էջմիածին» ամսագրի 1965 թվականի № № Ա-ից, Ե-Ձ-Է-ից, Ը-Թ-ից, Ժ-ից և 1966 թվականի № № Ա-ից, Բ-ից, Գ-ից, Դ-ից և Ե-ից:

<sup>90</sup> «Ամենուն տարեցույցը», 1926, էջ 446:



պայմանները, որոնք ստեղծվեցան հայուն, թույլ չտվին, որ անոնք շարունակեն վարպետին կես ձգած գործը: Իր վեց սաներեն Ապաճյան իր աչքերը պիտի փակեր շատ կանուխ, համաշխարհային առաջին պատերազմի օրերուն: Սեմերճյան պիտի չմնար երաժշտական ասպարեզի մեջ, իր հոգին կապած պահելով հանդերձ իր եղբորաբախտ վարպետին: Բայց մյուս շորսը, բոլորն ալ, ամեն մեկը իր շափով, հայ երգի ճշմարիտ առաքյալներ եղան հայ Սփյուռքի մեջ, և պատիվ բերին վարպետին:

Անոնք մասին պիտի խոսինք, երբ անդրադառնանք Կոմիտասի թողած ժառանգին: Ըսենք միայն այսքանը, որ հայ Սփյուռքը շատ բան կպարտի անոնց, եթե չմոռցավ հայ երգը:

### XIII.— Հայ կոունկը բեմն բեմ

Պոլիս պահ մը հանգիստ շթողուց սակայն հեք վարդապետը: Այնքան մեծ էր եղբոր իր տարածած համբը, որ մարդիկ ա'լ չէին գոհանար ատեն-ատեն անոր տված համերգներով, ու կուգեին ավելի հաճախ լսել զայն, ու ավելի հաճախ գինովնալ իր երգերու արքեցունքի տակ: «Կոունկ»-ն ու «Անտունի»-ն հոգեկան պահանջ մը դարձած էին ա'լ ամենուն համար, ու զարմանալի այս քաղաքը, որ Պոլիսն էր և որ մինչև այն ատեն խորթ երգերով էր սնած, ա'լ հիմա սկսեք էր սիրել հայ գեղջուկ երգը, իր հոգին այնքան երկար փակելի հետո անոր:

Կոմիտասի առաջին ելույթը Եվրոպային դառնալին հետո իր մասնակցությունը եղավ Աշխատանքի տան ի նպաստ կազմակերպված երեկույթին, Յունիոն ֆրանսեզի սրահին մեջ, 1911 դեկտեմբեր 24-ին (1912 հունվար 6), ու անկե հետո զայն վազցուցին հանդես հանդես, ծարավի անոր երգերուն քաղցրությամբ: Եվ ան սիրով վազեց բոլորին, ու իր զարհուրելի զբաղումներուն մեջ իսկ ատեն գտավ ամոքելու մարգոց ուծացած հոգին, խաբրիկ բերելու անոնց՝ հայրենի մոռցված հողեն, ու թարմացնելու տարրերուն հետ կոնծած կարոտը մարդոց ներսիդին:

Իր հաջորդ ելույթը էսայան սանուց միության 1912-ի տարեկան երեկույթին էր, որ տեղի ունեցավ հունվար 21/3 փետրվարին, Յունիոն ֆրանսեզի սրահին մեջ, և որ իսկապես գեղարվեստական գեղեցիկ երեկո մը եղավ, որուն իրենց մասնակցությունը բերին Կոմիտաս վարդապետ (մենեք), Զեքի բեյ (շութակ), Լանգե (դաշնակ), էլինգեր (թավ-շութակ) և Վահրամ Փափազյան (արտասանություն):

Կոմիտաս հետագային ալ անբաժան պիտի ըլլար էսայան սանուց միության կազմա-

կերպած բոլոր հանդեսներին, էսայան վարժարանը սիրելի բույն մըն էր իրեն համար, ու սիրով կմասնակցեք այդ հանդեսներուն, որոնք կտրվեին դպրոցին աղքատ տղոցը օգտին:

Կոմիտասը լսեցինք հետո Պիեռ Կիյառի հիշատակին նվիրված սգահանգեսին՝ Յունիոն ֆրանսեզի սրահին մեջ, 1912 փետրվար 15-ին: Հայ ժողովուրդի մեծ բարեկամին ընծաված մեծարանքի այդ ցույցին առթիվ հավաքված մեծ բազմությունը հոտնկայս և հուզմունքով լսեց ներսես Շնորհալիի «Ննջեցելոց տաղ»-ը, զոր երգեց Կոմիտաս վարդապետը սարսուռ մը պատցնելով բովանդակ սրահին մեջ:

«Խաւար մեղաց հալածեցաւ,  
Լոյս գիտութեան քն ծագեցաւ,  
Խայթումս օծին բժշկեցաւ,  
Հիւանդութիւնք քն ողջացաւ»:

Կոմիտասը այլևս խաղաղ շթողուցին: Զայն կանչեցին բոլոր մեծ հանդիսությանց, ու բոլորին ալ սիրով վազեց: Բարեգործական նպատակներու համար կազմակերպված հանդեսներին անպակաս եղավ միշտ ան: 1913 սեպտեմբեր 28-ին (11 հոկտեմբեր) զայն կգտնենք, օրինակ, Սկյուդար, Բողոքականներու ժողովարանին մեջ գեղարվեստական հավաքույթի մը, որ կտրվեք Սեմերճյան ճեմարանի օգտին:

Պոլիսը խանդավառող պահեր էին, ինչպես պիտի տեսնենք, այն ելույթները ևս, զորս Կոմիտաս ունեցավ 1913 հոկտեմբերին, հայ տառերու գլուտի մեծ հորեյանին առթիվ Պոլսո մեջ տեղի ունեցած հանդիսությանց ընթացքին, և որոնք այդ հանդիսությանց գլխավոր հմայքն եղան, անգամ մը ևս քաղցրացնելով տոնական օրերը:

Հանդեսներու և տոներու իր բերած մասնակցությանց կարգին թող թույլ տրվի մեղ հիշել նաև այն հուզիչ վայրկյանները, զորս մեզ տվին ապրիլ, Արմենակ Շահմուրադյան և ինք, Սիմոն Զավարյանի հուղարկավորության օրը, 1913 հոկտեմբեր 21-ին, Բերայի Ս. Երրորդություն եկեղեցվո մեջ, փղձկեցնելով ամբողջ տաճարը:

Վարպետը առիթը ունեցանք նաև ողջունելու Արմենակ Շահմուրադյանի համերգին, 1913 նոյեմբեր 3/16-ին, Պրտի-շանի ձմեռային թատրոնին մեջ, որուն բազմաթիվ օտարներ ալ ներկա էին, ինչպես իշխան Մեջիգ էֆենդին, սպանիական դեսպանը, և շատ ուրիշներ եվրոպական գաղութեն, և որ յաղթանակի օր մը եղավ որքան հայ արվեստագետին, նույնքան հայ երգին համար: «Պոլիսը ջատ քիչ անգամ ականատես էր եղած նման ոգևորության մը, զոր հայ հասարա-



կուսությունը ցույց տվավ առջի օր, ծավահա-  
րելու փութալով իր մեկ աաղանդավոր դա-  
վակը,— կզբեինք համերգեն հետո:— Հասա-  
րակության ցույց տված այս խանդավառ ըն-  
դունելությունը ուշագորավ երեույթ մըն է,  
որովհետև որքան ալ ներշնչված ըլլա ան հայ  
երգիչին համբավեն, սակայն մյուս կողմե,  
գոնե ինձ համար, հետևանքն է ան հասա-  
րակության մեջ հետզհետե դարձնող հե-  
աաքրորության մը՝ դեպի մայրենի գեղար-  
վեստն ու ցեղային հանճարը, որոնց հանդեպ  
ցրտություն և անտարբերություն տխուր ա-  
պացույցներ ցարդ շա՛տ տվավ, ավա՛ղ:  
... Իր հայտագիրը, կաղմված եվրոպական և  
հայկական երգերե, կրցավ մինչև ետք հուղ-  
ման և սպասման մեջ պահել ամբողջ սրա-  
հը: ... [Հայերեն երգերն էին] Կոմիտաս վար-  
դապետի դաշնավորած «Տատրակն ասաց»-ը  
և «Անտունի»-ն, որոնց կնվագակցեր Կոմի-  
տաս վարդապետ: ... Հայտագրեն դուրս  
երգված «Հայաստան»-ը վերջացավ խանդա-  
ղեղումի մը մեջ, մինչ Կոմիտաս վարդապետի  
«Գուսան» երգչախումբին աշակերտուհիները  
վերնատունեն ծաղկեփունջեր կթափեին վար:  
Ավարտին, Կոմիտաս վարդապետ բեմ գալով  
Շահմուրադյանի հետ՝ քանի մը զգածված  
րաոներե ետք հանուն իր երգչախումբին ոս-  
կիե նրբակերտ խորհրդանշան մը նվիրեց»<sup>91</sup>:  
«Ստամբուլ» թերթը իր տեղեկատվության  
մեջ կզբեր ի միջի այլոց, թե «Կոմիտաս վար-  
դապետ երեկ ինքզինքը գերազանցեց իբրեկ  
հեղինակ և դաշնակող»:

Կոմիտաս իր երգերով ներկա էր նույնպես  
Հակոբ Գուրգենի հոբելյանին էսայան վար-  
ժարանի մեջ, 15/28 գեկտեմբեր 1913-ին:  
Դասական հայերենի ծերունադարդ ախոյա-  
նին ընծաված մեծարանքի այդ ցույցը, շա-  
րան մը եղավ խանդավառ ճառերու, որոնք  
կընդմիջվեին երգով ու նվագով: Նվագով  
մասնակցեցան Մեսրոպյան քույրերն ու Ա-  
հարոն Մսրլյանը, իսկ Կոմիտաս իր ամենեկ  
քաղցր երգերեն մեկ քանին երգեց ի պատիվ  
հոբելյարին:

Հոբելյանի ուրիշ մեծ տոնախմբություն մը  
պիտի կաղմակերպեր Պոլիսը քանի մը ամիս  
հետո, 1914 ապրիլ 27-ին (10 մայիս), այս  
անգամ հայ ազատագրական շարժման նա-  
խակարապետներեն մեկուն՝ Մկրտիչ Պոր-  
տուգալյանի ի տատիվ: Այդ հանդիսության,  
որ համազգային մեծ տոնի մը կերպարանքն  
առավ, խմբերգերով մասնակցեցավ նաև Կո-  
միտաս վարդապետի «Գուսան» երգչախում-  
բը և նույն երգչախումբեն երիտասարդներ  
«Ով մեծասարան»-ը եռաձայն երգեցին այդ  
առթիվ:

<sup>91</sup> «Ազատամարտ», 5/18 նոյեմբեր 1913:

Դեռ կրնայինք հիշատակել Կոմիտասի  
բաղմաթիվ ուրիշ ելույթները տարբեր առիթ-  
ներով, որպիսին էին գրական դանադան հա-  
մախմբումները, որոնց մաս առավ, իր ներ-  
կայությունը ինչ-ինչ դպրոցական հանդես-  
ներու մեջ, իշխան Մեջիդի իր տված այցե-  
րը, իր մասնակցությունը ամերիկյան  
դեսպանատան մեջ տեղի ունեցած ընդունե-  
լությանց, իր այցելությունը «Թուրք օջա-  
ղ»-ին, առանց հիշելու իր զեղման պահերը  
մտերիմ շրջանակներու մեջ: Իր այդ ելույթ-  
ներեն ոմանց պիտի անդադառնանք իր տե-  
ղին, ինչ որ պիտի ուղեկինք ընդդէմ հոս, իր  
ստեղծած քաղցր պահերն էին մարդոց հոգի-  
ներուն մեջ, և սարսուռը, զոր ան կսփոն-  
ամեն անգամ, որ մեզ կհիշեցներ դարավոր  
մեր պանդխտությունը Վոսփորի գեղեցիկ.  
բայց խորթ ափերուն վրա:

«Լուռնկ, մեր աշխարհեն խաբրիկ մը չու-  
նի՞ս...»:

#### XIV.— «Փոքր Հայաստան»-ը

Պոլիսը խոպան դաշտ էր հայ ժողովուրդի  
հոգեկան աշխարհը պեղել փորձողին հա-  
մար: Պոլիս հարուստ էր անշուշտ իր ֆուլկլո-  
րով. իր բարբառը մեկն էր ամենեկն շահե-  
կաններեն. ընտանեկան սովորությունները,  
ավանդությունները, առածներն ու առակնե-  
րը դարերը հոն ալ պահեր էին. ամեն թաղ  
իր գույնն ու հրապույրն ուներ, ու պրպտողին  
համով նյութեր կրնար տալ: Ու ասկե դատ  
ամեն գավառ մասնիկ մը ուներ Պոլսո մեջ,  
որ իր տեղեն բարբեր բերած էր հետը ու դա-  
նոնք անվթար կպահեր: Եվ սակայն դժբախ-  
տությունն այն էր, որ Պոլիս բոլոր մեծ քա-  
ղաքներուն պես, ժողովրդական իր երգերը  
չուներ, իր հայ երգերը: Երգարաններուն մեջ  
մոռցված հին աղգային երգերն էին, որ մեշ-  
տեղ հաներ էր «Հուրերիթ»-ը մեկն, անոնց  
բերել խառնելով հեղափոխական խել մը եր-  
գեր, որոնք Պոլիս էին խուժեր հանկարծ Կով-  
կասեն:

Գավառի պանդխտները, որոնք երբեմն  
կային Պոլսո խաներուն մեջ ու իրենց հայ-  
րենիքի երգերը կմոլտային իրենց սև օրերը  
անուշցնելու համար ատեն-ատեն, արդեն  
նոսրացեր էին Համիդի վերջին տարիներուն:  
Ու անոնք, որ դեռ կային, վաղուց էր մոռցեր  
էին իրենց գեղերը, ու ինչ որ բերեր էին  
անոնցմե: Ինչքան ալ ճիգ ընեիր, հայերեն  
երգ չէիր կրնար քաղել անոնց շրթունքեն:  
Անոնց երգածը կսկիծի և կարոտի աղաղակ  
մըն էր միայն, զոր չէր կրնար հասկնալ Պո-  
լիս քաղաքը:

Խոպան էր նաև Բյուզանդիան, Պոլսո հարե-  
վան այդ «Հայաստան»-ը: Բարբառ, ավան-  
դություններ, ինքնուրույն բարբեր ու սովո-

րություններ անշուշտ Բյութանիո հայաշատ քաղաքներն ալ ունենին. բայց ոչ մեկ տեղ էի չհանդիպեր ժողովրդական երգերու, որոնք նախնիքներեն մեզի գային: Քանի մը դարու կյանքը բուն հայ հողին այսքան հեռու, հետքն իսկ չէր թողած հին «Հայրեն»-ներուն, ու փոխարեն, ստեղծեր էր անմահ ու անհոտ երգեր, զորս կլսեիր հարսնիքներու մեջ կամ տոնական օրերու:

Բյութանիան իր հոգին կցած էր Պոլսո: Ան կուզեր Պոլսո նմանիլ: Մտավորականությունը, զոր ան ստեղծած էր, կանաներ Պոլսով, ու ամեն ինչ, որ կհուզեր մայրաքաղաքը, իր ալիքը կտարածեր Բյութանիո բոլոր հայաշատ քաղաքներուն մեջ:

Կոմիտասի հայտնությունը Պոլսո մեջ ու անոր սփռած ոգևորությունը իրենց արծագանքը չէին կրնար չգտնել Բյութանիո մեջ ալ: Ու, հա, հազիվ Կոմիտաս իր առաջին համերգն էր տվեր, Աղաբազար ու Պարտիզակ մրցումի ելան ժամ առաջ իրենց մեջ լնենալու համար նոր օրերու հայ մեծ գուսանը:

Առաջին հրավերը հասավ «Աստվածարյալ քաղաք»-են, տիտղոս, զոր Աղաբազար ստացեր էր Ստեփանոս առաջնորդեն և որով միշտ կտոնեար: Հրավերը կուգար Սերովբե քահանա Պուրմայանեն, ճիշտ այն մարդեն, ավա՞ղ, որ քանի մը տարի հետո պիտի ծառանար հայ մամուլին մեջ ուրանալու համար գոյությունը ինքնուրույն հայ երաժշտության մը: Այն բաց նամակին, զոր ուղղեր էր Կոմիտասին «Բյուզանդիոն»-ի մեջ անոր առաջին համերգեն հետո, հետևյալ հետգրությունը կկցեր.

«Ձեր հասցեն չունենալով, հարկադրված եմ հոս հարցնել ձեզ, թե համերգներ տալու համար. 1. Կրնա՞ք Աղաբազար գալ և ե՞րբ. 2. Ի՞նչ պայմաններով և ինչպե՞ս կրնաք գալ: Կվստահեցնենք ձեզ, թե Աղաբազարի մեջ, իբր երաժշտասեր քաղաք, կգտնվին մեծ թիվով տրամադրելի ձայներ: Ամբողջ քաղաքացին կսպասե ձեր պատասխանին»<sup>92</sup>:

Գավառացի ուրիշ հայ մտավորական մը, այս անգամ Պարտիզակեն, արծագանք կուտար «Արևելք»-ի մեջ.

«Մենք ներկայիս Կոմիտաս վարդապետը խոնարհաբար կուզենք գեթ անգամ մը մեր մեջ ունենալ. կհայցենք իրմե, որ սիրահոժար այց մը տալ հաճեր Բյութանիո պատմական գավառին, զոր օրինակ, Աղաբազար, Նիկոմիդիա, Պարտիզակ, Մեծ նոր գյուղ, Չենկիլեբ, ուր՝ կվստահեցնենք զինքը՝ խանդավառ ընդունելության պիտի արժանանա»:

<sup>92</sup> «Բյուզանդիոն», 1910, դեկտեմբեր 6/19, թիվ 4303:

Նիկոմիդիան ուղղակի հրավեր չըրավ: Բայց ավելի հուզիչ էր ձայնը, զոր, Կոմիտասի առաջին համերգեն հետո, Պոլիս կհասցնեիր իր երաժշտապետը, Մ. Թիրյաբյան, թքնելու համար Պոլսո տիրացուներու երեսին՝ վարդապետին ուղղված բաց նամակի մը մեջ.

«Դժբախտություններուն մեծագույնը նկատեցի ինձ համար, երբ պաշտոնիս բերմամբ չկարողացա ներկա գտնվիլ թե՛ այն երկու հմտալից գասախոսությանց և թե՛ մանավանդ համերգին: ... Սիրահոժար հանձնառու կըլլայի 3—4 մեջիդ ծախսել այդ նպատակով. ավա՞ղ սակայն, որ եկեղեցվո և վարժարանի մեջ ունեցած կրկնակ պաշտոններս կկաշկանդեն ոտքերս ու կլռեցնեն ըսնորեն սրտիս ձայնին, որ կխեղդվե՞ր: Ինչպես ուրեմն չզարմանամ, երբ կկարդամ, թե այն շահեկան դասախոսությանց մեկ երաժշտ միայն ներկա էր գտնվել: Ինչպե՞ս չողբամ նաև ամեն անոնց վրա, որոնք փոխանակ օգտվելու ասանկ եզակի առիթներն՝ արգելք ալ ըլլալու ձեռնարկներ կընեն»<sup>93</sup>:

Կոմիտաս վարդապետ նախ գոհացուց Աղաբազարը: Նիկոմիդիո այս հայաշատ քաղաքը համբավված էր իր երգեցողությամբ: Ամբողջ քաղաքը շարական գիտեր: Շարական կերգերն ժամուն դպիրները և անոնցմն շատերը աղվոր ձայն ալ ունենին. հայ կիները տուները կժողվեին, ժամերգություն կընեին ու շարական կերգեր. հայ աղջիկները իրենց կարգին երգ ու ջարական կերգերն մանաւորաններուն մեջ: Աղաբազարի երգին համբավը տարածված էր և դուրսը: Լևոն Չիլիկիլիյան Պոլիս հասաւտվելէ առաջ 1904-ին, տարի մը Աղաբազար մնաց, ինչպես գրեցինք, և իր եռաձայն պատարագը այնտեղ փորձեց իզմիրեն հետո:

Կոմիտաս վարդապետ երկիցս այցելած է Աղաբազար, 1912-ին և 1913-ին:

1912-ին Աղաբազար կտոներ իր բազմավաստակ կրթական մշակը, Գևորգ Շիրինյանը, փառավոր հանդեսով մը, որ տեղի ունեցավ նույն տարվան ապրիլ 29-ին (12 մայիս), և որուն ընթացքին տեղիւն հայությունը, միահամուռ, իր երախտագիտության տուրքը տվավ պատկառելի ծերունիին, որ բազմաթիվ սերունդներու դաստիարակն ու մենտորն էր եղեր:

Գևորգ Շիրինյանին նվիրված սույն հանդիսության իր մասնակցությունը բերավ նաև Կոմիտաս վարդապետ, որ հատկապես Աղաբազար հրավիրված էր այդ առթիվ: Ս. Հրաչ-տակապետ եկեղեցվո մեջ տեղի ունեցած հանդիսության Կոմիտաս երգած է երկու

<sup>93</sup> Անդ.



եկեղեցական տաղեր, և «Արի Աստուած» մաղթանքը, հմայելով հանդիսականները: Բայց երբ ժողովուրդը «պանդուխտին երգը» «Կոռունկ»-ը կուգենք» աղաղակած է խելահեղ, ան պատասխանած է ժողովուրդին դառնալով. «Վեղարս՝ զլիսու դամված կպահեմ, որուն պետք է փափաղիք. ես չեմ կարող հոս եկեղեցիին մեջ երգել. էջմիածնի միաբան կմնամ, հետևապես մաղթեմք մը միայն կարող եմ երգել»: Ընտո, գոհացում տալու համար ժողովուրդի խնդրանքին, գեղեցիկ դասախոսություն մը կընեն այնտեղ իսկ, ինչպես որ պիտի ընեն քանի մը օր հետո ևս, մայիս 1-ի երեկոյան, իր հիմնելիք երաժշտանոցին մասին»<sup>94</sup>:

Իր առաջին շփումին իսկ Կոմիտաս գերած էր «աստվածարյալ քաղաք»-ը:

Աղաբազարի կեդրոնական վարժարանի երեմանի սանուհիներեն տիկին Փիրուզ Կոշկակարյան (Յազմաճյան) կպատմե իր հուշերուն մեջ.

«1912-ին, երբ դեռ Ս. Կարապետի Սանդրիտյան նախակրթարանը կհաճախեինք, փափագը ունեցանք երջանկահիշատակ Կոմիտաս վարդապետը հրավիրելու: Մայիս 1-ի օր մըն էր: Ի պատիվ վարդապետին կաթի սեղան մը պատրաստած էինք: Իբր խմորեղեն ունեինք թրքական սիմիտ:

Տարաբախտ վարդապետը, կատակելով, իր մանկութենեն պատմություն մը ըրավ և մեղ ղվարճացուց:

Ըսավ, թե ինք շատ կսիրեր սիմիտը, մանավանդ, երբ ընկերացած ըլլար կաթի: Պատմեց նաև, թե պզտիկուց որք մնացած ըլլալով, մանկությունը անցուցեր է մորաքրոջ քով՝ Քյոթհաճիայի մեջ: Երբ զինքը դպրոց կտանի եղբոր այդ բարի մորաքրոջը, հացագործին առջևն անցած ատենին, անպայման կըսե եղբոր, որ իրեն սիմիտ մը գնե և վիզը անցնե: Ապա թե ոչ կսպառնա եղբոր դպրոց չերթալ: Եվ այսպես՝ ամեն առավոտ, ու միշտ ալ փափաքին գոհացում կստանա եղբոր:

Նախաճաշը երբ լրացավ, վարդապետը սրահը առաջնորդեցինք և խնդրեցինք, որ մեղի երգ մը երգե: Ինչպես միշտ, այս անգամ ալ չմերժեց մեր առաջարկը և սկսավ «Կոռունկ»-ը երգել: Այնքան ուժեղ էր ձայնը, որ մեր ականջներուն մեջ կարծես զանգակներ կղողանջեին»<sup>95</sup>:

<sup>94</sup> «Բյուզանդիոն», 1912 մայիս 1/18.

<sup>95</sup> «Պատմագիրք Ատափազար Աստուածարեալ» բաղադրանք, Փարիզ, 1960, էջ 319—320.



Կոմիտաս երրորդ անգամ Աղաբազար կուգար 1913 մայիս 28-ին, երեքշաբթի օր, նույն գիշերն իսկ նախագահելու համար Ս. Հրեշտակապետ թաղի Գայանյան վարժարանի նախկին սանուհիներեն կազմված միության կազմակերպած գեղարվեստական երեկոյին: Երեկոյթը, որուն կմասնակցեին տեղական ուժեր, ի վերջո վերածվեցավ երաժշտական փառատոնի մը, երբ, տեղի տալով ժողովուրդի բուռն պահանջին, ինքը Կոմիտաս բեմ ելավ, խանդավառ ծափերու մեջ, երգելու համար քանի մը ժողովրդական երգեր, ու ամեն երգի կցելով իր բացատրությունները: Ան երգեց նախ «Հով արեք սարեր ջան»-ը, երգ, որուն մեջ, ինչպես Կոմիտաս ըսավ, «վշտով ու ցավով բեռնավորված ու տառապանքի մեջ այրող սիրտն է, որ սարեն, ձորեն, ամպեն, ջրեն ու ամբողջ բնութենեն մխիթարություն կակնկալե, առանց հուսահատելու»:

Ընտո երգելով «Մոկաց Միրզե»-ն, Կոմիտաս ըսավ. «Մոկաց Միրզե»-ն վիպերգ է: Մոկաց իշխանը կհրավիրվի հացկերույթի. կերակուրեն հետո ձմերուկ կբերեն, կեսը կուտան Մոկաց Միրզեին, կեսը կուտեն հյուրասիրողը: Վերադարձին, թունավորված հայ իշխանը կմեռնի, զի ձմերուկի իրեն ինկած բաժինը դեղած էր: Երգին մեջ կպատմվի մանրամասն շեպեին եղելությունը և Մոկաց իշխանի ազնվությունը: Երգին առաջին մասը կռվանդակե պատմական մասն իբր ասեց, իսկ երկրորդը՝ քնարական բաժինը, բուն երգն է, որ երկար ու ձիգ՝ բարձր ձայնեն վար կիշեն ու կանհայտանա, նման սրտի խորեն ելած ափսոսանքի մը»:

Հարսանեկան երգերու շարքը, որոնց հետևեցան առաջին երկու մեներգներուն, առիթ եղան, որ Կոմիտաս նկարագրե հայ գեղջուկ հարսանիքը. «Հարսանեկան երգերը,— ըսավ ան,— թերևս բեկորներն են հայ բնաբարձական շրջանին մնացած՝ քրիստոնյա ժողով պարուրված: Բոլոր երգերուն մեջ գիրկընդխառն կերթա մարդկային ու բնության գարունը, որ լուսնակի ցողով ու արևի շոգով կծլի: Հարսին վեր կհանեն ու լուսնկային հետ նուրբ ամպերու շղարշովը կթողարկեն: Փեսային երկնից արևին հետ հրեղեն ձիու վրա կարշավեցնեն: Երկնային առկայծ աստղերը, օդին թարմ հովիկները, բարձրիկ ու ազատ լեռները, երգիչ աղբյուրն ու ակը, ձայնագեղ հավերն ու ցամաքի-թռչուն եղնիկը, թաքուն մանուշակը, ճերմակ շուշանը, հպարտ հասմիկը, արքայանման բալասանը, ծառերն ու պտուղները...: Բոլորը կխոսին իր

սրտին մեջ և բնագրաբար կտեսնեն մտերիմ ազգակցություն մարդկային ու բնության աշխարհի մեջ: Փնսային թագավոր, հարսին թագուհի կասեն, և ըստ այսմ թագավորամեր, թագավորաքույր... զի օրվան մեծություններն են՝ հարսանեկան հանգեսը փառավորողը: Հարսանեկան երգերու թիվը 100-ի մոտ է, ըսավ այս առթիվ վարդապետը, իսկ իր հավաքած ժողովրդական երգերն իբր 3 000, և հետո հարեց, թե գեղջուկ փնսային հալավը ճարելու համար, որ կբաղկանա քանի մը կտոր իրեղենե, — գլխարկ, կոշիկ, գոտի, և այլն, — հարսանեկան երգը կհարցնե «Մեր թագավորին ի՞նչ պիտի», ու ամեն մեկ հարցումն կհետևի նվերը: Հարսներգը կշարունակե թվել գեղջուկ հարսին պարտականությունները իր նոր տան մեջ, առանց մոռնալու թագավորամեր հետ ծնծկվելու առիթը ևս: Հարսներգը ապա կոգնկոչե հուշերը, զորս նորապսակները պիտի պահեն իրենց հարսանիքի այս օրեն, — փառավոր հանգեսները, գունագեղ զգեստները, պարերը, ուրախ և զվարթ բացականչությունները, սրինգն ու թմբուկը, ժամն ու մոմը, Ավետարանն ու այն նվիրական վայրկյանը, երբ ձեռքը ձեռքին և կյանքը կյանքին կապեցին: Դաշնավորումը կատարված է, ավելցուց Կոմիտաս, վերի պատկերը նկատի ունենալով՝ սրինգի, թմբի, ոտքի ձայնանմանություններով:

Ունկնդիրները սրահեն բաժնված են հմայված:

Հաջորդ օրը, 29 մայիս, Կոմիտաս վարդապետ այցելած է քաղաքին կեդրոնական վարժարանը և հաջորդաբար Ս. Հրեշտակապետ թաղի վարժարանները, ուր զատ-զատ բանախոսություններ ըրած և երգեր երգած է: Սերովբե քահանա Պուռմայանը, որ հետո «Ազատամարտ»-ի և «Տաճար»-ի մեջ իր տխմար ելույթներովը պիտի փորձեր սովոր ձգել Կոմիտասի առաքելության վրա՝ Կոմիտասի Աղաբազար այցելության և անոր սփռած խանդավառության արձագանքը կըլլար «Բյուզանդիոն»-ի մեջ, և դպրոցներու տված իր այցին առթիվ կըսեր. «Կարելի չէ երևակայել մարդ մը, որ իր բարձրության մեջ այսքան խոնարհ ու հեզ հոգի մը կրելով, պզտիկ տղաներուն հաճոյակատար ըլլա անոնց ուզած երգերը երգելով և նույնիսկ կրկնելով զանոնք»:

Պուռմայան քահանան հետևյալ կերպով կամփոփե բանախոսությունը, զոր Կոմիտաս կատարած է այդ գիշեր, որոտընդոստ ծափերու մեջ սրահ մտնել և սրամտություններով համեմված հառաջաբանն մը հետո. «Ժողովրդը ինչպե՞ս կերգե: — Կերգե այնպես, ինչպես որ կխորհի, ինչպես որ կխոսի: Երգը և խոսքը միատեսակ կարողություն

է. որքան լավ խորհի մարդը՝ այնքան լավ կխոսի ու կերգե: Բառ մը ունի երկու բաժին. մեկը գազաթը՝ մեկը ստորոտը. նմանապես ձայն մը ունի երկու պայման. շեշտը և հանգիստը: Նույնիսկ մեր կյանքը երկու պայման ունի՝ ներշնչում և արտաշնչում. ներշնչումը ուժ կուտա մեր ներսը, իսկ արտաշնչումը հանգիստ: Երաժշտությունը ի՞նչ է, բայց եթե ելե՞ջ. բնագրաբար ծանր խոսելով, կկազմվի ինքնին եղանակ մը. փորձի համար բառ մը ծանր-ծանր հեղհեղենք. անպայման եղանակ մը պիտի ելլե անկե՞: Հարց մըն է ա, թե մարդիկ ուրախությամբ, թե տրամադրյալ միջոցին լավ կերգեն. ցնցող զգայությունը համահավասար է ուրախության և վշտի միջոցին. բայց ես կկարծեմ, թե ուրախությունը մարդուն՝ որովհետև անկայուն է, ուստի վազանցիկ ցնցում մը զգայություն՝ նվազ տպավորիչ է, քան վշտի միջոցին ցնցող զգայությունը, որ ավելի ջղուտ և ավելի տպավորիչ պետք է ըլլա»:

Կոմիտաս վարդապետ խոսելով աշուղներուն վրա, ըսած է, թե անոնք առհասարակ երգած են պանդխտության սարսափը, ինչպես նաև հորդոր՝ ոչ ուրիշը անարգելու և ոչ ալ իր ազգն ուրանալու: Կոմիտաս հիշած է հայրենասիրական երգեր Զիվանիեն և Շիրինեն, ու զանոնք «հատիկ-հատիկ խոսելու պես այնպես մը երգած, որ կարելի չէր չհուզվի»:

«Բյուզանդիոն»-ի թղթակիցը, ձեռնասուն Պապա Համբարձում Զերչյանի և սնած երբեմնի խանենդեներուն ավանդություններով, թույլ տված է այստեղ իրեն Կոմիտաս վարդապետի աշուղական արտահայտություննց մեջ նշմարելու «գերվիջ Համբարի, աշըգ Սերվերի, աշըգ Ֆեդայի և ուրիշ հայ և թուրք աշուղներու ոճը, որոնք չափված հանգերով երգած են «ղեստան»-ներ և «սեմայի»-ներ 4—5 ձայներու ելե՞ջներով», բարեհաճելով սակայն ավելցնել, թե իր լսած «ղեստան»-ները միշտ թուրքերեն երգած են, մինչ Կոմիտաս երգեց «հայ աշուղներու հայ լեզվով «ղեստան»-ները, զորս հատիկ-հատիկ արտահայտեց իբրև խոսք և իբրև երաժշտություն»:

«Հարգելի դասախոսը հետո ներկայացուց, — կշարունակե Պուռմայան, — հայ գեղջուկ աղջիկ մը, որ մանչ մը կսիրե. ասոնց մեջ հետզհետե արժարժող սերը կսնա միշտ լուռ ու անխոս: Օր մը, սակայն, մանչը գինվոր երթալով, աղջիկը կկորսնցնե դառնությունով իր սիրական շաբը, հետևապես խեղճին սրտին մեջ կհոսի սերը, և կսկսի հյուսելու ողբանվազ երգ մը անոր ուղուրի՛ն, — «Սարերի վրով գնաց...»: Տաղանդավոր դասախոսը իսկապես ներկայացուց հայ գեղ-



ջուկ աղջկան՝ իր սիրական յարք կորսնցնելու հետևանքով կրած դառնադեմ տպավորությունը հեծեծագին շեշտերով: Երաժշտությունը, ըստով, որպես արտահայտող ուժ մը, բանաստեղծության հոգին է և փոխադարձաբար, ժողովուրդը ինչ որ դգամեր է նույնը երգեր է: Աղջիկը իր յարք «սարերի վրա» երևակայելով, իր ձայնը, իր շեշտը դեպի սարը բարձրացուցեր է. «Իմ յարք խռով զնալ» ըսած ատենը ձայնին շեշտերը շերմացուցեր է: Հայ ղեղձուկը իր զգացումին հարազատ թարգմանն է ըրեր իր երգած երաժշտությունը, բուռն կամ մեղմ, բարձր կամ խոնարհ, խոսքին կամ բառին իմաստին համաձայն: Մինչ հայ ժողովուրդը այս կերպով կազմեր է իր երաժշտության ներքին երանգները, անդին, գերմանացի մեծ երգահան Վագները, դեռ հետին ժամանակի մեջ, նոր կհետևի երաժշտական այս սկզբունքին»:

Կոմիտաս վարդապետ հետո երգած է «աշխատանք»-ի երգը, «որուն մեջ հայ մշակը իբր աղբեր ջան կընտրե իր գոմեջը. ան կրսե իր գոմշուկին. «Յորենն ինձ, դարմանը քեզ, աղբեր ջան»: Հայ ժողովուրդն իր դուրսն երգեր, կայերգը և իր այլ երգերն ունի: «Գութաներգ»-ին մեջ կխոսի գեղջուկն իր եղան, գոմեջին, հոտաղին հետ, երբեմն շույնելով, երբեմն խրախուսելով, երբեմն զայրանալով, և երբ մեկ ծիրը կվերջանա, տնասուններուն կավետե, թե հանգստի ժամն հասավ, որպեսզի ավելի աշխուժով քաշեն գութանը և վարեն հողը: Երգի բացականչությունները կազմված են ըստ մեծի մասին գոմեջին ձայնամանությունամբ. «Հո՛, ե՛կ, յո՛ւա՛. Հոյ-յո, հոյ-յո՛ ա՛»:

Հանճարեղ դասախոսը ունկնդիր ժողովուրդին բուռն փափագին վրա «Մոկաց Միրզեն» երգելի հետո փակեց դասախոսությունը, իբր երկուբուրեմ ժամ խոսելի և երգելի ետք, ու այս անգամ ալ նախորդին պես դյուլթեց, հիացուց և վերացուց մեզ՝ ժուռ բերելով երաժշտական սրբազան մթնոլորտին մեջ, ուր լիաթոք շնչեցինք Բարին, Ճշմարիտն ու Գեղեցիկը: Ապրի՛ պատվական վարդապետ, որ պարծանք էր իր պաականած համայնքին, և որ «երկրորդ անգամ ըլլալով բարեհաճեցավ քաղաքս դալ և իր դյուլթիլ երգերովն ու դասախոսությունովը սքանչացնել մեզ»:

Որքան շուտ պիտի մոռնար իր այս տողերը Աղաբաղարցի տերպապան, որ «Ախրաք-Սամվել» կստորագրեր, ավա՛ղ...:

Կոմիտասի Աղաբաղար յայցելություններուն մասին Բենիամին Թաշճյանը կպատմե նաև հետևյալը.

«1912-ին և 1913-ին, երկու անգամ Կոմիտաս այցելեց Աղաբաղար, որ Պոլսո շուրթին

տակ բազմահայ քաղաք մըն էր, փոքրիկ Հայաստան մը: Եկավ ծանոթանալու մեր ծննդավայրին, մեր աշխարհն խաբրիկ մը բերելու մեզի, մեր ժողովուրդի ստեղծագործությունները ճանչցնելու մեզ: Իր դասախոսությունն սկսելի առաջ, Կոմիտաս ուսուցչական խումբի մը մեջ մտավ իբրև շքեղ վարդ մը: Պատեցուցինք զայն մեր քաղաքի կարգ մը վայրերը, տարինք մեր համբավավոր Զարխ գետակը: Երբ հասանք ափը գետակին, որ արծաթի մեջքով, կապույտ ուլունքներով և պայծառ երգով կսահեր գեղեցկուհիի մը նման, երգ մը խնդրեցինք մեծ վարպետէն: Զմերժեց: «Մայր Արաքսի»-ն առավ և հոսեցուց մեր մեջ: Եվ այնքան դաշնաթավալ, այնքան խորունկ և այնքան վեհ էր իր եղանակը, որ մեր հոգիներու ընկուղի՛լը զգացինք անոր մեջ: Հետո երգեց քուրդ մոր մը ողբը իր սպանված տղու վրա: Մենք չհասկեցանք բառերը, որ կուլային իր շրթունքներուն վրա, բայց մե՛նք ալ փղձկեցանք, որովհետև Կոմիտաս, այդ կախարհը, մեր առջև բերած էր իր սուգին ու ցավին տակ փլած այդ մայրը: Իր ձայնին ալիքները արցունքի տլիքներ էին, որ կխուժեին մեր մեջ: Քանի մը երգեր ևս երգեց, չկոտրելու համար զինքը վայելելու մեր բուռն փափագը:

Իրիկունը կիրակամուտք էր: Հայտարարված էր, որ Կոմիտաս մեր մեջ եկած է, և «Լոյս դուարթ»-ը պիտի երգե եկեղեցիին մեջ և հաջորդ օրն ալ պիտի պատարագե Ս. Կարապետ եկեղեցվուն մեջ: Ամբողջ քաղաքը ուրախացավ: Կոմիտասին անունը լսեր էին, և սակայն զինքը չէին ճանչնար մոտեն, չէին լսած անոր հոգեթով երգը: Աստեղաթիվ բազմություն մը: Եկած էին տեսնելու հայ ժողովուրդի արվեստագեղ սոխակը: Երբ «Լոյս դուարթ»-ը սկսավ քակվել Կոմիտասի հոգիեն և դուրս հոսիլ իր շրթներու վտակեն, ժողովուրդը ենթարկվեցավ անօրինակ հուզման մը: «Լոյս դուարթ»-ը կուգար կարծես Հայաստանեն, խորհրդավոր աշխարհ մը, ուր—կսեին թե—աստղերն անգամ կերգեն: Կոմիտասի ձայնը տարածվեցավ կամարներու տակ, մեծցավ, ընդարձակվեցավ, մեղմացավ ու ալեկոծվեցավ և զարնվելով մեր հոգիներուն՝ գողացուց մեզ: «Լոյս դուարթ»-ը առաջին ճառագայթն էր Կոմիտասի արվեստին, զոր տեսավ իմ ծննդավայրիս աշխատավոր ժողովուրդը ու տաքցավ անով: Իսկ հաջորդ օրվան պատարագը հրաշալիք մըն էր պարզապես, որ իր թևերով փոխադրեց մեզ դեպի մեր հին հայրերը, մեր հայրենի աշխարհը:

«Կոմիտաս վարդապետ, նույն իրիկունը, մեր վարժարաններն մեկուն սրահին մեջ, հո՞նք բազմության մը ներկայության, դասա-

խոսեց ու ծանոթացուց մեր երաժշտության բոլոր ծախքերը, որոնք հին են, ինքնուրույն և ազնվականորեն ազգային: Երգեց «Կոռնկ»-ը, «Քելեր-ցուլեր»-ը, «Սարերի հովին մեռնեմ»-ը, «Հով արեք»-ը, «Անտունի»-ն և ուրիշ մեկը մյուսին ավելի հոյակապ երգեր, որոնք թովեցին մեզ, հրդեհեցին մեր զգացումները, և ուռեցուցին մեր կուրծքերը:

Իր երկրորդ այցելության, մասնավոր հրավերի մը վրա, Կոմիտաս երգեց դարձյալ հոբելյանի մը առթիվ, որ սարքված էր ի պատիվ վաստակավոր և բազմերախտ ուսուցչի մը՝ Գևորգ Շիրինյանի: Ան իր մասնակցությունը բերավ մեծարանքի այս շքեղ հանդեսին՝ իր ամենն անուշ երգերն երգելով, կախարհելով իր շուրջը և միևնույն ժամանակ բանախոսության մը, որով վեր առավ հոբելյարին բազմաբեղուն կյանքը, և այնպես գրավիչ էին իր խոսքերը, այնպես բանաստեղծական ու այնպես ջերմ, որ կհայտնաբերեին միևնույն ժամանակ հոգևոր: Կոմիտաս հեռացավ մեր քաղաքեն, բայց իր շուրջ մեր մեջ էր տակավին: Իր ձայնի ծիածանը դեռ կմնար հոգիներուն վրա:

Պատմական այդ «Լոյս զուարթ»-ին մասին թաջճյան գրած է նաև այլուր:

«Ժամ կերթանք կիրակամուտի «Լոյս զուարթ»-ը լսելու համար... Եկեղեցին լեցված է բերն-բերն: Ամենքս հեհնե կսպասենք վարդապետի «Լոյս զուարթ»-ին: Նորության համբավը կախարհիչ զորության մը պես կանցնի մեր սրտերուն մեջեն...: Նախ մեղմ, հետո ալիք-ալիք թավալող ձայնը ոսկեղեն անձրևի մը պես, աստվածային օրհնության մը պես, հրաշքի մը պես կտարածվի ու կլայնա մեր հոգիներուն մեջ: Բոց մը կանցնի մեր երակներեն: Անանուն դող մը կհամակե մեզ բոլորս: Մեր աչքերը կմեծնան, կպլտորին, կխոնավնան: Ցնցում մը չէր ասիկա, այլ փոթորիկ մը: Լույսի ցուլ մը չէր ասիկա, այլ փայլատակում մը: Ո՛չ, տկար բառ մըն է հիացումը: Ինչ որ զգացինք մենք, հիացում չէր, այլ տենդ, անհնարին սարսուռ: Կամ ավելի գորավոր բան մը, քան տենդն ու սարսուռը: Եկեղեցիին կամարները շնորհացին, այլ լացին: Հեկեկացին ու լացին: Պառավ մամիկները ծունկի եկան ու հատակի քարերը համբուրեցին: Մերունները ձեռքերին վեր բարձրացուցին պաղատանքի մը պես: Նոր հարսերն ու երիտասարդները խաչակնքեցին ջերմեռանդ հավատքով: Երեխաները իրենց մայրերու փեջերուն կառչեցան լացանդամած աչքերով: Վարդապետը մարդ մը չէր այլևս, այլ հրեղեն տեսիլք մը: ... Կոմիտասի «Լուսավարդ»-ը երկար ատեն տե-

սակ մը ավանդություն դարձավ մեր քաղաքին մեջ:

— Լսեցի՞ր:

— Ձլսեցի՞ր:

Ու շսողները դժբախտ կհամարեին իրենք զիրենք»<sup>66</sup>:

\*\*\*

Հուրիեթի տարիներուն Պարտիզակը Պոլսո հայ մտավորականության տեսակ մը ամառանոցը դարձավ: Հեռավոր այդ Հայաստանին մեջ, որ Բյուզանդիան էր քանի մը տասնյակ իր հայաշատ գյուղերով, առինքնող բան մը ուներ մանավանդ Պարտիզակը: Իդիթի հանդիպակաց եզերքին, գեղեցիկ բարձունքի մը վրա թառած դուռ հայաբնակ այդ գյուղը իր բնական ազվոր տեսարաններուն կխառնե որիշ հրապույր մըն ալ: Եղիշն Դուրյանի օրերեն ի վեր մտքի փոքրիկ ոստան մըն էր եղեր Պարտիզակ, ու բարձրագույն վարժարանը, զոր հիմներ էին հոն ամերիկացի միսիոներները հայերուն համար, հայացք էր և ինքը: Պոլսո հայ մտավորականները ավելի հաճելի վայր չէին կրնար գտնել կազդուրվելու համար գոնե քանի մը օր: Ցատկան-ջուրեն սկսյալ մինչև վերի-արտերը ու հոնկն ալ մինչև Ս. Մինաս կյանքը կեռար քանի մը շաբաթ: Խմբական պտույտներ գյուղին սիրուն տեղերը, հանդիպումներ իրիկունը «Ժարդեն»-ին մեջ, ու երբեմն ալ դասախոսություններ դպրոցին սրահը կամ թե բացօթյա:

Կոմիտասն ալ Պարտիզակ եկավ անգամ մը: Գացին Պոլսեն զայն բերին: Պարտիզակը ինչու վար մնար Աղաբաղարեն, ուր Կոմիտաս երկիցս էր եղեր: Ցատկան-ջուրը նվաճ ազվոր էր Ջարխեն, ու գրոց-բրոց մարդիկ Աղաբաղա՞ր միայն կային: Ու քանի մը օր ալ Պարտիզակը գինքը դուրթեց: Ման եկավ բոլոր ազվոր վայրերը, ու Պոլիս դարձավ հոգեպես ալ կազդուրված:

\*\*\*

Կոմիտաս իր կախարդանքը տարավ «Փոքր-Հայաստան»-են քիչ մը ավելի հեռուն: Ան այցելեց նաև էսկիշեհիր:

Բժիշկ Հ. Մանուկյան հետևյալը կգրեր ինձի 1962 հուլիս 14-ին Սոֆիայեն, Կոմիտասի էսկիշեհիր տված այցի մասին:

«Կոմիտաս 1910-ին կամ 1911-ին եղած է նաև էսկիշեհիր: Ծա այն ատեն ուսուցիչ էի նախակրթական բաժանմունքի: Տնօրենն էր Տիգրան Սյուրմեյան (հետո Արտավազդ արքեպիսկոպոս): Կապաշտոնավարեին նաև

<sup>66</sup> «Հուսարեր», 1935 նոյմբեր 2:



վահրամ Թաթուլ, Գրիգոր Գալուստյան և ուրիշներ: Ազգային վարժարանը միշնակարգ աստիճան ունի. անկե շրջանավարտ էր նաև դերասան Հրաչյա Ներսիսյանը: Վարժարանը ունի նաև իր սեփական ֆանֆառը, որուն վարիչն էր սերաստացի Ներսես Մեսիսյանը:

Այդ տարիներուն, ինչպես ամեն տեղ, էսկիշնհիր ալ առած-քալած էր: Հայերը հաջողեցան մեծահարուստ Զեյթուն-օղլուի մեծ շենքը գնել ճիշտ Փորսուխ գետին եզերքը. միակ փառավոր շենքն էր, իր հարակից սրճարանով, որ կհատկացվեր թատերական ներկայացումներու և ուրիշ հանդեսներու: Ահա այս շենքը վերածվեցավ ազգային վարժարանի, վարի սրահը վերապահվելով ներկայացումներու և հանդիսությանց: Շենքը այնքան շքեղ էր, որ կշարժեր օտարներու անգամ նախանձը:

Ահա այս ոգևոր շրջանին կհասներ Կոմիտաս, ավելի կրկնապատկելու համար ոգևորությունը հայ ժողովուրդին, որ վաղուց է կարոտը կբաշեր Կոմիտասին և իր երգերուն:

«Կուռնկա-ը, «Հով արեք»-ը, «Իմ շինարիյար»-ը և ուրիշ երգեր ժողովուրդին խանդավառության աղբյուր եղան ա՛լ, և բոլորը լեցուցին հայ ըլլալու հպարտությամբ: Կոմիտասը պատարագեց նաև, և քարոզեց «Ծս լոյս եկի աշխարհ» բնաբանով: Խոսեցավ այնքան ներշնչված, որ կարծես թե իր բերնին մեջ Շնորհալիներու շունչը կվերակենդանանար: Այսքան տարիներ հետո իր խոսքին հմայքին տակ կարծես թե դեռ կապրիմ, և անուշ նվագի մը պես դեռ կհնչե ականջիս «Ծս լոյս եկի աշխարհ»-ը:



Արդարև, լոյս մըն էր, որ աշխարհ եկավ և ինքը:

Մեր հոգիները դեռ պատրաստ չէին այդ լույսը ընդունելու համար: Ու մեր թշնամին այդ լույսը մարել ուզեց:

Չմարեցավ սակայն այդ աղվոր լույսը, ու հիմա ան կշողա մարդոց հոգիներուն մեջ:

(Շարունակելի)



Հ. Ս. ԵՂԻԱՋԱՐՅԱՆ

## ՍՊԻՏԱԿԱՎՈՐ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՎԱՆՔԸ՝ ԾԻ ՆՐԱ ՎԻՄԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սպիտակավոր Սուրբ Աստվածածնի վանքը գտնվում է Սոփետական Հայաստանի Եղեգնաձորի շրջանում, Վերնաշեն (Բաշքենդ) գյուղից մոտավորապես վեց կիլոմետր դեպի հյուսիս։ Վանքը տեղավորված է Թեքե-Դուրուրան լեռան հարավահայաց լանջին, մի փոքրիկ հարթակի վրա, որը երկու կողմերից եզերվում է լեռնային հեղեղատի ձորակներով, բարձրագույն ու գեղատեսիլ վայրում, որտեղից, դիտողի առջև բացվում է հիասքանչ տեսարան դեպի հարավ և հարավ-արևմուտք՝ դեպի Արփա գետի հովիտը։

Պատմական աղբյուրները ոչ մի հիշատակություն չեն պարունակում այդ վանքի մասին։ Նրա վրա փորագրված սակավաթիվ արձանագրություններն էլ գլխավորապես նվիրատվական են, ուստի չեն կարող որևէ շափով նյութ ծառայել նրա անցյալը պարզաբանելու համար։ Հետևաբար նրա անցյալը անհայտ է պատմությանը։

Արձանագրությունների մեջ վանքը կոչվում է Մեծ անապատ, Ս. Կարապետի անապատ, Անապատ և գերեզմանատեղի Ս. Գրիգորի, Սպիտակավոր Ս. Աստվածածնի անապատ անուններով։ Գրականության մեջ ավելի

գործածականն ու համահայտը Սպիտակավոր Ս. Աստվածածնի վանք անունն է։ Վանքի այդպիսի բարձրագույն անունները, ինչպես և նրա աշխարհագրական դիրքն ու նրա հուշարձանների կառուցողական շատ հետաքրքրական ու բնորոշ ձևերը վկայում են, որ նա միջնադարյան Հայաստանի նշանավոր մենաստաններից մեկը պետք է եղած լինի։

Դուրս այդ հանգամանքը ի նկատի ունենալով է, որ որոշ տեղագիրներ ու հնախույզներ ենթադրում են, որ Սպիտակավոր Ս. Աստվածածնի վանքը Գլաձորի հռչակավոր վանքը պետք է լինի։ Սակայն նման ենթադրությունը զուրկ է իրական հիմքերից։

Ինչդիրն այն է, որ ինչպես Սպիտակավոր Ս. Աստվածածնի վանքի, այնպես էլ Գլաձորի վանքի կառուցման ժամանակը ստույգ հայտնի չէ, անհայտ է նաև դրանց վերջնապատմությունը։ Դեռ ավելին, որոշ չէ նաև Գլաձորի վանքի գտնվելու ճիշտ տեղը։ Հայտնի է միայն այդ երկու վանքերի անունները և այն, որ դրանք երկուսն էլ գտնվում են Սյունյաց նահանգի Վաոց-ձոր գավառում։

Միջանկյալ կերպով նշենք, որ Գլաձորի վանքը Հայաստանի կրոնական և ուսումնա-



կրթական խոշոր կենտրոններից մեկն է եղել: Առավել հուշակված է եղել ԺԳ դարի կեսերից մինչև ԺԻ դարի կեսերը, հատկապես Ներսես Մշեցու (վախճանվել է 1284 թ.) և Նսայի Նշեցու (1284—1338) առաջնորդության ժամանակ, Գլաձորում գրված բազմաթիվ ձեռագրերի հիշատակարաններում՝ «Երկրորդ Աթենք» և մայրաքաղաք ամենայն իմաստնոց», «Մեծ դպրատուն» և այլ բարձր անուններով է կոչվել վանքը:

Եթե Սպիտակավոր Ս. Աստվածածնի վանքը կոչվել է Մեծ անապատ, Ս. Կարապետի անապատ, Անապատ և դերեղմանստեղի Ս. Գրիգորի, Սպիտակավոր Ս. Աստվածածնի անապատ անուններով, ինչպես այդ մասին նշված է նրա վրա փորագրված արձանագրություններում, ապա Գլաձորի վանքը կոչվել է Աղբերից վանք, մականվամբ Գլաձորի վանք, իսկ ոմանք էլ աղավաղված ձևով կոչել են Գալլաձորի վանք. «Բարձրագիտակ մենաստանիս Գլաձոր, որ յանհմուտ և գնչու արանց Գալլաձոր ասի»։ Միաժամանակ վանքի եկեղեցին մի շարք ձեռագրերի հիշատակարաններում կոչվում է Ստեփանոս Նախավկայի անունով:

Այդ բոլորին որպես ապացույց անհրաժեշտ ենք համարում մեջ բերել միայն երկու ձեռագրերի հիշատակարանների համապատասխան մասերը.

«Ի թիւս Զն: (1291). գրեցաւ մեկնութիւն Կաթողիկէիս ձեռամբ բաղմամեղ և սուտ անուն կրանաւորի Յոհանիսի՝ աշակերտի Բանի, ի մենաստանս որ կոչի Աղբերից վանս և մականուն Գլաձոր, ընդ հովանեաւ Սրբոյն Ստեփաննոսի. ի վարժապետութեան գիտական և արդիւնական մեծ հոգտորի յնսասու ղոր շնորհեսցէ ղսա մեզ տէր ընդերկայն աւուրս: Արդ՝ աղաչեմ զամենեանս որք հանդիպէնք այսմ մատենի՝ զթողութիւն խնդրեք ի Տեառնէ իմ»:

«... փառք եռանձնեայ և միոյ աստուածութեանն որ արժանացոյց զանարժանս՝ հասանել ի վերջին գիծ տառիս պիտոյից. ի թուականիս հայկազեան տոմարի. Զնէ (1298):

Արդ՝ գրեցաւ սա ի գաւառիս կոչեցեալ Վալոց ձոր, ի վանս Գլաձոր, ընդ Հովանեաւ սուրբ Նախավկայիս, ի վարժապետութեան նսայեայ առն հեղո և խաղաղարարի...»<sup>1</sup>:

Վերը շարադրածից միանգամայն պարզ է դառնում, որ Սպիտակավոր Ս. Աստվածածնի և Գլաձորի վանքերի անունները միանգամայն տարբեր են, հետևապես նրանք բոլորովին տարբեր վանքեր են:

<sup>1</sup> Զ. Ղ. Ալիյան. «Սիսական», Վենետիկ, 1893 թ., էջ 131:

Բացի դրանից, մատենագրական աղբյուրներում որոշակի կերպով նշվում է նաև Գլաձորի վանքի տեղը՝ Վարդան աշխարհադիրը Վալոց-ձոր գավառի վանքերի թվին է դասում նաև Գլաձորի վանքը, ասելով. «Գլալաձոր, ուր վարժարանն է, և աթոռ սուրբ վարդապետաց մերոց»։ Իսկ այդ նույն աշխարհացույցի ընդարձակության մեջ ճշտվում է նաև գավառի այն մասը, ուր գտնվում էր վանքը, այն է Գլալաձորն՝ ի սահմանս Եղեգեց ձորոյն<sup>2</sup>:

Ինչպես հայտնի է, Եղեգիս գետը և Եղեգիսի ձորը կամ Եղեղնաձորը, որոնք իրենց անունները ստացել են ձորի մեջ, դեռի աջ ափին գտնվող Եղեգիս գյուղաքաղաքի անունից, գտնվում էին Վալոց ձոր գավառի հյուսիսային մասում և գավառի հարավային մասից անջատված էին բարձր լեռնաշղթայով, ուր բարձրանում է այժմ Թեքե-Դուրուրան կոչվող գագաթը, որի հարավահայաց լանջին և գտնվում է Սպիտակավոր Ս. Աստվածածնի վանքը: Այդ հանգամանքը նույնպես մի ավելորդ անգամ ապացուցում է, որ Գլաձորի վանքը, որի տեղը մատնացույց է արվում Եղեգիսի ձորում և Սպիտակավոր Ս. Աստվածածնի վանքը, որը գտնվում է Եղեգիսի ձորի սահմաններից դուրս՝ միանշանակապես տարբեր վանքեր են:

Գլաձորի կամ Աղբերից վանքի տեղագրության մասին կան և ուրիշ կարծիքներ. Գլաձորի արքեպիսկոպոս Հովսեփյանը որոշակի կերպով այն հնում է վերնաշեն (Բաշքենդ) գյուղից դեպի հյուսիս, Բուրաբերդ ամրոցի արևելյան կողմում, մեջ բերելով նաև տեղանքի լուսանկարը<sup>3</sup>:

Իրոք, այդ ամրոցի արևելյան կողմում տարածվում են մի հին բնակավայրի հետքեր, սակայն այդ վայրը ոչ միայն դուրս է Եղեգիսի ձորի սահմաններից, ուր, ըստ պատմական աղբյուրների վկայության, պետք է գտնվելիս լինեի Աղբերից վանքը, այլ այդ վայրում չեն պահպանվել կառուցվածքների այնպիսի մնացորդներ, որոնք ականառ կերպով ցույց տալին, որ դրանք իրոք վերաբերում են մի նշանավոր մենաստանի:

Իսկապես, անհամոզիչ է, որ նման մի հուշակավոր ուսումնա-կրթական կենտրոն հանդիսացող հուշարձանը, ինչպիսին հանդիսացել է Գլաձորի վանքը, որը Ժճ դարում դեռ կանգուն և ամբողջական վիճակում է եղել, ավերված լինի այն աստիճանի, որ նրա

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 130.

<sup>3</sup> Գաբեգիճ աբխալիսկոպոս Հովսեփյան, «Խաղաղական կամ Պոռլանք հայոց պատմության մեջ», Հայպետհրատ, Վաղարշապատ, 1928 թ., էջ 37, 39:





Մպիտակավոր Ս. Աստվածածնի վանքը ընդհանուր տեսք

հետքերն անգամ պահպանված չլինեն գետնի երեսին: Մանավանդ, երբ այն համեմատում ենք նրա շրջակայքին շատ մոտիկ գտնվող մյուս վանքերի հետ:

Որոշ ուսումնասիրողներ էլ ենթադրում են, որ Թանահատի վանքը պետք է լինի Գլաձորի մենաստանը:

Բանասեր Գեղամ Սարգսյանը Պատմական հուշարձանների պահպանության կոմիտեում աշխատելու ժամանակ (այժմ հանգուցյալ), ուր նա կատարում էր Հանրապետական տեսչի պարտականություններ, Արգյաղ գյուղից դեպի Եղեգիսի ձորը գնալու ճանապարհին, Բուլաղլար կոչվող հանդամասում նկատում է հին կառուցվածքների մնացորդներ և, հիմք ընդունելով վայրի Բուլաղլար (աղբյուրներ) անունը, ենթադրում է, որ այդ ավերակ շենքերի մնացորդները պետք է վերաբերվեն Աղբերից վանքին:

Ինչպես տեսնում ենք, Գլաձորի վանքի տեղադրության մասին այդ բոլորը դեռ թեական են և վերջնականապես չեն լուծում խնդիրը: Միայն մանրազնին ու բազմակողմանի հնագիտական ուսումնասիրությունների շնորհիվ հնարավոր կլինի ճիշտ որոշել այդ կարևոր հուշարձանի վայրը:

Թե ե՛րբ է հիմնադրվել Մպիտակավոր Ս. Աստվածածնի վանքը և ովքե՛ր են եղել նրա կառուցողները, ստույգ հայտնի չէ: Սակայն հայտնի է միայն, որ այժմ վերնաշեն կոչվող գյուղը, որի սահմաններում է գտնվում Մպիտակավոր Ս. Աստվածածնի վանքը, հին Հայաստանի Սյունյաց նահանգի Վայոց-ձոր գավառի Սարկողովք նշանավոր գյուղն է, որն իր շրջակայքով ԺԳ դարի սկզբներին ժառանգություն է տրվում Պռոշյան իշխաններին: Պռոշյանները, ժառանգելով Վայոց-ձոր գավառի այդ մասը, Սարկողովքը դարձնում են իրենց նստավայրը, կառուցելով այնտեղ իշխանական ապարանք և եկեղեցի: Հավանական է, որ հենց այդ ժամանակ էլ նրանք հիմնած լինեն նաև Մպիտակավոր Ս. Աստվածածնի վանքը:

Մպիտակավոր Ս. Աստվածածնի վանքի հիմնադրման ժամանակի մասին նույն Գրեգին արքեպիսկոպոս Հովսեփյանը, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ եկեղեցու արևմտյան ճակատին փորագրված է 92 (1321) թվականը, իսկ հարավային ճակատին փորագրված արձանագրությունից պահպանված նրա վերջավորությունն մասը՝ 92 թվականը, հավանական է համարում, որ այդ



միևնույն տարեթվերը պետք է վերաբերվեն վանքի կառուցմանը<sup>4</sup>։

Սակայն մի շարք հանգամանքներ գալիս են ժխտելու այդ հավանականությունը։ Նախ հայտնի է, ինչպես այդ կտեսնենք հետո, որ վանքի զանգակատունը, որը գտնվում է գավթի արևմտյան կողմում, պատին կից, կառուցված է 1321 թվականին։ Որոշակի կերպով նկատվում է, որ զանգակատունը կառուցված է գավթի կառուցումից ավելի հետո, հարթելով ու հարմարեցնելով գավթի արևմտյան պատը։

Միանգամայն որոշակի է նաև այն, որ գավթի կառուցված է եկեղեցուց ավելի ուշ։ Այսպիսով պարզ է դառնում, որ զանգակատան կառուցման ժամանակ՝ այսինքն 1321 թվականից, վաղուց գոյություն ունեին գավթն ու եկեղեցին։

Բացի այդ, ամենից կարևորն է, որ եկեղեցու կառուցողական ձևերն ավելի բնորոշ են ԺԳ, քան թե ԺԴ դարին։

Սպիտակավոր Ս. Աստվածածնի վանքի հուշարձանների խումբը բաղկացած է մեկ եկեղեցուց, դավթից, զանգակատնից, գերեզմանատնից, որոնք շրջափակված են հատուկ պարսպապատերով (ճկ. 1)։ Վանքի շրջապատը հարուստ է վայրի մասրենու և վարդենու թփերով, որի պատճառով տեղացիները նրան Գյուլվանք են կոչում։ Վանքից ոչ հեռու, նրա արևմտա-հարավային կողմում, բխում է մի սառնորակ աղբյուր, իսկ քիչ դեպի արևելք գտնվում է Սյունյաց երկրի նշանավոր ամրոցներից մեկը՝ Բուրաբերդը կամ Պոռաբերդը։

Եկեղեցին, որ միջին մեծության մի շենք է, պատկանում է «գմբեթավոր սրահներ» տիպի կառուցվածքների շարքին։ Նրա ուղիղ քառանկյունի հատակագիծը ոչ այնքան երկարածիք է, որքան ավելի մոտ է քառակուսու, ուստի հիշեցնում է կենտրոնագմբեթ ձևը։

Արևելյան ծայրում մշակված է կիսակլոր արսիդը՝ ցածրիկ բեմով։ Կողերի պատերը ներսից ունեն մեկական ելուստներ, որոնք այնքան մոտ են արևմտյան պատին, որ այդ կողմի անկյուններում գոյացրել են խորն ընկած մեծ խորշեր՝ կամարակապ գագաթնեքով, որոնք պատած են շթաքարածե (ստալակտիտ) նուրբ քանդակներով։

Այս ելուստների ծայրերից, ինչպես և արևելյան արսիդի եզրերից, ձգվում են զլանած կիսասյուներ՝ գեղեցիկ ձևով մշակված խարխալներով ու խոյակներով, որոնք միանալով կամարներով, իրենց վրա են կրում



Սպիտակավոր Ս. Աստվածածնի վանք.— Եկեղեցու մուտքը

բարձրագույն դմբեր՝ կլոր թմբուկով և սրածայր վեղարով։

Միակ մուտքը արևմտյան կողմից է, կիսակլոր ճակատակալ քարով և գեղաքանդակ պարակալով։ Հուշարձանի յուրաքանչյուր ճակատից և դրանց համապատասխան գմբեթի թմբուկի շորս կողմերից բացվում են մեկուկան փոքր լուսամուտներ, ըստ որի ճակատներում բացված լուսամուտներն ունեն խաչաձև գեղեցիկ շրջանակներ, իսկ գմբեթի թմբուկի մեջ բացվող լուսամուտները՝ միայն պսակներ։

Հուշարձանի ներսի երեսապատը և կիսասյուները գորշագույն բազալտի սրբատաշ քարերից են, իսկ արտաքին երեսապատը կաթնա-դեղնավուն հանքաքարի մաքուր տաշված քարերից՝ կրաշաղախի միացությամբ։ Շենքը ներսից սալահատակված է։ Խանիքը նույնպես պատած է սալերով։

Հուշարձանը շքեղորեն զարդարված է բուսական ու երկրաչափական ձևերի զարդաքանդակներով և զանազան բարձրաքանդակներով, որոնք մշակված են վերին աստիճանի նուրբ ու գեղեցիկ ձևով։ Բաքի մուտքի ու լու-

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 117, 188։





Սպիտակավոր Ս. Աստվածածնի վանք.—  
զանգակատուն

սամուտների շրջանակների արևմտյան անկյունների մեծ խորշերի զագաթների զարդաքանդակներից, նույն ստալակտիտ քանդակներով է պատած նաև հյուսիսային պատի մեջ փորված մկրտության ավազանի զագաթը:

Հատկապես ուշադրության արժանի է եկեղեցու մուտքի ճակատակալ քարի վրա քանդակած բարձրաքանդակը, ուր պատկերված է Մարիամ Աստվածածինը՝ մանուկ Յիսուսը գրկին (նկ. 2): Ինչպես նաև արևելյան աբսիդի կոնխի վրայի Քրիստոսի ամբողջական բարձրաքանդակը, որի երկու կողմերում մակագրված է՝ «Իսուս Քրիստոս»:

Բնմի վրա եղած վեմքարի մի կողմի վրա քանդակված է մի մարդու բարձրաքանդակ՝ հոգևորականի հագուստով, ձեռքերը դեպի վեր մեկնած: Իսկ գմբեթի հիմքի կամարի վրա եղած հինգ սրբապատկեր բարձրաքանդակները, ուսանց կարծիքով պատկերված է Քրիստոսը և չորս ավետարանիչները, ուսանց կարծիքով էլ Հայր Աստվածը՝ հրեշտակների խմբով:

Խիստ հետաքրքրական և ուշագրավ է հյուսիսային պատի վրա եղած բարձրաքանդակը, ուր պատկերված է որսի տեսարան՝ մի ծն-

րունի և երկու երիտասարդներ զինված նետերով ու աղեղներով. երիտասարդներից մեկը հեծյալ է, որը նետն ուղղել է եղջերուի վրա: Այդ բարձրաքանդակի վերևում փորագրված է՝ «Ամիրհասան ադլի Պառլա»:

Դավիթը գտնվում է եկեղեցու արևմտյան կողմում՝ նրան կից: Սրա կառուցման ժամանակը նույնպես հայտնի չէ, սակայն նկատվում է, որ կառուցված պետք է լինի եկեղեցուց հետո, հավանաբար ԺԳ դարի երկրորդ կեսում: Գավիթն ավերակ վիճակում է՝ նրանից պահպանվել են միայն պարիսպները, որոնց վերին մասերից որոշ տեղեր նույնպես քանդված են, ուստի նրա կառուցման ճիշտ ձևերը պարզ չեն:

Բայց նրա պահպանված մասերից որոշակի կերպով պարզ է դառնում, որ նա ներսում չի ունեցել սյուներ և կիսասյուներ, ինչ որ հատուկ է գավիթներին: Բացի դրանից, ներսում, յուրաքանչյուր պատի մեջ դրված երկուական կալունակները ցույց են տալիս, որ շենքի թաղակապ ծածկը գոտկող խաչաձև ողկամարների ծայրերը հենվելիս են եղել այդ կալունակների վրա, իսկ ծածկի թաղի եզրերը նստելիս են եղել անմիջապես պատերի վրա, որոնք ներսի երեսների վրա, կալունակների միջև, ձգվում են նաև որմնակամարներ:

Չորս մուտքերից երկուսը բացվում են հյուսիսային պատի մեջ, իսկ մեկական հատ էլ հարավային և արևմտյան պատերի միջից: Ներսում, պատերի մեջ, մշակված են տարբեր մեծության մի քանի խորշեր՝ դարակների ձևով:

Կառուցողական նման ձևերը եզակի երևույթ են այդ կարգի կառուցվածքների շարքում, ուստի մեծ հետաքրքրություն են ներկայացնում հայ ճարտարապետության պատմության տեսանկյունից:

Ամբողջ շենքը շարված է դեղնագույն հանքաքարի մաքուր տաշված փոքր քարերով՝ կրաշաղախի միացությամբ:

Չանգակատունը գտնվում է գավթի արևմտյան կողմում՝ կից, և կազմում է համարյա նրա մի մասը: Կառուցել են տվել Հովհաննես և Թաճևա ամուսինները 1321 թվականին: Սա եռահարկ ձևով կառուցված մի շենք է, որն ավելի նման է հաղթական կամարի կամ մահարձանի, քան թե զանգակատան (նկ. 3):

Ստորին հարկը շարված է անմշակ մեծ քարերով, իսկ մյուս հարկերը՝ մաքուր տաշված քարերով՝ կրաշաղախով միաձուլված: Երկրորդ հարկի մեջ, արևմտյան կողմից մշակված է կամարակապ մեծ խորշ՝ խորանի նմանությամբ, իսկ ամենավերին՝ երրորդ հարկը կամարակապ լայն բացվածքի ձևով



է՝ երկթեք տանիքով, պատած սալաքարերով ու քիվերով:

Պարսպապատերը շատ բարձր են ու լայն և շարված են տարբեր մեծության անմշակ քարերով՝ հողաշաղախի միացությամբ:

Պարսպի ներսում պահպանվել են վանքի միաբանության բնակելի շենքերը՝ բազմաթիվ կացարաններով, որոնք շատ փոքր են և, որոնց պատերի ստորին մասերն են պահպանվել՝ շարված գետաքարերով, հողաշաղախի միացությամբ:

Վանքի շուրջը, պարսպի ներսում նկատելի են մի շարք գերեզմաններ, որոնց տապանաքարերը թաղված են գեանի մեջ և մասամբ ծածկված հողով:

#### ՎԻՄԱԿԻՐ ԱՐՁԱՆԱԿՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սպիտակավոր Ս. Աստվածածնի վանքի վրա փորագրված արձանագրությունները մեծ թիվ չեն կազմում, սակայն նրանք մեծ մասամբ գրված են բարդ փակագրերով, ուստի որքան դժվար ընթերցանակելի են, նույնքան և դժվար վերծանելի:

Ա. Եկեղեցու արևմտյան պատի վրա, արտաքուստ, մուտքի հարավային կողմում.

1. Կամսին Աստուծոյ ես Պարսամ Արեղայ Մի-
2. արանեցա Սուրբ անապատիս զկալիորաց փոսն
3. Այգի տնկեցի՝ յանուն Սուրբ Աստուածածնիս
4. Եւ Սուրբ վիրածնայ գրով տվի յիշատակ՝ ինձ և
5. Իմոցն. միաբանք սահմանեցին: Բ: Ժամ յամէն
6. Աստուածածնի [տանին]. հակառակն գալտին և Զկայեն-
7. Ին առցէ: Թվ: ԶԶ: (1331):

Բ. Նույն արևմտյան պատի արտաքին երեսի վրա.

1. Զպարոն
2. Խոնտ-
3. Արն յի-
4. Շեցէք
5. Ի Քրիստոս:
6. Թվ. ՊԶԲ (1433):

Գ. Նույն տեղում, նախորդներից ներքև.

1. Ես Մկրտիչս զիմ հոգոյ բ-
2. Ածին տվի Սուրբ Աստուածածնես, սւգա-սանոր-
3. Ք՝ Մկրտիչն [և] միաբանք ի պատա-
4. րագն զիս ու զիմն յիշեն. Թվ: ԶԼԵ: (1346):

Դ. Նույն տեղում, մուտքի հյուսիսային կողմում.

1. Զփիրիկն և Զեիեկ-

2. Կունն յիշեցէք ի Տէր:

Ե. Նույն տեղում, նախորդի հյուսիսային կողմում՝ կից.

1. Զգաւազանս և զգու-
2. յինա յիշեցէք ի Քրիստոս. Թվիս: ՊՂէ: (1448)

Զ. Նույն եկեղեցու ներսում, հյուսիսային պատի վրա.

1. Կամսին Աստուծոյ ես էաչի, որդի պարոն Հասանա տվի նորակնունն Սուրբ
2. Աստուածածնես և Սուրբ Անապատիս ի Հարութեան Դրիգոր Եզնատրի գտանծի հող իւր .Գ. համովն՝ վերի ու
3. Ներքի Եանապարհովն, .Բ. ձորամիջովն ու զհարաք տոչորնագն զհանդաի միջովն ու Եերքին ար-
4. Խումիջովն, բերդի ձորովն տվաք հանգ ու սահման վախմ՝ մեզ ու մեր պատրոնաց հոգո
5. Բաժին: Միաբանքս գրեցին ամեն տարի .Գ. պատարագ ի փոխման Աստուածածնի. հակառակագն մասն ու բաժին զՅու-
6. դաի [և] Զկայենի առցէ. Թվ. ԶԶԱ. (1322):

Է. Նույն տեղում, նախորդից վերև.

Կամսին Աստուծոյ ես տիրացու երիցու աւաք և Խուշոյ որդիս տվաք .Զ.:

Ը. Նույն տեղում, նախորդից վերև.

1. Յուսով նորածնին ես Բուրէս Զառաւտկ-
  2. անց այգին որն հալ[սւ] զնուածք էր տվի
  2. Յանապատն Սպիտակատր Աստուածածնես իմ
  4. Հոգոյ բաժին՝ ի ձեռն Սուրբ Հաւր Մկ[րտ]չին
  5. Եւ Սուրբ Հայ[րս]ն. և միաբանքս գրեցին փո-
  6. խման Աստուածածնին :Բ: Պատարագ.
  7. Ի թվիս: ԶԶԹ: (1340) յամէն խարհէ ա-գատ. հսկ-
  8. առակն զատի Յաստուծոյ:
- Թ. Նույն տեղում, նախորդից վերև
1. Յուսով նորածնին ես Ամիրհասան՝ որդի
  2. էաչո [և] ես Բուրազար Զտֆարէ մեր հարեն-
  3. Եացն ի խոտորսւլէզ գնախա զպատառն Զ-
  4. չահենեց այգին, գԴավթեց այգ-
  5. այտեզին կէսն տվաք Սուրբ Անապատիս՝ ի Դրի-
  6. գորին զերեզմանիս՝ ի ձեռս հաւր Մկրտը-յին՝
  7. Մեծ յուսով յիշատակ մեզ և նախն-
  8. Եացն մերոց. Սուրբ հայրս և միաբանքս
  9. Կարգեցին տարեն :Դ: Աւր պատարագ
  10. Աւագ :Ե: Շաբթի Զատիկ:

Ժ. Նույն հյուսիսային պատի վրա, խորշի արևմտյան կողմում.

1. Կամսին Աստուծոյ ես Սմբատ՝ որդի

2. Լիպարտի միաբանեցա Աւ-
3. ազ Անապատիս Սուրբ Կար-
4. ապետիս և Սպիտակաւ-
5. որ Աստուածածնիս և տվիվ զ-
6. Վախճանկենց այգին
7. Իւր ամեն հատաւն զծա-
8. ռետունկ՝ որ հանապազ զ-
9. Մեզ ի պատարագն յիշեն: Հակա-
10. ռակն և խափանողն դատի Յաստուծոյ  
և
11. Անեծֆ առցէ: Յամենայն իարհէ ա-
12. զատ. թվ.: ԶԶԸ: (1339):

ԺԱ. Դարձյալ եկեղեցու ներսում, արև-  
մտյան պատի վրա՝ մուտքի հյուսիսային  
կողմում.

1. Կամաւն Աստուծոյ եւ Մարգարէ
2. Վարդապետս և հարազատ եղբայր իմ  
Գրիգոր
3. Եւ կին իւր շնորհավոր տվաք
4. Ընծա Աստուածածնիս զթան-
5. երի հողն ու զջրհատին ու
6. զՄուսկանց պատաւն ու զթե-
7. դուտն որն մեր զնուածֆ էր՝
8. Որ զմեզ ի պատարաքն յիշեն:

ԺԲ. Զանգակատան վրա.

1. Թվ. ԶԶ. Կամաւն բարերարին
2. Աստուծոյ, եւ Յովհաննէս և Կենա-
3. Կից իմ Թաճնայ շինեցաք զգան-
4. Կակատունս...







Ա. Խ. ՍԱՖՐԱՍՏՅԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ  
ԹՈՒՐԹԻԱՅԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՎԱՆԱՆՔՆԵՐԻ  
ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ  
ԵՎ ՎԱՆՔԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐՆ ՈՒ ԹԱՔՐԻՐՆԵՐԸ\*

### ՏՐԱՊԻԶՈՆԻ ՎԻՂԱՅԵԹ

ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ  
ԳՐԱՍԵՆՑԱԿԻ ՕՐԻՆԱԿԸ

| Գրասեն-<br>յակի ՆՁ-ը | Կարգի<br>ՆՁ-ը | Խնչի* մասին<br>է գրված | Բովանդակության<br>համառոտագիրը | Կազմողը | Պետը | Սկզբուն-<br>թյան<br>թվականը | Մաքրա-<br>գրության<br>թվականը |
|----------------------|---------------|------------------------|--------------------------------|---------|------|-----------------------------|-------------------------------|
| 1375<br>1375         | 2059          |                        |                                |         |      | 1331 թ.<br>ապրիլի<br>24     | 1331 թ.<br>ապրիլի<br>24       |

Արդարադատության և դավանանքների  
մինիստրության

Տրապիզոնի վիլայեթում և նրան հարա-  
կից շրջաններում գտնվող և կայսերական  
հրամանով հաստատված երեք եկեղեցիների  
ցուցակը, կայսերական հրամանների թվա-

կանները, ինչպես նաև կայսերական հրա-  
մանով չհաստատված 60 եկեղեցիների ցու-  
ցակը, նրանց վայրերը և կառուցման թվա-  
կանները ցուցնող ցուցակը երկու օրինակով  
սրա հետ ներկայացվում է և խնդրվում, հա-  
մաձայն օրենքի, այդ մասին հարկ եղած  
կարգադրությունը:

### ՏՐԱՊԻԶՈՆ

Ֆերմանով՝ 3:

Առանց ֆերմանի՝ 60:

Կցված է 1331 թ. ապրիլ 14-ի № 2059 թաքրիքին:

Ֆերմանի թ. Կառուցման թ.

1. Տրապիզոն քաղաքում Ս. Ստեփանոս ե-  
կեղեցին, 1318 թ.:

\* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1985 թվա-  
կանի № Ա-ից, Բ-Գ-Դ-ից և Ե-Ձ-է-ից:

2. Տրապիզոն քաղաքում Ս. Աստվածածին  
եկեղեցին, 1230 թ.:

3. Տրապիզոն քաղաքում Ս. Հովհաննես ե-  
կեղեցին, 1211 թ.:

4. Տրապիզոն քաղաքում Ս. Փրկիչ եկեղե-  
ցին, 841 թ.:

5. Տրապիզոնի վիլայեթի Սեֆանոս գյու-  
ղում Ս. Թադեոս եկեղեցին, 1281 թ.:

6. Տրապիզոնի վիլայեթի Ղրոմիլա գյու-  
ղում Ս. Փրկիչ եկեղեցին, 1291 թ.:

7. Տրապիղունի վիլայեթի էսկաֆիա գյուղում Ս. Լուսավորիչ եկեղեցին, 1250 թ.:
8. Տրապիղունի վիլայեթի Կալֆակա գյուղում Ս. Լուսավորիչ եկեղեցին, 1256 թ.:
9. Տրապիղունի վիլայեթի Կալֆակա գյուղում Ս. Գևորգ եկեղեցին, 1251 թ.:
10. Տրապիղունի վիլայեթի Քան գյուղում Փիլիպպոս եկեղեցու ֆերմանը, 1087 թ. ջեմադի-ուլ-էվվել:
11. Տրապիղունի վիլայեթի Կալֆակա գյուղում Ս. Պողոս եկեղեցին, 1256 թ.:
12. Տրապիղունի վիլայեթի Շանա գյուղում Ս. Սարգիս եկեղեցին, 1205 թ.:
13. Տրապիղունի վիլայեթի Շանա գյուղում Ս. Գևորգ եկեղեցին, հնուց:
14. Տրապիղունի վիլայեթի Փոքր Սամարոքսայ գյուղում Ս. Թեոթորոս եկեղեցին, 1268 թ.:
15. Տրապիղունի վիլայեթի Սյուրմենե կաղաում Ս. Լուսավորիչ եկեղեցին, 1281 թ.:
16. Տրապիղունի վիլայեթի Սյուրմենե կաղաում Ս. Թորոս եկեղեցին, հնուց:
17. Տրապիղունի վիլայեթի Սյուրմենե կաղաում Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց:
18. Տրապիղունի վիլայեթի Աբյան գյուղում Ս. Լուսավորիչ եկեղեցին, 1281 թ.:
19. Տրապիղունի վիլայեթի Վրանա գյուղում Ս. Սարգիս եկեղեցին, 1277 թ.:
20. Տրապիղունի վիլայեթի Վրանա գյուղում Ս. Լուսավորիչ եկեղեցին, 1296 թ.:
21. Տրապիղունի վիլայեթի Իշաքսա գյուղում Ս. Գևորգ եկեղեցին, 1286 թ.:
22. Տրապիղունի վիլայեթի Նուխոզանա գյուղում Ս. Հովհաննես եկեղեցին, 1274 թ.:
23. Տրապիղունի վիլայեթի Անիֆա գյուղում Ս. Լուսավորիչ եկեղեցին, 1286 թ.:
24. Տրապիղունի վիլայեթի Ղիրուբի գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1274 թ.:
25. Տրապիղունի վիլայեթի Մալա գյուղում Ս. Գևորգ եկեղեցին, հնուց:
26. Տրապիղունի վիլայեթի Աղրո գյուղում Ս. Լուսավորիչ եկեղեցին, 1306 թ.:
27. Տրապիղունի վիլայեթի Քիսնեյ գյուղում Ս. Հարություն եկեղեցին, հնուց:
28. Տրապիղունի վիլայեթի Քերան գյուղում Ս. Սարգիս եկեղեցին, 1306 թ.:
29. Տրապիղունի վիլայեթի Սալաֆոր գյուղում Ս. Ստեփանոս եկեղեցին, 1274 թ.:
30. Տրապիղունի վիլայեթի Այլանոզ գյուղում Ս. Գևորգ եկեղեցին, 1320 թ.:
31. Տրապիղունի վիլայեթի Ղաբայոն գյուղում Ս. Մեսրոպ եկեղեցին, 1327 թ.:
32. Տրապիղունի վիլայեթի Կառուցման թ. Լաղանա գյուղում Ս. Լուսավորիչ եկեղեցին, 1291 թ.:
33. Տրապիղունի վիլայեթի Փլաթանա գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1281 թ.:
34. Տրապիղունի վիլայեթի Սթարյե գյուղում Ս. Կարապետ եկեղեցին, հնուց:
35. Տրապիղունի վիլայեթի Արղալիո գյուղում Ս. Հարություն եկեղեցին, 1279 թ.:
36. Տրապիղունի վիլայեթի Գյումուշխանա սանջաքում Ս. Աստվածածին եկեղեցին, 1269 թ.:
37. Տրապիղունի վիլայեթի Գյումուշխանա սանջաքում Ս. Փրկիչ եկեղեցին, 1116 թ.:
38. Տրապիղունի վիլայեթի Ուլու-Շիրան գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1261 թ.:
39. Տրապիղունի վիլայեթի Ուլու-Շիրան գյուղում Ս. Սարգիս եկեղեցին, 1251 թ.:
40. Տրապիղունի վիլայեթի էլեի գյուղում Ս. Լուսավորիչ եկեղեցին, 1291 թ.:
41. Տրապիղունի վիլայեթի Թիրերուլի գյուղում Ս. Լուսավորիչ եկեղեցին, 1251 թ.:
42. Տրապիղունի վիլայեթի Օրգու կաղաում Ս. Միսաք եկեղեցին, 1265 թ.:
43. Տրապիղունի վիլայեթի Զամրաշի գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1290 թ.:
44. Տրապիղունի վիլայեթի Կուշքի-Ուրեն գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1200 թ.:
45. Տրապիղունի վիլայեթի Քիրաղ-դերե գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1280 թ.:
46. Տրապիղունի վիլայեթի Ալաջա-Դոմ գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1278 թ.:
47. Տրապիղունի վիլայեթի Բալթան գյուղում Ս. Կարապետ եկեղեցին, 1287 թ.:
48. Տրապիղունի վիլայեթի Սարաշի գյուղում Ս. Լուսավորիչ եկեղեցին, 1285 թ.:
49. Տրապիղունի վիլայեթի Քյուքներե գյուղում Ս. Խաչ եկեղեցին, 1250 թ.:
50. Տրապիղունի վիլայեթի Սայալա գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1250 թ.:
51. Տրապիղունի վիլայեթի Թեփե գյուղում Ս. Լուսավորիչ եկեղեցին, 1245 թ.:
52. Տրապիղունի վիլայեթի Զավաշլար գյուղում Ս. Լուսավորիչ եկեղեցին, 1245 թ.:
53. Տրապիղունի վիլայեթի Մասե-քըրք գյուղում Ս. Թագետոս եկեղեցին, 1300 թ.:
54. Տրապիղունի վիլայեթի Դաշ-Աջաք գյուղում Ս. Լուսավորիչ եկեղեցին, 1256 թ.:
55. Տրապիղունի վիլայեթի Կարշու-աղըզ գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1270 թ.:
56. Տրապիղունի վիլայեթի Զաթաք գյուղում Ս. Կարապետ եկեղեցին, 1300 թ.:



57. Տրապիղոնի վիլայեթի Ուզուն-Մահմուդ գյուղում Ս. Լուսավորիչ եկեղեցին, 1294 թ.:
58. Տրապիղոնի վիլայեթի Քորաք գյուղում Ս. Հակոբ եկեղեցին, 1284 թ.:
59. Տրապիղոնի վիլայեթի Կաթրր գյուղում Ս. Մինաս եկեղեցին, 1284 թ.:
60. Տրապիղոնի վիլայեթի Քաղջի-Ուրեն գյուղում Ս. Հակոբ եկեղեցին, 1294 թ.:

61. Տրապիղոնի վիլայեթի Դարբքա-Սաչլար գյուղում Ս. Սահափանոս եկեղեցին, 1292 թ.:
62. Տրապիղոնի վիլայեթի Խոջա-Օղլու գյուղում Ս. Թորոս եկեղեցին, 1284 թ.:
63. Տրապիղոնի վիլայեթի Կըրմա գյուղում Ս. Գևորգ եկեղեցին, 1300 թ.:

**ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ  
ԳՐԱՍԵՆՑԱԿԻ ՕՐԻՆԱԿ**

| Գրասեն-<br>յակի Ա-ը | Կարգի<br>Ա-ը | Ինչի՞ մասին<br>է գրված | Բովանդակության<br>համառոտագիրը | Կադմոգր | Պեսա | Սկզբուն-<br>թյան<br>թվականը | Մաքրա-<br>գրության<br>թվականը |
|---------------------|--------------|------------------------|--------------------------------|---------|------|-----------------------------|-------------------------------|
| 1311                | 2067         |                        |                                |         |      | 1330 թ.<br>մայիսի<br>6      | նույնը                        |

Արդարադատության և դավանանքների  
բարձր միեմիստության

Տրապիղոնի վիլայեթի Կիրասունի կազա-  
յում և նույն կազային կից Բուլանջըք նահի-  
յեում գտնվող և կայսերական հրամանով

չհաստատված երեք եկեղեցիների վայրերն  
ու անունները, ինչպես նաև նրանց կառուց-  
ման թվականները ցուցնող ներկա ցուցակը  
մեկ օրինակով սրա հետ ներկայացվում է և  
խնդրվում բարձր միեմիստության կարգա-  
դրությունն այդ մասին:

**Կ Ի Ր Ա Ս Ո Ն**

Առանց ֆերմանի՝ 3.

Կցված է 2067 և 1331 թ. մայիս 6-ի № 2067 թաքրիբին:

Կառուցման թ.

1. Տրապիղոնի վիլայեթի Կիրասունի կա-  
զայի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին,  
1269 թ.:

2. Տրապիղոնի վիլայեթի Կիրասունի կա-  
զայի Ս. Սարգիս եկեղեցին, հնուց:
3. Տրապիղոնի վիլայեթի Բուլանջըք նահի-  
յեում Ս. Նիկողայոս եկեղեցին, հնուց:

**ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ  
ԳՐԱՍԵՆՑԱԿԻ ՕՐԻՆԱԿ**

| Գրասեն-<br>յակի Ա-ը | Կարգի<br>Ա-ը | Ինչի՞ մասին<br>է գրված | Բովանդակության<br>համառոտագիրը | Կադմոգր | Պեսա | Սկզբուն-<br>թյան<br>թվականը | Մաքրա-<br>գրության<br>թվականը |
|---------------------|--------------|------------------------|--------------------------------|---------|------|-----------------------------|-------------------------------|
| 388                 | 2001         |                        |                                |         |      | 1330 թ.<br>փետրվարի<br>17   | նույնը                        |

Արդարադատության և դավանանքների  
բարձր միեմիստության

Ջանիկի սանջաքի և Բաֆրայի, Ֆաթսայի,  
Թիրմեի, Չհարշան Բայի և Ունիայի կազա-  
ներում և նրանց հարակից գյուղերում  
գտնվող և կայսերական հրամանով հաս-  
տատված հինգ եկեղեցիների անունները և

կայսերական հրամանի թվականները, ինչ-  
պես նաև կայսերական հրաման չունեցող  
38 եկեղեցիների վայրերը, անունները և  
նրանց կառուցման թվականները ցուցնող  
երկու օրինակ ցուցակները սրան կից ներ-  
կայացվում է և խնդրվում, համաձայն օրեն-  
քի, հարկ եղած կարգադրությունը:

## Զ Ա Ն Ի Կ

N 386

Ֆերմանով՝ 5:

Առանց ֆերմանի՝ 38:

Կցված է 1330 թ. փետրվար 17-ի № 2001 թաքրերին:

## Ֆերմանի թ. Կառուցման թ.

1. Սամսոնում գտնվող Ս. Լուսավորիչ եկեղեցին, 1321 թ. զիւգադե:
2. Ջանիկի սանջաքի Կավաթ նահիյեյում Ս. Աստվածածին եկեղեցին, 1320 թ.:
3. Ջանիկի սանջաքի Բաֆրայի կաղայում Ս. Կարապետ եկեղեցին, 1260 թ. ռեբի-նու-էվվելի 15-ին:
4. Ջանիկի սանջաքի Ֆաթսայի սանջաքում Ա. Աստվածածին եկեղեցին, 1290 թ.:
5. Ջանիկի սանջաքի Ֆաթսայի կաղայի Չուքուբուք գյուղում Ս. Հակոբ եկեղեցին, 1280 թ.:
6. Ջանիկի սանջաքի Կայա-Արտի գյուղում Ս. Կարապետ եկեղեցին, 1230 թ.:
7. Ջանիկի սանջաքի Թերմե կաղայում Ս. Համբարձում եկեղեցին, 1306 թ. ջեմա-դի-նու-էվվելի 5-ին:
8. Ջանիկի սանջաքի Թերմե կաղայում Կա-ջեման-բաշի գյուղում Ս. Հակոբ եկեղեցին, 1277 թ.:
9. Ջանիկի սանջաքի Թերմե կաղայում Ա-լեմտաղի գյուղում Ս. Գևորգ եկեղեցին, 1235 թ.:
10. Ջանիկի սանջաքի Թերմե կաղայում Սու-լիջե գյուղում Ս. Նշան եկեղեցին, 1294 թ.:
11. Ջանիկի սանջաքի Չհարչամբա կաղայում Ս. Աստվածածին եկեղեցին, 1271 թ.:
12. Ջանիկի սանջաքի Խափաթ գյուղում Ս. Մինաս եկեղեցին, 1240 թ.:
13. Ջանիկի սանջաքի Չհարչամբա կաղա-յում Օրթաօյմաթ գյուղում Ս. Կարապետ եկեղեցին, 1280 թ.:
14. Ջանիկի սանջաքի Չհարչամբա կաղա-յում Էրինջաթ գյուղում Ս. Խաչ եկեղեցին, 1287 թ.:
15. Ջանիկի սանջաքի Չհարչամբա կաղա-յում Քըլբըլի գյուղում Ս. Լուսավորիչ եկեղեցին, 1302 թ.:
16. Ջանիկի սանջաքի Չհարչամբա կաղա-յում Մարթեի գյուղում Ս. Հակոբ եկեղեցին, 1242 թ.:
17. Ջանիկի սանջաքի Չհարչամբա կաղա-յում Թեքվարի գյուղում Ս. Աստվածա-ծին եկեղեցին, 1279 թ.:
18. Ջանիկի սանջաքի Չհարչամբա կաղա-յում Թախթալը գյուղում Ս. Երեման Խաչ եկեղեցին, 1295 թ.:

19. Ջանիկի սանջաքի Չհարչամբա կաղա-յում Օտեիրեի գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1289 թ.:
20. Ջանիկի սանջաքի Չհարչամբա կաղա-յում Կոնաքլը գյուղում Ս. Լուսավորիչ եկեղեցին, 1266 թ.:
21. Ջանիկի սանջաքի Չհարչամբա կաղա-յում Կաթալակ գյուղում Ս. Կաթողիկոս եկեղեցին, 1275 թ.:
22. Ջանիկի սանջաքի Չհարչամբա կաղա-յում Կուրչունլու գյուղում Ս. Գևորգ եկեղեցին, 1230 թ.:
23. Ջանիկի սանջաքի Չհարչամբա կաղա-յում Աղլաջ գյուղում Ս. Հակոբ եկեղեցին, 1282 թ.:
24. Ջանիկի սանջաքի Չհարչամբա կաղա-յում Կաթաջնի գյուղում Ս. Կարապետ եկեղեցին, 1265 թ.:
25. Ջանիկի սանջաքի Չհարչամբա կաղա-յում Էյրի-դերե գյուղում Ս. Երրորդու-թյուն եկեղեցին, 1284 թ.:
26. Ջանիկի սանջաքի Չհարչամբա կաղա-յում Օլունփար գյուղում Ս. Աստվածա-ծին եկեղեցին, 1281 թ.:
27. Ջանիկի սանջաքի Չհարչամբա կաղա-յում Կյոքչեքոյ գյուղում Ս. Աստվածա-ծին եկեղեցին, 1280 թ.:
28. Ջանիկի սանջաքի Չհարչամբա կաղա-յում Աղջագյունի գյուղում Ս. Լուսավո-րիչ եկեղեցին, 1280 թ.:
29. Ջանիկի սանջաքի Չհարչամբա կաղա-յում Չեջմե-սու գյուղում Ս. Խաչ եկեղեցին, 1260 թ.:
30. Ջանիկի սանջաքի Չհարչամբա կաղա-յում Դաշլըղլը գյուղում Ս. Սարգիս եկեղեցին, 1299 թ.:
31. Ջանիկի սանջաքի Ունիայի կաղայում Դաշլըղլը գյուղում Ս. Մինաս եկեղեցին, հնուց:
32. Ջանիկի սանջաքի Ունիայի կաղայում Յուղ-փինար գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1292 թ.:
33. Ջանիկի սանջաքի Ունիայի կաղայում Քյոքլը գյուղում Ս. Կարապետ եկեղեցին, 1280 թ.:
34. Ջանիկի սանջաքի Ունիայի կաղայում Էթնջիթ գյուղում Ս. Կարապետ եկեղեցին, 1293 թ.:
35. Ջանիկի սանջաքի Ունիայի կաղայում Փլիթ-յաթաթ գյուղում Ս. Խաչ եկեղեցին, 1293 թ.:
36. Ջանիկի սանջաքի Ունիայի կաղայում Քեփրիջիթ գյուղում Ս. Գևորգ եկեղեցին, 1293 թ.:



37. Ջանիկի սանջաքի Ունիայի կաղալում Յադ-Բասան գյուղում Ս. Հակոբ եկեղեցին, 1230 թ.:
38. Ջանիկի սանջաքի Ունիայի կաղալում Բալլըք գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1210 թ.:
39. Ջանիկի սանջաքի Ունիայի կաղալում Քիլաս գյուղում Ս. Գեորգ եկեղեցին, 1292 թ.:
40. Ջանիկի սանջաքի Ունիայի կաղալում Յոֆյաղ գյուղում Ս. Լուսավորիչ եկեղեցին, 1246 թ.:

41. Ջանիկի սանջաքի Ունիայի կաղալում Թեք-Կիրաչ գյուղում Ս. Խաչ եկեղեցին, 1316 թ.:
42. Ջանիկի սանջաքի Ունիայի կաղալում Քողբուք գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1316 թ.:
43. Ջանիկի սանջաքի Ունիայի կաղալում Կարաման գյուղում Ս. Լուսավորիչ եկեղեցին, 1238 թ.:

ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ  
ԳՐԱՍԵՆՑԱԿԻ ՕՐԻՆԱԿԸ

| Գրասեն-<br>յակի Ն-ը | Կարգի<br>Ն-ը | Ինչի՝ մասին<br>է գրված | Բովանդակության<br>համառոտագիրը | Կազմողը | Պետը | Սկզբուն-<br>թյան<br>թվականը | Մաքրա-<br>գրության<br>թվականը |
|---------------------|--------------|------------------------|--------------------------------|---------|------|-----------------------------|-------------------------------|
| 1624                | 3071         |                        |                                |         |      | 1331 թ.<br>մայիսի<br>19     | նույնը                        |

Արդարադատության և դավանանքների  
միևնույնության

1336 թ. փետրվար 17-ի Ն 2001 գրության հավել-  
ված է:

Ջանիկի սանջաքի Ունիա, Չհարշամբա և  
Թեյմէ կաղաններում գտնվող և կայսերական

հրամանով չհաստատված չորս եկեղեցիներ  
ին վերաբերյալ սույն ցուցակը սրա հետ  
ներկայացվում է և խնդրվում այդ մասին  
հարկ եղած կարգադրություններ:

Ջ Ա Ն Ի Կ

№ 1624

Առանց ֆերմանի՝ 4:

Կառուցման թ.

1. Ջանիկի սանջաքի Ունիայի կաղալում Ս. Մինաս եկեղեցին, 1250 թ.:
2. Ջանիկի սանջաքի Չհարշամբա կաղա-  
լում Քեսթանի Քերիչ գյուղում Ս. Կա-  
րապետ եկեղեցին, 1276 թ.:

3. Ջանիկի սանջաքի Թերմե կաղալում Քո-  
շաման-բաշի գյուղում Ս. Եղիա եկեղե-  
ցին, 1325 թ.:

4. Ջանիկի սանջաքի Թերմե կաղալում Հոյ-  
լայի գյուղում Ս. Երրորդություն եկեղե-  
ցին, 1324 թ.:

Կցված է 1370 թ. մայիս 19-ի Ն 2081 թաքրերին:

Ա Ն Կ Ա Ր Ա

ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ  
ԳՐԱՍԵՆՑԱԿԻ ՕՐԻՆԱԿԸ

| Գրասեն-<br>յակի Ն-ը | Կարգի<br>Ն-ը | Ինչի՝ մասին<br>է գրված | Բովանդակության<br>համառոտագիրը | Կազմողը | Պետը | Սկզբուն-<br>թյան<br>թվականը | Մաքրա-<br>գրության<br>թվականը |
|---------------------|--------------|------------------------|--------------------------------|---------|------|-----------------------------|-------------------------------|
| 189                 | 3024         |                        |                                |         |      | 1331 թ.<br>մարտի<br>3       | 1331 թ.<br>մարտի<br>3         |

Արդարադատության և դավանանքների  
միևնույնության

Անկարայի վիլայեթի Չորումի կաղալում  
գտնվող Ս. Գեորգ եկեղեցին 1275 թ. մու-

հարեմի կեսին տրված կայսերական հրա-  
մանով հաստատված է հիշյալ վիլայեթի  
Յողդատի սանջաքում, ինչպես նաև Բողազ-  
լիյանի և Ակտաղ-Մատենի կաղաններում և

ներանց հարակից գյուղերում գտնվող կայսերական հրամանով հաստատված 10 եկեղեցիների անուններն ու կայսերական հրամանի թվականները, նաև կայսերական հրամանով չհաստատված 34 եկեղեցիների վայրերը,

անունները և կառուցման թվականները ցուցնող երկու օրինակ ցուցակը սրա հետ ներկայացվում է և խնդրվում, համաձայն կանոնի, անհրաժեշտ կարգադրությունները,

### Յ Ո Ղ Ա Տ

№ 789

Ֆերմանով՝ 11.

Առանց ֆերմանի՝ 34.

Կցված է 3 մարտ 1331 թ. № 2024 թաքերին:

1. Յոզղադի կաղալում Ս. Աստվածածին եկեղեցին, 1246 թ. ջեմադի-ուլ-էվլաի կեսին:

Ֆերմանի թ. Կառուցման թ.

2. Յոզղադի կաղալում Ս. Երրորդություն եկեղեցին, 1265 թ.:

3. Յոզղադի սանջաքի Կըզըլ-կոջա նահիյեի կից Սարայի գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1261 թ. շեվվալի վերջին:

4. Յոզղադի սանջաքի Բողազլիյան կաղալում Ս. Աստվածածին եկեղեցին, 1290 թ. սեֆերի 7:

5. Յոզղադի սանջաքի Բողազլիյան կաղալում Ս. Մինաս եկեղեցին, հնուց:

6. Յոզղադի սանջաքի Բողազլիյան կաղալում Քերուն-կըշլա գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1273 թ. զիլգադեի սկզբին:

7. Յոզղադի սանջաքի Բողազլիյան կաղալում Քերուն-կըշլա գյուղում Ս. Թորոս եկեղեցին, 1245 թ.:

8. Յոզղադի սանջաքի Բողազլիյան կաղալում Գյուլլեր գյուղում Օրթա-մահալլա գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց:

9. Յոզղադի սանջաքի Բողազլիյան կաղալում Գյուլլեր գյուղում Աշադի թաղում Ս. Թորոս եկեղեցին, հնուց:

10. Յոզղադի սանջաքի Բողազլիյան կաղալում Ուզունլի գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1255 թ. շաբանի վերջին:

11. Յոզղադի սանջաքի Բողազլիյան կաղալում Չաքմաք գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց:

12. Յոզղադի սանջաքի Բողազլիյան կաղալում Էթենջի գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց:

13. Յոզղադի սանջաքի Բողազլիյան կաղալում Քորտեն գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց:

14. Յոզղադի սանջաքի Բողազլիյան կաղալում Կում-Կափու գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց:

15. Յոզղադի սանջաքի Բողազլիյան կաղալում Կարա-Հալլի գյուղում Ս. Հակոբ եկեղեցին, հնուց:

16. Յոզղադի սանջաքի Բողազլիյան կաղալում Չաթի-քերի գյուղում Ս. Թորոս եկեղեցին, հնուց:

17. Յոզղադի սանջաքի Բողազլիյան կաղալում Չաթի-սադիր գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց:

18. Յոզղադի սանջաքի Բողազլիյան կաղալում Օրենջ գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց:

19. Յոզղադի սանջաքի Բողազլիյան կաղալում Քյուրքջի գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց:

20. Յոզղադի սանջաքի Բողազլիյան կաղալում Ռումետիկին գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց:

21. Յոզղադի սանջաքի Բողազլիյան կաղալում Մենթեզա գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց:

22. Յոզղադի սանջաքի Բողազլիյան կաղալում Քելվերան գյուղում Ս. Գևորգ եկեղեցին, 1326 թ.:

23. Յոզղադի սանջաքի Բողազլիյան կաղալում Մելիզ գյուղում Ս. Հարություն եկեղեցին, 1328 թ.:

24. Յոզղադի սանջաքի Բողազլիյան կաղալում Աք-Չաթաք գյուղում Ս. Հակոբ եկեղեցին, 1282 թ.:

25. Յոզղադի սանջաքի Բողազլիյան կաղալում Ֆաբրալու գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1290 թ.:

26. Յոզղադի սանջաքի Բողազլիյան կաղալում Կյուվեջլի գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին (համաձայն հեռագրական պատասխանի) 1327 թ. զիլգադե:

27. Յոզղադի սանջաքի Բողազլիյան կաղալում Էյգելի գյուղում Ս. Փրկիչ եկեղեցին (համաձայն հեռագրական պատասխանի), 1331 թ. ոսթի-ուլ-էվլաի:

28. Յոզղադի սանջաքի Բողազլիյան կաղալում Չոքրադան-չիֆթլիքի գյուղում Ս. Թորոս եկեղեցին, 1261 թ. ջեվվալի կեսին:

29. Յոզղադի սանջաքի Աքդաղ-Մադենի կաղալի Կարա-Ցակուր գյուղում Ս. Հակոբ եկեղեցին, 1261 թ. ջեվվալի կեսին:



30. Յոզղադի սանջաքի Աքդաղ-Մադենի կա-  
զայի Թերդիլի գյուղում Ս. Թորոս եկե-  
ղեցին, հնուց:
31. Յոզղադի սանջաքի Աքդաղ-Մադենի կա-  
զայի Բեբեկ գյուղում Ս. Աստվածածին  
եկեղեցին, հնուց:
32. Յոզղադի սանջաքի Աքդաղ-Մադենի  
գյուղում Ս. Թորոս եկեղեցին, հնուց:
33. Յոզղադի սանջաքի Աքդաղ-Մադենի կա-  
զայում Դեյի-Համզի գյուղում Ս. Նիկո-  
ղայոս եկեղեցին, 1262 թ.:
34. Յոզղադի սանջաքի Աքդաղ-Մադենի կա-  
զայում Կարա-չայի գյուղում Ս. Աստ-  
վածածին եկեղեցին, 1246 թ.:
35. Յոզղադի սանջաքի Սուրկոնի նահիյայի  
կից Քյոհնե-բեբեկ գյուղում Ս. Հակոբ  
եկեղեցին, հնուց:
36. Յոզղադի սանջաքի Սուրկոնի նահիյայի  
կից Դաշլի-բիլի գյուղում Ս. Գևորգ ե-  
կեղեցին, 1284 թ.:
37. Յոզղադի սանջաքի Սուրկոնի նահիյայի  
կից Սարի-Հեմզե գյուղում Ս. Աստվա-  
ծածին եկեղեցին, 1277 թ. սեֆեր:
38. Յոզղադի սանջաքի Սուրկոնի նահիյայի  
կից Կյոհնե-բեբեկ գյուղում Ս. Աստվածա-  
ծին եկեղեցին, 1267 թ.:
- Սանթրաքյուն.— Տե՛ս Յոզղադի առաջնոր-  
դարանի 17 մարտ 1331 թ. հեռագրեր, 998:
39. Յոզղադի սանջաքի Կրզըլ-կոչա նահիյե-  
յի կից Կետիլեր գյուղում Ս. Գևորգ ե-  
կեղեցին, հնուց:
40. Յոզղադի սանջաքի Կրզըլ-կոչա նահիյե-  
յի կից Սազլի գյուղում Ս. Աստվածա-  
ծին եկեղեցին, հնուց:
41. Յոզղադի սանջաքի Կրզըլ-կոչա նահիյե-  
յի կից Սաաթլի գյուղում Ս. Աստվա-  
ծածին եկեղեցին, 1216 թ.:
42. Յոզղադի սանջաքի Կրզըլ-կոչա նահիյե-  
յի կից Կարաբիք գյուղում Ս. Լուսա-  
վորիչ եկեղեցին, հնուց:
43. Յոզղադի սանջաքի Կրզըլ-կոչա նահիյե-  
յի կից Ինչիրլի գյուղում Ս. Աստվա-  
ծածին եկեղեցին, 1200 թ.:
44. Յոզղադի սանջաքի Կրզըլ-կոչա նահիյե-  
յի կից Միֆար-Օղլի գյուղում Ս. Աստ-  
վածածին եկեղեցին, հնուց:

## Ա Ն Կ Ա Ր Ա

ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ  
ԳՐԱՍՆՆԵԱԿԻ ՕՐԻՆԱԿԸ

| Գրասեն-<br>յակի Ձև-ը | Կարգի<br>Ձև-ը | Ինչի՞ մասին<br>է գրված | Բովանդակության<br>համառոտագիրը | Կազմողը | Գնալը | Սկզբնա-<br>թյան<br>թվականը | Մաքրա-<br>դրության<br>թվականը |
|----------------------|---------------|------------------------|--------------------------------|---------|-------|----------------------------|-------------------------------|
| 1301                 | 2053          |                        |                                |         |       | 1331 թ.<br>ապրիլի<br>11    | 1330 թ.<br>ապրիլի<br>11       |

Արդարադատության և դավանանքների  
միևնույնության

Անկարայի վիլայեթում Ասթանոս նահիյե-  
յում Գրքլար անունով հայտնի եկեղեցին  
1141 թ. Ղիլհիջեի վերջին և հիշյալ նահիյեյի  
սահմաններից դուրս գտնվող հայկական  
եկեղեցին 1251 թ. ութի-ուլ-էվլիլի սկզբի

Ֆերմաններով հաստատված են, Հիշյալ վի-  
լայեթի սահմաններում գտնվող և կայսերա-  
կան ֆերմանով չհաստատված 5 եկեղեցի-  
ների վայրերը, անունները և կառուցման  
թվականները ցուցնող ցուցակը մեկ օրինա-  
կով սրա հետ ներկայացվում է և խնդրվում,  
համաձայն կանոնի, անհրաժեշտ կարգա-  
գրությունն անել:

## Ա Ն Ի Ս Ր Ա

Ֆերմանով՝ 2:

Առանց ֆերմանի՝ 5:

Կցված է 16 ապրիլ 1330 թ. № 2053 թաքիթին:

Ֆերմանի թ. կառուցման թ.

1. Անկարայի կաղայի Հիսար-Օղնիայի  
թաղում հայոց եկեղեցին, հնուց:
2. Անկարայի կաղայի Կուրեն թաղում Ս.  
Սարգիս եկեղեցին, հնուց:
3. Անկարայի կաղայի Մեհրաբյարի թաղում  
Ս. Նշան եկեղեցին, հնուց:

4. Անկարայի կաղայից կես ժամ հեռավո-  
րության վրա Ինչիրլիք անունով (վանք)  
վայրում Ս. Մարիամ վանքում հայոց  
եկեղեցին, հնուց:
5. Անկարայի վիլայեթում Սիվրի-Հիսարի  
կաղայում Ս. Երրորդության եկեղեցին,  
1290 թ.:

(Շաբուհեյի)





Ա. ՄԱՏԹԵՈՍՅԱՆ

## ԼԻՄ ԱՆԱՊԱՏԻ ԳՐԶՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ ԺԳ-ԺԵ ԴԱՐԵՐՈՒՄ

Լիմը վաճառ լճի կղզիներից ամենամեծն է: Նա ընկած է լճի հյուսիս-արևելյան կողմում, արևելյան ափից մեկ ու կես կիլոմետր հեռավորության վրա: Ըստ «Աշխարհացոյց»-ի, նա մտնում է Արեւրան գավառի մեջ<sup>1</sup>: Կղզու 7 կմ. երկարությամբ և մոտ երկու կմ. լայնությամբ հարթ մակերեսի մեծ մասն զբաղեցրել են վարելահողերը, արոտավայրերը և այգիները, որոնց մշակմամբ զբաղվում էին կղզե-բնակները: Լիմն էլ, վաճառ լճի մյուս կղզիների՝ Աղթամարի և Կտուցի նման ապաստարան է եղել շրջակայքի բնակչության, որոնք պնդելով գտնում էին ոչ միայն ապահովություն՝ հաճախակի հալածանքներից, այլև սնունդ: Այդ է պատճառը, որ մեր գրիչները «Ծովահայեաց անապատ» Լիմը կոչում են նաև «ամառիկ՝ ամուրն Լիմն», «ամառիկ կղզին Լիմն կոչեցեալ», «կղզի վայելույշ», «հոշակաւոր մեծանտառ»: Լիմ կղզին այդ անպատակին է ծառայել հնագույն ժամանակներից, ինչպես ցույց է տալիս անվան ստուգաբանությունը. «Լիմ» կամ «Լիմն» հունարեն նշանակում է «ապաստարան», «անավազանք»<sup>2</sup>:

Կղզու վանքի կառուցման մասին հնագույն վկայությունը Ջաքարիա Ա Աղթամարցի կաթողիկոսի 1305 թվականի Կտակագիրն է, ուր նա ընծայաց ուխտատեղին թողնելով Լիմ անապատին «իրեն հիւրանոց», ավելացնում է. «որպէս յառաջագոյն ի մեծն Ներսէս սրբազան հայրապետէն հաստատեալ կայր»<sup>3</sup>: Նշանակում է Լիմում միաբանություն կար դեռևս Դ դարում: Հովհաննէս վրդ. Հյուսիսը Լիմի Ա. Աստուածածին և Ա. Կարապետ վանքերը, ըստ պատմության կոնդակներու», համարում է Գրիգոր

Լուսավորչի կողմից հիմնադրված<sup>4</sup>: Սակայն Ս. Գէորգ տաճարի վերակառուցման մասին ավելի որոշակի և հանգամանակից տեղեկություններ ունենք, որ հաղորդում են մեր գրիչները, և հաստատվում է կաթողիկոսական Կտակագրով:

Լիմ կղզու արևելյան ծայրում քարձրանում է սպիտակ, սրբատաշ քարերով կառուցված Ս. Գէորգ զորավարի տաճարը, որը հիմքից վերանորոգել է Աղթամարի Ջաքարիա Սեֆեդիյան Ա. կաթողիկոսը ԺԴ դարի սկզբներին:

Ջաքարիա Սեֆեդիյանը Աղթամարի կաթողիկոս դառնալուց հետո (1298—1338) աշխատում է ամրապնդել իրեն եմթական թեմերը, միավորել, կարգի բերել միաբանությունները, խրախուսել գրչության արվեստը:

<sup>1</sup> Յովհաննէս վրդ. Հիւսեան, «Համառոտ նկարագրութիւն Վասպուրականի մէջ եղած մի քանի նշանաւոր վանքերուն, որոնք մինչև 1915 թուին չէն և միաբանական վանքեր էին...», էջ 1ա—1բ (Մատենադարան, Անտիպ ձեռագրացոյցակներ, 92), Այստեղ Հովհ. վրդ. Հյուսիսը ձեռագրերից վկայութիւններ է բերում ապացուցելու համար Լիմի ծաղկումը այդ ժամանակ, որոնք, սակայն. հավաստի չեն: Այսպես, Ջա էջում գրում է, որ 1303 թվականին ընդօրինակված մի մեկնութիւն սեփն թուականն է 79 = 644 թ. և Այդ ձեռագիրը, որն իսկապես Լիմի կնիք ունի վրան և այնտեղից է բերված, և Մատենադարանում կրում է 5343 համարը, այդպիսի հին թվական չունի: Երկրորդ վկայութիւնը (նույն էջում) հիշատակարան է մի սաղմոսարանի՝ 1573 թվականին գրված, որ մեղ մոտ չէ, բայց նկարագրված է Ե. Լալայանի «Ժողովրդական Վասպուրականի» Ա պրակում, 5 համարի տակ (սյունակ 27—30), Այստեղ էլ՝ առաջին թուականն է ԲՃՀԴ=825 թ., որ «Ժողովրդական»-ում չենք գտնում: Բացի այս, ինչպես առաջինում, այնպես էլ այստեղ գրչութիւն վայրերը անհայտ են: Եթե այդքան հին թվական էլ ունենային, միևնույն է Լիմին չեն վերաբերվում:

<sup>2</sup> «Արեւրանի (գավառը) Բշնունեաց ծովից արեւելք է, որտեղ գտնվում են Ջաատան և Լիմ կղզիները...», — Ս. Տ. Երեմյան, «Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 109:

<sup>3</sup> Հ. Հ. Ոսկեան, «Վասպուրականի Վանի վանքերը», Վիեննա, 1940 թ., գիրք Ա, էջ 4:

<sup>4</sup> Տե՛ս հոդվածի վերջում «Հավելված»-ը, էջ 55:



Այլթամարի կաթողիկոսության իրավասության տակ գտնվող վանքերից շատերն ավերված էին, միաբնակությունները քայքայված: Այնպիսիքների և ծանր էր նաև Լիմ անապատի վիճակը, որ մոնղոլական ամիրայապետները «աւերեալ, քակտեալ և ամայի դարձրած էին»<sup>5</sup> Լիմն ու նրան պատկանող կալվածները: Բացի այդ, ինչպես ևրեում է Աբրահամ գրչի մի վկայությունից, անհաճախությունն ու անախորժություններն են եղել ուխտի մարտում և միայն Հովհաննիսը, «ի յառաջնորդութեան իւրում», խաղաղացրել և հանգիստ է շնորհել միաբաններին<sup>6</sup>: Իսկ խաչատուր գրիչը հետագայում հիշելով Լիմի մի քանի կրոնավորների, հարկ է համարում նշել, որ «միայնակ են և միակոյն, հանդերձ ծնողիւք»<sup>7</sup>:

Հովհաննես Եպիսկոպոսի (որն Արծրունի էր և կաթողիկոսի ազգակիցը, որի կողմից էլ Լիմի առաջնորդ էր նշանակվել) աջակցությամբ, Ջաքարիան ձեռնամուխ է լինում Լիմ անապատի վերանորոգման աշխատանքներին: Դանիել Աղթամարցի գրիչը, որ Ջաքարիա կաթողիկոսի պատվերով Լիմի համար 1806 թվականին ընդօրինակում է Սարգիս Ծնորմալու «Մեկնութիւն Կաթողիկոսայց թղթոց»-ը, գրում է, որ Ջաքարիան «վերստին ի հիմանէ հաստակաւոյց շինութեամբ արձանացոյց», Լիմի տաճարը: «Ջոր բազում ծախիւք և աշխատութեամբ բերեալ զգնիւք քարանց սորա ի վերայ մկանանց անդնդահոս ծովուն, ի յերկրէն Քաջբերունեաց, ի մեծ լեռնէն, որ կոչի Քաջաց կայանք»<sup>8</sup>: Թովմա Արծրունու «Պատմութեան» շարունակողը, որ, ինչպես ենթադրվում է՝ նույն Դանիելն է, այդ մասին հիշում է, որ տաճարը շինելուց հետո, Ջաքարիան «բազում սպասիւք զարդարեաց և տուն աղօթից շինեաց և շտեղիս բնակութեան և դարպասս և բազում կրօնաւորս կարգեաց և հաստատեաց ի դուռն Սուրբ Գեորգայ զօրավարին տաճարին»<sup>9</sup>:

Ծինարարական այս աշխատանքները ավարտելուց, տաճարը կահավորելուց հետո, Ջաքարիան անապատին է վերադարձնում այն բոլոր գյուղերն ու կալվածները, վանքերն ու մարգագետինները, «որ հաստատեալ կային ի նախնեաց անտի Լիմ անապատին», ապա մասամբ գնում, մասամբ էլ սեփական հողերից՝ նվիրում է Լիմին, հաստատում է նրանց սահմանները, գրել և վավերացնել է տալիս Կալվածագիրը: Ջաքարիա կաթողիկոսը կալվածագրի համառոտ բովանդակությունը փորագրել է տալիս Ս. Գեորգ տաճարի որմին, իսկ ընդարձակը՝ գրում տաճարին նվիրված մի Մաշտոցի կողին, որը 1810 թվականի Աբրահամ գրչի ընդօրինակած Մաշտու-

ցից Լ մեզ հայտնի: Այս արձեքավոր փաստաթուղթը, որպես հավելված, բերում ենք ամբողջությամբ, Օ. Բարալամյանի միջնորդությամբ<sup>10</sup>, որն համեմատել ենք Ղ. Փիրղալեմյանի ընդօրինակության հետ<sup>11</sup>:

Ինչպես ևրևում է հետագա հիշատակարաններից, անապատը բարեկարգվելուց և հանգստություն ստանալուց հետո, բավականին մեծ տնտեսություն ունի, որի կառավարման մեջ ընդգրկված էին բազմաթիվ մեծ և փոքր պաշտոնյաներ: Այստեղ միաբանները զբաղվում էին նաև մատյանները ընդօրինակելով և անապատը հարստացնում էր սեփական գրիչների արտագրած և ձեռք բերված գրչագրերով:

Սինչև այս ժամանակները, կղզու մասին համարյա տեղեկություններ չկան մեր մատենագիրների մոտ: Այն բացակայում է նաև ձևագիր հիշատակարաններում: Միայն Մատենադարանի № 8711 ձեռագիրը, որը ժ. Դ դարում Հակոբ Երզնկացի գրչի և ծաղկողի ընկօրինակած Ավետարանն է, հիշատակություններ է պարունակում, որոնք, ինչպես կարծում են բանասերները<sup>12</sup>, գաղափար օրինակից են գալիս: Մատթեոսի Ավետարանից առաջ, ցանկերից հետո, կարդում ենք. «Գրի ձեռամբ Գրիգորի վարդապետին Քաջբերունոյ. ի թվին ԳՃԼԳ (884), Տրե ամսոյ Է (7), ի սուրբ անապատին Լմայ, ի սկիզբն Աւետարանիս ի յանուն Սքանչելագործին»<sup>13</sup>: Հիշատակություն կա նաև 92ա էջում՝ «Մեղապարտ գրիչ Գրիգոր վարդապետ Քաջբերունոյ, թվին ԳՃԼԳ (884), Տրե ամսոյ Ի (20)», իսկ 159բ էջում ավելի ընդարձակ ու բովանդակալից հիշատակագրություն կա, որտեղ Գրիգորը «Մաշկևոր» է կոչվում և այն գրված է «ի թվին մերում ԳՃԼԳ (884), Քաղոց ամսոյ Ժ (10), ի ամուն Սրբոյն Սքանչելագործ վանիցն»: Որ Երզնկացի Հակոբի ընդօրինակության նախագաղափարը հին է եղել, ապացուցում է գրչի անհանգստությունը. «... Զի յոյժ տագնապիմ յուղղոյն գիտ վասն արինակի»<sup>14</sup>:

Գրիգորի Ավետարանը ավարտված է Լիմ անապատում: Սքանչելագործ վանքում եղել է նրա սկիզբը<sup>15</sup>:

Այս վկայությունը Լիմ անապատը դարձնում է վասպուրականի մշակութային ու կենտրոններից մեկը, որի ակունքները հասնում են մինչև ինքնորոգ դարը, իսկ Ավետարանը դառնում է վասպուրականում կատարված Արդյունների վարքի թարգմանու-

<sup>10</sup> Մատենադարան, ձեռ. 6333, էջ 100—101:

<sup>11</sup> Մատենադարան, ձեռ. 4515, էջ 62—64:

<sup>12</sup> Մ. Մովսիսյան, «Արարատ», 1910 թ., էջ 623, Ն. Ուրեղ, «Պատմական ուսումնասիրություններ», 1948 թ., էջ 91, Զ. Ն. Ոսկան, «Հանդես ամսօրեայ» 1941, էջ 94—95, Գաբրիել Ա. Կարողիկոս, «Ցիլա-տակարանը ձեռագրաց», Ա, էջ 82:

<sup>13</sup> Մատենադարան, ձեռ. 3711, էջ 10բ:

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 6բ:

<sup>15</sup> Արդյոք Սքանչելագործը Արծկեի վանքն է, որ հենում իրաչխավոր էր կոչվում:

<sup>5</sup> Տե՛ս «Հավելված», էջ 55:

<sup>6</sup> Լ. Եպիսկոպ. «Ժ. Դ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Երևան, 1950, էջ 68:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 260:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 40:

<sup>9</sup> Թովմայի վարդապետի Ա. Ժ. Ժ. Ժ. «Պատմութիւն տան Արծրունեաց», Ս. Պետրոսյան, 1887, էջ 322:

թյան, կյուրեղ Երուսաղեմացու աշխատության, Մյքե թագուհու Ավետարանի և այլ ձեռագրերի ժամանակակից:

Այնուհետև մինչև ԺԴ դարը Լիմի համար սկսվում է անհայտության երկարատև մի շրջան: Նույնիսկ այդ և հաջորդ դարում Լիմ անապատի մասին տեղեկությունները սակավ են, այնչինչ մեզ հասած մի քանի ձեռագրերի հիշատակարաններից երևում է, որ այնտեղ պատկանելի միաբանություն է եղել այդ ժամանակ. գրչության արդյունավոր մշակներ, որոնք գիշեր և ցերեկ մատյաններ էին բազմացնում: Առեղծվածը լուծում է մի հիշատակագրություն, ըստ որի 1588 թվականին Լիմի գրիչների դարավոր վատակը դառնում է արի, ջրի ու հրո ճարակ: Ահա թե ի՞նչ է պատմում Լիմում 1810 թվականին ընդօրինակած Մաշտոցի հետագա փրկող և վերստին Ս. Գեորգիմ Ավիրող աղթամարցի խղիթը:

«Ի թուականս հայոց ԶԶԷ (1588) ի թագաւորութեան Հռովմայ (Օսմանցոյ)»<sup>16</sup> ի տեղակալութիւն Աղթամարայ Ահմադ բէկին յուղարկեաց զոմն Ազաւ Աղասի անուն մարտի Լիմ կոչեցեալ կղզին, վասն թաւալ (թնդանօթ) ի քարի բերելոյ ի կղզիս Աղթամար: Եւ շատ գրեանք էր եղեալ ի տաճարն Ս. Գեորգայ<sup>17</sup>, վասն տեղեաց տաճար միաբանակեցոցն: Եւ քանզի տիրէր վաճառք բերդն վատանում մի Գոգչայ սուլթան, զի կեղեքելով մեղէր զվան և զԱմուկ, զԱրճէշ և զՄահմտանք հարկս առնելով և պահանջելով, և քանզի չուներ միաբանութիւն ի հետ Հոռոմաց (Տաճկաց) և հետ Ահմադ բէկին, յուղարկեաց զօրսն իւր յերկիրն Ռշտունեաց, որ գերի արար սպանանելով և աւերեալ տարան ի վան, և զաղէտս զաղաղակս և զկոծս, ո՞ր կարէ պատմել կամ ընդ գրով արկանել. այս ամենայն վրդովմունք եղև և դեռ զգրեանսն եղեալ էին յեկեղեցին (Լմայ) և տեսեալ (զօրացն Գոգչայ բէկին) «չաստածային գրեանս՝ թաւանեցին և գերեցին և շատ գիրք այրեցին և ձգեցին ի ծովն: Զսուրբ գիրս, որ կոչի Մաշտոց, բերեալ ի կղզիս Աղթամար, զոր տեսեալ աստուածապաշտ և բարեպաշտ խղիթ... ազատեաց զսա յանօրինաց և դարձոյց անդին և ետ ընծայ և մուր ի դուռն Ս. Գեորգայ զարավարին Լմայ...»<sup>18</sup>:

Այլևս զարմանալի չէ, թե ո՞ր եմ մնացել Լիմում ընդօրինակված և այնտեղ հավաքված հարյուրավոր գրչագրերը:

Գրչագրերի բացակայության պատճառով անորոշության մեջ է մնում գրչության այդ կենտրոնի պատմությունը մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում: Սակայն օգտագործելով մեր ձեռքի տակ եղած նյութերը, փորձենք հետևել Լիմի գրչության կենտրոնի պատմությանը:

Ե. Լալայանի «Վասպուրականի հայերէն ձեռագրաց ցուցակ»-ի չհրատարակված մասում, որի խիստ համառոտ արտագրությունն ունենք ձեռքի տակ<sup>19</sup>, № 452-ը 1282—1801 թ. թ. Լիմում խաչիկ և Մովսէս գրիչների ընդօրինակած մատյանն է, որն իր մեջ պարունակում է երեք՝ «Գործք» (առաքելոց), Կաթողիկէքն և Յովհ[աննու] Աւետարան»-ը, տարբեր ժամանակներում կատարված ընդօրինակություններ:

Մյուս գրչագիրը Աստուածատուր քահանայի համար խաչատուր արեղայի (որը, գուցե մույն խաչիկն է) ընդօրինակած մի Ավետարան է, գրված արդեն տասնչորսերորդ դարում. «...յամի 27 (1801): Գրեցաւ սա յանապատիս, ի կղզիս, որ կոչի Լիմ, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին և Սուրբ Կարապետի, և Սուրբ Գեորգայ զարավարի, և ի հայրապետութեան Հայոց աստուածահաճոյ և արքանունդ հայրապետին Տէր Զաքարիայի և յառաւորդութեան սուրբ ուխտիս պատուական եպիսկոպոսին՝ Տէր Յովանն: Զեռագիրը մեզ չի հասել: «Հայքայված, մի մասը փտած և մեջտեղներից թերթերը ընկած» վիճակում է նկարագրված Ե. Լալայանի վերոհիշյալ ցուցակում<sup>20</sup>: Հիշատակարանում նշված վերջին երկու անձնավորությունների՝ Զաքարիա կաթողիկոսի և Յովհաննե եպիսկոպոսի հետագա գործունեության հետ է կապված Լիմ անապատի մշակութային կյանքի աշխուժացումը: Նրանք էլ եղել են գրչության արվեստի զարգացման հովանավորներն ու ջատագովները:

Խաչատուրի մյուս ընդօրինակությունը, արդեն Լիմի վերանորոգված տաճարում է կատարված: Այն 1808 թվականին տաճարներ Գելուկի խնդրանքով ընդօրինակված Ավետարանն է<sup>21</sup>, որը բարեբախտաբար մեզ է հասել և պատկերացում է տալիս խաչատուրի գրչության մասին: Ավետարանը դեղնավուն թղթի վրա, սև թանաքով, խոշոր, ոչ համաչափ, փոքր թեքությամբ բոլորագիր մի մատյան է, որի տառերը գրված են ճշումով արված տողերի վրա և սկսվում են ձախից փոքրիկ մագազնիկներով: Բառացատումը, ինչպես և տողադարձը, պատահական են: «Զ» նախդիրը տողավերջում թողնելիս գրում է լավող «ը»-ն, բայց երբեմն նախդիրից հետո, երբեմն՝ առաջ, այսպես՝ «ըզ» կամ «զը»:

Պատվով են գրված միայն տերուհական բառերը: Օգտագործված են կետադրական բոլոր նշանները. միայն վերջակետը դրվում է բառի վերջին տառից վերև, երկու փոքրիկ թեք գծերի ձևով: Ավետարանիչների նկարների<sup>22</sup> համար գծված երկգիծ շրջանակներում գրված է նրանց մասին, բայց նկարներ

<sup>19</sup> Մատենադարանի անտիպ ձեռագրաց ցուցակներ, № 8, էջ 1ա, 2բ:

<sup>20</sup> Ե. Լալայան, «Ծուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի», Թիֆլիս, 1915 թ., էջ 139:

<sup>21</sup> Մատենադարան, ձեռ. 3767:

<sup>22</sup> Զեռագրում Մատթեոսի նկարը, ինչպես և հաջորդ երեք թերթերը, հետագայում կատարված աշխատանք են:

<sup>16</sup> Փակագծերում եղած բացատրությունները հիշատակարանն ընդօրինակող Բարադամյանին են:

<sup>17</sup> Այս և հաջորդ բառերի ընդգծումները մերն են:

<sup>18</sup> Մատենադարան, ձեռ. 6333, էջ 101—102:

<sup>19</sup> Մատենադարան, ձեռ. 9027, էջ 51ա:



չկան: Կիսախորանների հյուսված տերևների միջից իրար են մայում հուշկապարիկները: Լուսանքի երկարությամբ ձգված են բուսական լուսանցազարդերը: Առաջին բառը սկսվում է անվարժ թռչնագրով, և ապա էջը լրացվում երկգույն երկաթագրով: Լուսանցազարդերը կրկնագիծ շրջանագծեր են, երբեմն տերևներով հյուսված:

Ձեռագիրը սրբագրված է երկրորդ անձնավորության կողմից: Հիշատակարանում պատմական դեպքերի ոչ մի ակնարկություն չկա: Լիմի տաճարի վերանորոգման մասին խաչատուրը ոչինչ չի ասում, բացի «նորակալմ» անականից: Մինչդեռ Աղթամարի Դանիել գրիչը հիշում է մի խաչիկ կրոնավորի, որն «չոյժ և բազում աշխատանք կրեաց յաղագս շինութեան սուրբ եկեղեցւոյն Լմայ»<sup>23</sup>, և այդ, անշուշտ, խաչատուր գրիչն էր, որ խուսափել է իր գործի մասին գրելուց: Թերևս նույն անձն է նաև 1306 թ. Աքրահամ գրչի պատվիրատուն<sup>24</sup>:

Խաչատուր գրչին վերջին անգամ հանդիպում ենք 1333 թվականին, Լիմում Ահարոն կրոնավորի համար Ավետարան ընդօրինակելիս, որտեղ նա հիշվում է որպես եպիսկոպոս<sup>25</sup>: Ակներևաբար ուխտի առաջնորդ Հովհաննես եպիսկոպոսի մահից հետո խաչատուրը փոխարինել է նրան, բայց շարունակել է նաև գրչությանը զբաղվել:

Մոտավորապես նույնպիսի ժառանգություն է հասել մեզ Լիմի մյուս գրչից՝ Աքրահամից. երկու ձեռագրի հիշատակարան և մի ձեռագիր, որը Մատենադարանում № 192 համարն է կրում: Այս ձեռագիրը, որ ընդօրինակված է 1315 թվականին Թադեոս կրոնավորի պատվերով՝ Աստուածաշնչից մասեր է: Միայնում, միջին մեծության տառերով, վարժ գրչությամբ գրված մատյան է, տառերը սվելի կանոնավոր են, հավաք և իրար հավասար: Բառերն անջատված են միմյանցից: Պատվով գրված տերևական բառերին ավելացել է «թիւն» վերջածանցի պատվագրությունը, կիրառվում են կետադրության բոլոր նշանները, ինչպես խաչատուրի մոտ, միայն այստեղ վերջակետը արդեն տողի վրա է մատնվում: Գրչագրում կան կիսախորաններ՝ ճաշակով արված և նույնքան ճաշակով զարդագրեր: Ձեռագիրը նույնպես սրբագրված է ուրիշի կողմից:

Այս ձեռագիրը գրելիս Աքրահամ գրիչն արդեն զառամյալ ծերունի էր, բավական երկար կյանք էր անցկացրել կարիքի և հալածանքների մեջ: Գրիչն անտարբեր չէ իր շրջապատում կատարվող իրսուողությունների նկատմամբ, ցավով է արձանագրում անօրենների գործած անարդարությունները:

1306 թվականին խաչատուր քահանայի համար ընդօրինակված գրչագրի հիշատակարանում հիշելով Ջաքարիա կաթողիկոսին գրում է «... որ զհավատս

Հայոց նոր զնեաց ի յանալեւն առաջնորդաց, և յեկեղեցիքս ազատեաց Աստուծոյ տեսչութեամբն և ձեռուք իւրովք», իսկ ձեռագրի թվականը գրելիս ավելացնում է. «... ի դառն և ի վշտաբեր ժամանակիս, յորում ամի և ըստ մեղաց մերոյ այս ամենայն հարկապահանջութիւն եկն ի վերայ մեր...»<sup>26</sup>:

Գրիչն ակնարկում է Ուլջեստու (Խուդաբանտս) խանի (1304—1316) քրիստոնյաների նկատմամբ վարած քաղաքականությունը, որով կամենում էր Հայաստանում և Վրաստանում քրիստոնյաներին հավատափոխ անել: Նրան այդ բանը չի հաջողվում, և ինչպես երևում է գրչի վկայությունից, այդ գործում մեծ ծառայություններ ունեւ Ջաքարիա կաթողիկոսը, որը «զհաւատս Հայոց նոր զնեաց»: Դրանից հետո խանը փոխում է քաղաքականությունը և ծանր հարկադրության է ենթարկում ժողովրդին: Աքրահամ գրչի վկայությամբ, այդ տեղի է ունենում 1306 թվականին:

Մոնղոլները միայն հարկապահանջությամբ չէին բավարարվում, նրանք քրիստոնյաների թիկունքին սև կտավ են կաթել տալիս, որպես «նշան մախատանաց», որպեսզի ով նրանց տեսնի, հայոցի, ինչպես վկայում է Դանիել Աղթամարցի<sup>27</sup>: Աքրահամ գրիչը 1310 թվականին գրված Մաշտոցում այդ առթիվ գրում է, որ ապրում են «ի դառն և ի վշտալի ժամանակիս, ի մեջ անօրինաց և արիւնարբու գազանաց ազգին նետողաց, որ հանապազ խոցեն և վիրավորեն ի հոգի և ի մարմին»<sup>28</sup>:

1315 թվականին ընդօրինակված ձեռագրում գրիչը սեղմ, առանց ավելորդաբանության, պատկերավոր նկարագրում է պատմական որոշակի ժամանակաշրջան, մոնղոլական տիրապետության ժամանակաշրջանը, «յորում խաւար, անլոյս և մեզ անմխիթար տարածեալ մածեալ ունէր զամենայն երես երկրի»<sup>29</sup>:

Սրանք են տեղեկությունները Լիմի առաջին գրիչների մասին:

Լեակ-Թեմուրի արշավանքի ժամանակ, սարսափահար ժողովուրդը բնավեր եղած ապաստան է փնտրում համեմատաբար անվտանգ վայրերում: Վաճառ լճի կղզիները՝ Աղթամարը, Կտուցն ու Լիմը ինչպես միշտ, այս անգամ էլ ապաստարան են դառնում շրջակայքի բնակչության համար: Մանվել գրիչը 1394 թվականին Սիմեոնի որդի Հովհաննեսի համար ընդօրինակված Գանձարանը ավարտում է «... ի Լիմն կղզիս... յամի ութհարկերորդի քառասուններորդի և երրորդի (1394), յորում ամի աստուածասատ քարկությունն շարժեցաւ ի վերայ երկրի՝ արիւնարբու զօրքն թաթարին, որոյ անուն գլխաւորին Լանկ-Թամուր կոչիր... յորոյ սաստիցն զերծեսու մեր ապրեցաք առ ոտս երջանիկ վարժապետի»:

<sup>23</sup> Լ. Խաչիկյան, «ԺԴ դարի ձեռագրերի հիշատակարաններ», էջ 41:

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 41:

<sup>25</sup> Փիրղալեմեան, «Նշխարք պատմութեան Հայոց», Մատենադարան, ձեռ. 6273, էջ 143:

<sup>26</sup> Լ. Խաչիկյան, «ԺԴ դարի ձեռագրերի հիշատակարաններ», էջ 41:

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 47:

<sup>28</sup> Նույն տեղում, էջ 67:

<sup>29</sup> Մատենադարան, ձեռ. 192, էջ 166ա, 266բ:

Սարգսի, ի Լման կղզիս»<sup>30</sup>։ Սարգիս վարժապետը Ապրակունեցին էր, որը նույնպես ասպաստանել էր Լիմում։

Տասնհինգերորդ դարից էլ շատ քիչ բան է մեզ հասել Լիմի մասին։ 1420 թվականին, Կարա-Յուսուֆի մահից հետո, նրա անկազմակերպ զորքն ավերածության է ենթարկում Քաջբերունիքը։ Յուսուֆի որդիներին «անագորոյն և յոյժ անողորմ» Արծկեի քերդի տերը ելնում է ընդառաջ անգլուխ զորքերին, «դարձուցե և սփռե ի վերայ երկրին» տնովք և խոստակաք»։ Տառապյալ ժողովուրդը դարձյալ փրկություն է փնտրում ապահով անկյուններում։ Եվ շատերի հետ դեպի Լիմ կղզին է դիմում գրիչ Հովհաննեսը, իր վարդան եղբոր հետ։

Լիմում մահանում է գրչի եղբայրը։ Յովհաննեսը, նրա հիշատակի համար Աւետարան է ընդօրինակում «ի սուրբ մենաստանին, որ է հանդէպ Արծիշոյ, կղզի վայելոյ ի ծովս Ըղըշտունեաց» Լիմն կոչեցեալ, ընդ հովանեաւ հոյակապ և հռչակատու տաճարիս Աստուծոյ, որ յաւունց Սրբոյն Գեորգեայ զաւրապարին կառուցեալ է», և մկիրում Լիմի Ս. Գևորգ տաճարին։ Ձեռագրի արժեքավոր հիշատակարանում գրիչը հետաքրքրական տեղեկություններ է տալիս ժամանակի դեպքերի և հայ ժողովրդի ծանր կացության մասին։

«Յամի ութհարիւր և եօթանասուն թուականի Հայոց (1421), յետ մահուան Ղարա-Յուսուֆին, եղև խռովութիւն և յոյժ սասանումն ընդ ամենայն երկիրս Հայաստանեայց, զի հեծելազարքն ամենայն շփոթեալ զմիմեան հարկանէին և կողոպտէին։ Որ և գունդ մի ի զաւրացն հատեալ, զորս Փառնակ կոչէին՝ հինգ հազար տուն, և եկեալ հասին յերկիրն Քաջբերունոյ, և բազում տար և գերի առին։ Եւ էր որդի մի Յուսուֆին՝ չարաճճի և անագորոյն և յոյժ անողորմ ի քերդն Ալշոյ, ելանէ ընդ առաջ նոցա և առնէ սեր ընդ նոսա, և դարձուցե և սփռե ի վերայ երկրին՝ տնով և խոստակաք։ Եւ զչարչարանսն և զաղէտս քրիստոնէից է (7) ամիս բոլոր։ Եւ ես՝ յետինս ի մանկունս եկեղեցւոյ Յովանէս և հարազատս իմ՝ վարդան սրբաւէր կրաւ[նա]ւոր եկաք փախստական ի հռչակատու մենաստանս Լիմն կոչեցալ։ Եւ եղև զրա կենաց եղբարս իմ վարդան կրանաւորի, և եթող ինձ սուգ անմխիթարելի և վերք անքժկելի։ Եւ ես գրեցի զՍուրբ Աւետարանս և ետու սուրբ եկեղեցւոյս յիշատակ եղբար իմոյ վարդան արեղայի հանգուցելոյն ի Քրիստոս, այլ և ծնողաց իմոց՝ հոգևորաց և մարմնավորաց, և ինձ՝ մեղապարտի»<sup>31</sup>։ Իսկ Լիմի միաբանության մասին իմանում ենք, որ «զառաջնորդ սուրբ ուխտիս զՅոհաննէս խաչընդուս կրանաւորն, և զմիաբանքս զՏէր Յովհաննէս եպիսկոպոս, և զՍարգիս փիլիսոփայն, և զՄկրտիչ կրանաւորն, և զՍտեփաննոս եկեղեցական, և զԹովմա կրանաւորն, և զհարազատն իւր

զՅակոբ կրաւ[նա]ւոր, և զհայրս իւրեանց զՍտեփաննոս։ Այլ և զվարդան փիլիսոփայ, հանդերձ հարազատին իւր Թորոսի, և զՅովաննէս, և զերկու հարազատն իւր զՅակոբ և զՄարտիրոսն՝ զքաջսն և զաշխն ի գործս հոգևորս և մարմնավորս, և զծեր հայրն նոցա զՍտեփաննոս, և զվարապետ արեղայն, և զՅովանէս Արծիշեցի, և զամենայն գործաւորք դրան սուրբ եկեղեցւոյս՝ զտէտեա, զմանակալ, զհովիւ և զամե[ն]եանսն՝ զմեծ և զփոքր, աղաչեմ յիշել ի Տէր, որք յաւժար կամաք աւգանական եղեն մեզ։ Այլ և զհոգևոր եղբայրս մեր զԳրիգոր կազմաւղ և զճնաւղսն իւր»<sup>32</sup>։

Ինչպես տեսնում ենք, Լիմում յավանաճափ միաբաններ կային, որպեսզի կարողանային տնօրինել անապատի հոգևոր և մարմնավոր կյանքը։ Հովհաննէս գրիչը, միաբաններին հիշելուց հետո, չի մոռանում երախտագիտության խոսք ասել հատկապես եկեղեցու հասարակ գործավորներին. տնտեսին, մանկալին, հովիվին և այլոց, որոնք ամեն ինչով հոծար կամքով օգնել են իրենց։

Լիմում է ապաստանում 1430 թվականին, Աքադարի հորդաններից հալածված, պատմիչ Թովմա Մեծփեցին։ Ուխտի առաջնորդ Հովհաննէս վարդապետը սիրով ընդունում է նրան<sup>33</sup>։ Միաբաններից Հովհաննէս վարդապետը 1439 թվականին ձեռնարկում է մի Ավետարանի ընդօրինակությանը, բայց չի հասցնում ավարտել, մահանում է։ Գործը շարունակում է Հովսեփ միայնակացը գրել, ծաղկել և կազմել տալով։ Ձեռագրի գրիչը քաջ վարդապետ Մկրտիչն է, որը հիշատակաւոր չավարտած, «տարածած մահումս փոխեցաւ... յունուսդ ամսոյ ի ԻԲ (22) և Հոռի ի ԻԵ (25)»<sup>34</sup>։ Այս Մկրտիչ և Հովհաննէս վարդապետները հավանաբար նախորդ (1421 թ.) ձեռագրում հիշատակված անձնավորություններն են, իսկ Գրիգոր կազմողը՝ նախորդի կազմողը։

Այնուամենայնիվ ձեռագիրը լրիվ ավարտված չէ։ Գծված են խորանցները, բայց գրված չէ համաբարբառը։

1454 թվականին գրիչ Հերապետը, «տխեղծ մատամբ և մեղաւոր անձամբ» գրում է մի ավետարան<sup>35</sup>։

Ըժ դարի Լիմի գրիչների ընդօրինակությունները մնան են իրար։ Դրա պատճառն այն է, որ նրանք բոլորը կա՛մ Մեծփեցու աշակերտներն են, կա՛մ նրա աշակերտների աշակերտները, որոնք ողողել էին ոչ միայն Քաջբերունիքը, այլև Վասպուրականը։

Լիմի ձեռագրերը զարդարել են տարբեր ծաղկողներ։

Երկու նախորդ մատյաններն էլ դրոշմազարդ կազմեր ունեն, որոնք Գրիգոր կազմողի գործերն են։

<sup>32</sup> Նույն տեղում, էջ 289ա։

<sup>33</sup> Թովմա Մեծփեցի, «Պատմութիւն կենկթմութիւն», էջ 87—88։

<sup>34</sup> Մատենադարան, ձեռ. 4979, էջ 251ա։

<sup>35</sup> Մատենադարան, ձեռ. 6509։

<sup>30</sup> Լ. Խաչիկյան, «ԺԴ դարի ձեռագրերի հիշատակաբաններ», էջ 607։

<sup>31</sup> Մատենադարան, ձեռ. էջ. 221ա, 221բ։



1454 թվականին կիսատ մնացած Մեկնությունը Լիմոմ է ավարտում Սուխարա վանքի գրիչ Իզնատիոս արեւմտացի, որը շատերի հետ «վասն վրդովման և տատանեալ դառն ժամանակիս, ի խալի թշնամեաց փախեան երկիր, և ունանք ամրացան յանտիկ կղզիս Լիմոմ կոչեցեալ և շատք ցրուեցան երկիր Ամկու, անկան ի ձեռս հեծելի, թալանեցան, կողոպտեցան, շատ ոք սպանան... Եւ որք որ մտաք ի Լիմոմ՝ բազում սովով և պանդխտութեամբ տառապեցաք և աստ գրեցաւ կէսն գրոյս»<sup>36</sup>:

Ուրում Հասանի զորքերի հետապնդումից խուսափելով, Արճեւից Լիմ էր փախել նշանավոր գրիչ Հովհաննէս Մանկասարեցը, որը «տառապանս կալով» ավարտում է կիսատ թեոագիրը<sup>37</sup>:

1457 թվականին Ղազար գրիչը Լիմոմ ավարտի է հասցնում 1452 թվականին Սուխարա վանքում սկսած, այնուհետև Արզկանում շարունակած «Յայսմաւորք»-ը, որն այդքան ձգձգվել էր «վասն դառնութեան և խռովութեան ժամանակիս»: Ուշացման համար ներողամտաբար, գրիչը գրում է. «երբ սիրտն մաշխուլ լինի՝ աչքն լուս պակաս կու հայի, մարդ զմարդոյ ցաւ չգիտէ՝ կէս գիշերին ժամ կու ձենէ»<sup>38</sup>:

Հավանաբար այդ ժամանակ Լիմոմ էր գտնվում նաև նշանավոր ծաղկող Մրնասը, որը նկարագրող է հիշյալ գրչագիրը, ինչպես և Հովհաննէս Մանկասարեցի 1454 թվականին գրած Ավետարանը:

Այսքանով ավարտվում են մեր տեղեկությունները Լիմի մշակութային-գրական կյանքի վերաբերյալ մինչև ԺԵ դարը, 1538 թվականի աղետից հետո այստեղ գրչական կյանքը շրուակվում է ելևէջներով, երբեմն բուռն կերպով:

ԺԶ դարում ծաղկում է տաղասաց, գրիչ և ծուղկող Զաքարիա Գնունյացը, որը կոչվում է նաև «Լմցի»<sup>39</sup>: ԺԷ դարում Ներսէս Մոկսիցի վարդապետի շուրջ «ծողովեցան բազմութիւնք եղբարց և եղև անապատ հաստատուն, ամենայն կարգօք...»<sup>40</sup>: 1647 թվականի մի հիշատակագիր վկայում է, որ Լիմ անապատում «... ևն այժմ կրանաւորք Ծ (50) աւելի և ոչ պակաս»<sup>41</sup>, իսկ 1698 թվականին մեկ ուրիշը հավաստում է, որ «ի գերառնչակ մեծաստանս գարաբնակ զանապատն Լիմ... ունի յոյժ պիտանի մատենանքս թօք ՎՃԻԴ (3124)...»<sup>42</sup>: Այդ եւ վկայում են բազմաթիվ ձեռագրերը, որ հետագա դարերից հասել են մեզ<sup>43</sup>:

<sup>36</sup> Լ. Խաչիկյան, «ԺԵ դարի ձեռագրերի հիշատակարաններ», մասն Բ, էջ 39:

<sup>37</sup> Մատենադարան, ձեռ. 6570, էջ 287ր:

<sup>38</sup> Մատենադարան, ձեռ. 4472, էջ 632ա:

<sup>39</sup> Զ. Ն. Ակիկյան, «Զաքարիա Եպիսկոպոս Գնունյաց և յուր տղերքը», Վիեննա, 1910:

<sup>40</sup> «Պատմութիւն Առաքել վարդապետի Դարիժեցոյ», Վաղարշապատ, 1896, էջ 254:

<sup>41</sup> Մատենադարան, ձեռ. 5343, էջ 352ր:

<sup>42</sup> Ո. Քոլաբջյան, «Հայ ձեռագրագիտության մեծանուն վաստակավորը», էջմիածին, 1962, № 5, էջ 21,

Լիմոմ կյանքը ընդհանրապես դադարեց մեծ եղեռնից հետո, որը, ինչպես վկայում է Հովհաննէս վարդապետ Հյուսկանցը, «Լիմ անապատի ձեռագրչոր թիւը կհասնէր 550 կտորի, ուներ նաև երեք հազարի չափ տպագրված մատյաններ»<sup>44</sup>: Սրանց մի մասը, բարեբախտաբար, 1915 թվականին փրկվել է հույն վարդապետի ձեռքով և այժմ հանգչում է Մաշտոցյան Մատենադարանում:

ՄԻՆՉԵՎ ԺԵ ԴԱՐԸ ԼԻՍԻՑ ՄԵԶ ՀԱՅՏՆԻ

ԳՐԶԱԳՐԵՐԸ<sup>45</sup>

1. Աւետարան. գրիչ Գրիգոր Մաշկևոր, 884 թ., որից ընդօրինակված է Մատենադարանի № 3711 ձեռագիրը:

2. Գործք առաքելոց. գրիչներ Խաչիկ և Մովսէս. 1282—1301 թ. թ. Մատենադարան, անտիպ ձեռագրերի ցուցակ, 8, էջ 1ա, 1բ:

3. Լևւտարան. գրիչ Խաչատուր արեղա. 1301 թ., Լալայանի «Յուցակ ձեռագրաց», էջ 139:

4. Աւետարան. գրիչ Խաչատուր. 1309 թ. Մատենադարան, ձեռ. 3767:

5. Աւետարան. գրիչ Խաչատուր. 1339 թ., Մատենադարան, ձեռ. 6273<sup>46</sup>, էջ 143:

6. Աւետարան. գրիչ Աբրահամ. 1306 թ., Մատենադարան, ձեռ. 6273, էջ 108:

7. Մաշտոց. գրիչ Աբրահամ. 1310 թ., Մատենադարան, ձեռ. 6273, էջ 116:

8. Մասունք Աստուածաշնչի. գրիչ Աբրահամ, 1315 թ., Մատենադարան, ձեռ. 192:

9. Գանձարան. գրիչ Մանվել. 1394 թ., Վեներիկ, ձեռ. 162:

10. Աւետարան. գրիչ Հովհաննէս. 1421 թ., Մատենադարան, ձեռ. 4624:

11. Աւետարան. գրիչ Մկրտիչ. 1439 թ., Մատենադարան, ձեռ. 4979:

12. Աւետարան. գրիչ Հերպետ. 1454 թ., Մատենադարան, ձեռ. 6509:

13. Աւետարան. գրիչ Իզնատիոս. 1454 թ., Մատենադարան, ձեռ. 6273, էջ 174—76:

14. Աւետարան. գրիչ Յովհաննէս. 1454 թ., Մատենադարան, ձեռ. 6570:

15. Յայսմաւորք. գրիչ Ղազար. 1454 թ., Մատենադարան, ձեռ. 4472:

<sup>43</sup> Զ. Զ. Ոսկեան, «Վարդապետական-Վանի վանքերը», Վիեննա, 1940, գիրք Ա, էջ 16—50, նաև մեր «Հայերեն ձեռագրերի համահավաք քարտարան»-ի Լիմ գրչակենտրոնը:

<sup>44</sup> Մատենադարանի անտիպ ձեռագրաց ցուցակներ, V. 92, էջ 4ա:

<sup>45</sup> Նշված են յուրաքանչյուր ձեռագրի բովանդակությունը, գրիչը, ժամանակը և աղբյուրը կամ տեղը, որտեղ գտնվում է այժմ չամ որտեղից քաղված է տեղեկությունը:

<sup>46</sup> Մատենադարանի № 6273 ձեռագիրը Ղևոնդ վարդապետ Փիրղալեմյանի ռեչխարք Պատմութեան Հայոց», խորագրով, հիշատակարանների ժողովածուի Ա հատորն է:

## Հ Ա Վ Ե Լ Վ Ա Մ

Աղթամարի Զաքարիա Ա Սեֆեդիյան կաթողիկոսը (1286—1336), 1305 թվականին Լիմի Ս. Գևորգ տաճարի վերաշինության և իր կողմից նրան նվիրված կալվածների մասին գրում է. «Մի առ մի գրել և հաստատել տուաք ի Կալվածագրին մերում և ի յամիրապետաց և դատաւորաց հազարացուց վան քաղաքին և Մշոյ, և յիշատակութիւն սոցին գրել տուաք համառոտ ի յորմ տաճարին և զընդարձակն ի կողմ ձեռագիր Մաշտոցիս»:

Կալվածագիրը, որ արաբերեն գրված է 100×34 սմ. մեծությամբ մագաղաթյա թերթի վրա, այժմ պահվում է Մատենադարանի արխիվում: Արաբերեն քնագիրը հայերեն թարգմանությամբ հրատարակության է պատրաստել Հ. Փափազյանը:

Բավականին ընդարձակ և մանրամասն կալվածագիրը հաստատված է մի քանի կնիքներով և վկայություններով:

Այն, ինչ գրված է «ի յորմ տաճարին»՝ կա, եթե կանգուն է տաճարը, իսկ «ի կողմ ձեռագիր Մաշտոցիս» գրվածը, որ կաթողիկոսն անվանում է «իշատակագիր», մեզ է հասել Ղ. վարդապետ Փիրղալեմյանի և Օ. Բարադամյանի հետագա ընդօրինակություններով:

1883 թվականին Ղևոնդ վարդապետ Փիրղալեմյանը վարագում Երեմիա եպիսկոպոսի մոտ ընդօրինակում է այն մի Մաշտոցից և զետեղում իր «Նշխարք պատմութեան Հայոց» աշխատության Բ հատորում (այժմ Մատենադարանի № 4515 ձեռագիրը, էջ 62—64):

Երկրորդ ընդօրինակությունը հանդիպում ենք Օ. Բարադամյանի Կտուցի, Լիմի և Վարագի վանքերի ձեռագրերի նկարագրության և հիշատակագրությունների շարքում, որ կատարել է նա 1907 թվականին, «Հիշատակարան Զաքարիա կաթողիկոսին նույն Մաշտոցին մեջ» վերտառությամբ (այժմ Մատենադարանի № 6533 ձեռագիր, էջ 100—101): Նույն Մաշտոցը նկատի ունի նախորդ ձեռագիրը, որ պահվում էր Լիմում, որտեղից էլ ինքը արտագրել էր: Իսկ այդ ձեռագիր Մաշտոցը 1810 թվականին Արարհամ գրչի ընդօրինակությունն է, կատարված Լիմում (տե՛ս Լ. Խաչիկյան, «ԺՂ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ»): Սրանք տարբեր ձեռագրերից են արտագրված: Օ. Բարադամյանի և Ղ. Փիրղալեմյանի արտագրությունների միջև եղած ոչ էական տարբերությունները, որ բերում ենք քնագրի վերջում, կարող էին լինել նաև նույն քնագրի երկու տարբեր անձանց արտագրությունից:

Բարադամյանի ընդօրինակությունը, որի գաղափար օրինակի թվականը որոշակի հայտնի է (1810 թ.) և մշտապես պահպանվել է Լիմում, ուր և հրան հանդիպել է արտագրողը, ավելի հին է, քան Փիրղալեմյանի ընդօրինակված ձեռագիրը, ինչպես մասամբ նաև ցույց է տալիս քնագրերի համեմատությունը: Պատմական որոշակի արժեք ունեցող

այս փաստաթուղթը Զաքարիա կաթողիկոսի համար ունի նաև կենսագրական կարևոր մի տեղեկություն: Նա այստեղ իրեն համարում է Կյուրջիբեկի տղա Սմբատ-բեկի որդի. «իշատակ... ծնողաց իմոց Սմբատ-պեկին, որդւոյն Կիւրջի-պեկին»: Մինչդեռ Թովմա Արծրունու «Պատմութեան» շարունակողը նրան նախորդ կաթողիկոսի՝ Ստեփանոսի եղբայրն է համարում, Ամիր Գուրգենի՝ «հայր և հայրազուն», իսկ «զպարոն Կիւրջիբեկն և զպարոն Նուրադինն զհօրեղբարքն իւր»<sup>47</sup>: Ներսէս արքեպիսկոպոսը 1471 թվականին ընդօրինակած մի ձեռագրում Զաքարիային համարում է «քրերորդի նորին»<sup>48</sup> (իմա՝ Ստեփանոս կաթողիկոսի): Դանիել գրիչը Ամիր Գուրգենի համարում է հարազատ եղբայր Տեառն Զաքարիայի»<sup>49</sup>: Սմբատ-պեկը սրանց հայրն է:

Զաքարիա Ա Աղթամարցու «Կտակագիր»-ը հրատարակվում է առաջին անգամ. հիմք ենք ընդունում Բարադամյանի արտագրությունը: Ձեռագիրը, որից ընդօրինակել է Բարադամյանը, այժմ անհայտ է: Ունեցել է 32×23 սմ. մեծություն և 8 սմ. հաստություն, երկուստեք երկաթագիր մագաղաթյա պահպանակներ՝ ավետարանից:

## Կ Տ Ա Կ Ա Գ Ի Ր

Զաքարիայի Ա Աղթամարցու կաթողիկոսի

Ծնորհաւք՝ ամենազարին<sup>2</sup> աստուծոյ, ի թուականութեան հայկազեան տոմարիս 2ՄԻ (1305) [և]՝ յաշխարհակալութեան յազգին՝ նետողայ Աւլաթոս՝ սուլթանին<sup>5</sup>, ես նուաստ տէր Զաքարիա վերադիտող Աղթամարայ ի հիմանց՝ նորոգեցաք զտաճարն Սրբոյն Գեորգեայ զաւրավարին ի Լիմ կոչեցեալ կղզւոյ<sup>7</sup>, աջակցութեամբ Յովհաննէս եպիսկոպոսի Արծրունւոյ, ազգակցին իմոյ, վանահայր սուրբ՝ անապատիս. նաև նորագեցաք զՍուրբ Սահակայ՝\* և զԷջմիածնայ վանքերն մերձ ի յէրերին գիւղ, որք սեպական կալուածք և ազարակատեղի հաստաւեալ կային ի նախնեաց անտի Լիմ սուրբ անապատին: Ընդ սոցին շինեցաք ըստ խնդրանաց միաբանութեան<sup>9</sup> և զԸնծայից՝<sup>10</sup> Սուրբ Աստուածածնի

<sup>47</sup> Թովմայի վարդապետ Արծրունւոյ, «Պատմութիւն տանն Արծրունեաց», Ս. Պետերբուրգ, 1887 թ., էջ 322:

<sup>48</sup> Մատենադարան, ձեռ. 5702, էջ 239ա:

<sup>49</sup> Թովմայի վարդապետի Արծրունւոյ, «Պատմութիւն տանն Արծրունեաց», էջ 319:

\* Ղազան խանի հաջորդը, նրա եղբայրը Ուլչեյտուն (1304—1316), որն անվանվում է նաև Մուհամմեդ եռուդարանդա (ձառա Աստուծոյ), իսկ հայկական աղբյուրներում երբեմն կոչվում է Վարդանդա՝ կամ «հարբանդա» («ձառա էջի»)՝ քրիստոնեության դեմ հարուցած ծանր հալածանքների համար:

\*\* Վասպուրականի Գնունիք կամ Թիմար գավառում, երբեքին գյուղի հարավակողմում է ընկած Ս. Սահակի վանքը: Այնուհետև հիշված բոլոր գյուղերը, վանքերը և այլ տեղերը գտնվում են նույն գավառում:



ուխտն<sup>11</sup>: Նաև զբազում արտաւրայս և մարգագետինն զնեցաք ի դաշտն Բազայ՝ հանդերձ բոլոր սահմանաւք արդեամբք իմ սուրբ անապատին վասն ընծայեմք ուխտատեղւոյն և թողաք զնա իբրև հիւրանոց մոյն անապատին, որպէս յառաջագոյն ի մեծն Ներսէս սրբազան հայրապետէն հաստատեալ կայր:

Բայց վասն ծովացեալ մեղաց մերոց յազգէն մետողաց<sup>12</sup> յեզիտ ամիրապետէն աւերեալ քաւտեալ և ամայի դարձած էին, զորս ծախիւք մերովք և բազում աշխատութեամբ շինելով թողաք լինել ի շահեցողութիւն միաբան սուրբ հարց և եղբարց և ի հաստատութիւն Լմայ սուրբ մեծաստանին և ի յաւերժական յիշատակ վասն փրկութեան հոգւոյ իմոյ<sup>13</sup>, ծնողաց իմոց Սմբատ պէկին, որդւոյն Կիրջի պէկին, և ազգակցին իմոյ Յովհաննէս եպիսկոպոսին և ծնողաց մորին՝ հարւն ԶԼլալ պէկին և մարն Խուշխուշ խաթունին:

Եւ և ի սեպհական հայրենի ժառանգութենէ մերմէ կտակ արարաք Լմայ<sup>14</sup> սրբոյ անապատին զԱտեոն<sup>15</sup> ունեցած մարգագետինն և զանդաստան մեր, որոց սահմանքն են արևմտյան կողմէն: Աղուէն քոան, սրևելեան կողմէն Ծանկայ քոան և ջրաղացք, հարաւային կողմէն՝ Արքունակուն ճանապարհ, և հիւսիսային կողմէն է<sup>16</sup> ծով և կղզին Լմայ: Նաև զԼիսիւնց ազարակն մեր՝ հանդերձ իւր սահմանաւք, և ի Նորովսնց գիւղի մերձ՝ Վարշամակավանքն, Աստղխաշ և Բազումխաշ<sup>17</sup> ազարակներն և մարգագետինքն իւր սահմանաւք, որոց սահմանագլուխքն են արևելեան<sup>18</sup> Մասուր պէկ, սրևմտեան՝ Խաբլանձորն<sup>19</sup>, ի հարաւային<sup>20</sup> կողմէն Կարմիր քարն՝ մերձ Ծահկէլտի<sup>21</sup> գիւղին, և ի հիւսիսային կողմէն՝ Ատեո գիւղի քոան: Եւ և Խլու վանքն և զԱղահանքն՝ մերձ ի սահման Ծանիկ գիւղին, և Արականց վանք ուխտատեղին իւր սահմանաւք՝ մերձ ի բերդն Գնունեաց<sup>22</sup>, զորոց մի առ մի գրել և հաստատել տուաք ի կալուածագրին մերում ի յամիրապետաց և դատաւորաց հազարացոց Վան քաղաքի և Մշոյ, և յիշատակութիւն սոցին գրել տուաք համառօտ ի յորմ տաճարին<sup>23</sup> և զքնդարձակն ի կողն ձեռագիր Մաշտոցիս:

Արդ, որք հանդիպիք և յընթեռնուք զայս յիշատակագիրս, յիշեցէք զիս և զծնողսն իմ, ևս և զՅովհաննէս եպիսկոպոս գործակիցն իմ և ծնողսն մորին, զեղբարսն և զքորսն մեր, զաշխատաւորսն և զերախտաւորսն սուրբ տաճարիս ի Քրիստոս Աստուած, և դուք յիշեալ լիջիք, ամէն:

Եւ\*\*\* դուք, ով միանձունք հարք և եղբարք, որք սիրով Սուրբ Հոգւոյն յաւանդիք կրանաւորիլ ի սուրբ կղզոջս<sup>10</sup>, յիշեցէք և զիս զանարժան սպասաւորս սուրբ տաճարիս Յովհաննէս իբր եպիսկոպոս, մաւ մի մոռանայք զմեծ երախտաւորն սուրբ<sup>21</sup> անապատիս զտէր Զաքարիայ սրբազան հայրապետին մեր որ զբազում յիշատակս եթող մեզ: Աղաչեմ ամենայն զգուշութեամբ ջանալ հաստատուն պահել զյիշատակն և զԿտակագիրն մորին, զի և դուք զվարձս ի Քրիստոսէ Աստուծոյ մերմէ ընկալջիք, ամէն:

1. Փիրղալեմյանի մոտ բոլոր դեպքերում աւ գրվում է օ տառով: Ստորև բերում ենք Փիրղալեմյանի մոտ եղած տարբերությունները:

2. ամենակալին

3 և

4 յազգէն

5 սօլթանին

6 Բարաղամյանի մոտ կրկնված է:

7. Կղզոջ

8 Մոյն սուրբ

9 միաբանութեան

10 զԸնծայեմք

11 Փակագծերում Բարաղամյանը գրում է (ի Տիւրամէր ըստած գիւղն):

12 «Վասն ծովացեալ մեղաց մերոց յազգէն մետողաց» բառերի փոխարեն Բարաղամյանը կախման կետեր է դրել:

13 «Հոգւոց ծնողաց իմոց». «հոգւոյ իմոյ» չկա:

14 Նոյն Լմայ

15 Բարաղամյանը ավելացրել է փակագծերում (գետոյ):

16 Կողմէն

16 «Բազում խաշ» բացակայում է

18 Կողմէն

19 Խաբ[ե]լանք է դարձնում Բարաղամյանը:


20 Հարաֆային, (փոխանակ հարաւային գրելոյ) ավելացնում է փակագծերում:

21 Բարաղամյանը փակագծերում ավելացնում է՝ (Մմիկ):

22 Փակագծերում (Լմայ):

\*\*\* Այստեղից սկսվում է Հովհաննէս եպիսկոպոսի հիշատակարանը, որ նա ավելացրել է Կտակագրին:





Ս. ՔՈԼԱՆՋՅԱՆ

## ՏՐԱՆՍԻԼՎԱՆԻԱՅԻ ՀԱՅԵՐԻՎ ՊԱՅՔԱՐԸ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ\*

Տրանսիլվանիայի հայերին այնքան հուզող այս հարցին վերաբերյալ 85 տարիների մոթ և մեզ անհայտ մնացած երկար մի ժամանակաշրջանից հետո, երբ 1848 թվականին Տրանսիլվանիայի և Հունգարիայի բոլոր ժողովուրդները նախապատրաստվում էին կենաց և մահու պայքար մղելու Ավրստորիական կայսրության բռնակալական լծի դեմ և յուրաքանչյուր ժողովուրդ իր առաջադրանքներն էր դնում այդ առթիվ, հայերի մոտ միակ ազգային պահանջը կրկին հանդիսանում էր ազգային եպիսկոպոսության վերականգնման հարցը, ինչպես գրում է պատմաբան Խ. Սոնկոտյանը, Գեոլայում գումարված հայ վաճառականների մեծ ժողովում, ուր հավաքվածները իրենց անվերապահ նվիրումը ի հայտ բերեցին օտար բռնակալական լծի դեմ ծառացող հեղափոխության մեծ գործին, գեոլացի հայ նշանավոր մշակ Զաքարիա Կապրուշյանը (1794—1870 թ. թ.) կրկին օրակարգի հարց դարձրեց Տրանսիլվանիայի հայ ազգային եպիսկոպոսության վերականգնման խնդիրը, Այն պաշտպանության արժանացավ բոլոր ժողովականների կողմից և իրեն անհետաձգելի հարց, որոշվեց Տրանսիլվանիայի մյուս հա-

յաշատ կենտրոնների հետ ձեռք-ձեռքի դիմել արտասահման այնքան ձգձգված սույն խնդիրը արդար կերպով լուծման հասցնելու նպատակով: Այստեղ մեր նյութից դուրս է խոսել հայերի կողմից հեղափոխության ընթացքում պայքարի մեծ գործին ցուցաբերած մեծ նվիրվածության ու սխրագործությունների, ինչպես նաև պարտությունից հետո նրանց կրած ծանր կորուստների մասին, սակայն պետք է ասել, որ իրար հաջորդող անբարենպաստ դեպքերը կրկին պատճառեցին խանգարելու հայ եպիսկոպոսության վերականգնման հրատապ հարցը: Սակայն կարևորն այն է, որ հեղափոխության թնժ պահին հայերը Տրանսիլվանիայի եղբայր ժողովուրդների հետ այդ գործին զոհաբերելով իսկ իրենց կյանքը, շնորհաբան նաև առաջ քաշելու ինքնուրույն ազգային առաջնորդության խնդիրը, որը իրենց համար համարում էին լինել, թե չլինելու հարց:

Տրանսիլվանիայի հայերի պատմության մեջ լուսավոր մի շրջան է հանդիսանում հատկապես 1850—1870-ական թվականները, երբ հայկական բոլոր կենտրոնները համախորհուրդ կերպով դարձյալ համառ պայքար սկսեցին մղել իրենց ազգային իրավունքների վերականգնման համար: Այս շրջանի շարժման առաջին նախաձեռնողներից էր Գեոլայի քաղաքապետ Հակոբ Բոգդանը, որը խանդավառելով իր հայրենա-

\* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի № ԺԲ-ից, 1965 թվականի № Ա-ից և 1966 թվականի № Բ-ից, Գ-ից, Դ-ից և Ե-ից:



կիցներին, առաջարկեց հայկական եպիսկոպոսությունը վերականգնելու նպատակով ինչ որ բայի գիմել: Տիրող ընդհանուր ոգևորության մեջ որոշվեց գրել Վիեննայի Մխիթարյան Միաբնակության արքային և նրանից խորհուրդ խնդրել Տրանսիլվանիայում և Հունգարիայում ցրված հայերի եկեղեցական իրավունքները պահպանելու և նրանց սպառնացող կործանումից փրկելու համար: Այս նպատակով հայերը գործնական միջոցների դիմելով 20 000 ֆլորին տրամադրեցին, որի 5% շահը իբրև տարեկան եկամուտ տրամադրվելու էր ապագա եպիսկոպոսին<sup>198</sup>:

Հայերը շարունակելով անվհատ կերպով իրենց մաքառումները, 1860 թվականին դիմեցին նաև թագավորին և ապա Պրուսիական դային: Վերջինիս շահագրգռելու նպատակով, հայերը հատկապես ընդգծում էին, որ հայ եպիսկոպոսության վերականգնումը կարող է մեծ օգտակարություն ունենալ նաև կաթոլիկության շահերի համար, քանի որ եթե իրենց մոտ ծաղկի Հայ եկեղեցին, հայ լեզուն և ծեսը, ապա Մոլդովայի, Վալաքիայի և Բեսարաբիայի հայերը ևս, որոնց հետ իրենք սերտ առևտրական կապեր ունեն, կմիանան իրենց թեմին: Հայերը նույն հարցով դիմում են նաև կառավարությանը, այս վերջինս էլ թողնում է դավանության և մշակույթի նախարարությանը, որն էլ իր կարգին դիմում է Տրանսիլվանիայի լատին եպիսկոպոս ղոկոտ: Հայնալտ կայսրին, սա էլ իր կարգին գրում է թագավորին: 1862 թվականի հուլիսի 1-ի Գեոլայի քաղաքային արձանագրության մեջ գրված է, որ դեռևս հայերը ոչինչ չեն ստացել լատին եպիսկոպոսից: Նրանք այս գրելով, նկատի էին ունենում եպիսկոպոսի այն գրությունը, որն ուղարկել էր նա թագավորին, իսկ վերջինս էլ հանձնել՝ կառավարությանը: Կառավարությունը 1862 թվականի օգոստոսի 12-ին հաղորդում էր հայերին, որ Հայնալտ եպիսկոպոսի գրությունը չի կարող հայտարարվել և Գեոլայի ղեկավարությունը առանց դրան պետք է որ կայացնի իր որոշումը: Այս անգամ ես, ինչպես ակնհայտ երևում է, լատին եպիսկոպոսը բացասաբար պետք է որ վերաբերված լինեի հայերի խնդրին և մեղադրած հայերին բոլորովին անհիմն զրպարտություններով: անշուշտ դրա համար էլ նրա դրության պատճենը չուղարկվեց հայերին, այլապես այն գաղտնի պահվելու անհրաժեշտություն չէր գաղտնի: Հայերը ի վերջո հավաքվելով ժողովի, միաձայնորեն որոշում են վերականգնել Տրան-

սիլվանիայի հայոց եպիսկոպոսությունը և այս նպատակի համար ապահովում են 6000 ֆլորին տարեկան ուճիկ, ձրի բնակարան, նրանք կարծում են նաև, որ թագավորը ևս այս հարցում կօգնի իրենց: Հայ եպիսկոպոսություն վերականգնման գործը ղեկավարելու համար հայերը առաջարկում են նաև ունենալ առաքելական մի տեղակալ լիազորված լայն իրավունքներով, որը անկախ լինի Տրանսիլվանիայի լատին եպիսկոպոսից: Հետագա արդյունքների մասին մենք ոչինչ չգիտենք, քանի որ փաստաթղթերը այս հարցի մասին առհասարակ լուր մենք, սակայն նկատի ունենալով այն իրողությունը, որ լատին եպիսկոպոսի տիրապետությունը հայերի նկատմամբ շարունակվել է նաև հիշյալ թվականից հետո, ուստի այս հարցում որևիցե դրական արդյունքի մասին մտածելը այս անգամ ևս ավելորդ կլինի:

1868 թվականին Գեոլայի քաղաքապետ Գրիգոր Սիմայանը (1823—1907 թ. թ.), 1848 թվականին հեղափոխության մասնակից և հայ բանաստեղծների գործերի հունգարերենի թարգմանիչ, նոր առաջարկներ է մտցնում քաղաքային ժողովի նիստում և որոշում դիմել մշակույթի նախարարությանը, որպեսզի պետական միջոցներով վերականգնվի Գեոլայում հայկական եպիսկոպոսությունը: Նա պատճառաբանում էր ասելով, որ ներկա օտար հովիվի (իմա՝ եպիսկոպոսի) ղեկավարությունը շատ խորթ է և անհաջող, այլ ծեսերի պատկանող եկեղեցիները ունեն իրենց եպիսկոպոսները, և որ 1848 թվականին եկեղեցիների իրավահավասարության օրենքը այժմ կրկին ուժի մեջ է մտել սահմանադրության վերականգնման հետևանքով, և այլն: Գ. Սիմայանը ժողովին հավաստում էր ի վերջո նաև, որ Տրանսիլվանիայի հայոց ազգային և եկեղեցական կյանքի միակ փրկարար միջոցը կարող է դառնալ անպայման հայ եպիսկոպոսության վերականգնումը<sup>200</sup>:

Այս առթիվ դիմումներ են գրում բացի Գեոլայից, նաև Տրանսիլվանիայի մյուս եղբայրական կենտրոնների հայերը: Եղիսաբեթուպոլսի հայ ղեկավարները ևս դիմում են 1868 թվականի ապրիլի 7-ին երկրի մշակույթի նախարարին, որտեղ ցույց տալուց հետո, որ Տրանսիլվանիայի հայերն են միայն մնացել իրավադուրկ վիճակում, գրում են նաև հետևյալը. «...Բայց մենք կհուսանք, որ ժամանակն եկած է, թե երբ տեղության մեջ մերձակա առեկնները շատ մի միջև հիմա՛ չեղած հունածես եպիսկոպոսություն հիմն-

<sup>198</sup> Szongottl Kristóf, նշված աշխատությունը, էջ 307, 199 նույն տեղում, էջ 307:

<sup>200</sup> Szongottl Kristóf, նշված աշխատությունը, էջ 321—327:

վեցավ ու կանգնվեցավ, մեզի հայածես կաթուղիկեական հավատացյալներուն ալ, մեր վաղեմի, իրոք եղած, երբեք չընչված եպիսկոպոսութեան վերականգնումն ալ, օրինավոր իրավանց հիման վրա կարենանք խնդրել ու սպասել: Սույն աղերսագրի շարունակութեան մեջ խիստ ուշագրավ են հայ ծեսի և հայ ազգային ինքնուրույն եպիսկոպոսութեան մասին ասված հետագա տողերը.

«Միայն աս զատ, աս տարբեր եկեղեցին պահեց հայ ազգին լեզուն մինչև ցայսօր, իրեն հին հայրենիքին մեջ. երբ քաղաքային անկախութիւնը կորսնցնելէն ետեւ՝ օտար իշխանութեանց բռնութեանը տակ ինկավ:

Աս հատուկ եկեղեցին պահպանեց հայերեն լեզուն. մեր—հին հայենիքն, գարեբով դուրս գաղթած—նախնիներուն մեջ ալ: Ու աս մասնավոր եկեղեցին կանգուն կկենա դեռ ցայսօր ալ: Եվ արդիոք, այս մեր շատ հին հավատքին սահմանադրութեան փճանալուն առջևն առնուլը՝ մեր ամենասուրբ պարտավորութիւնը չէ՝: Այո, հազարամյա ավանդութիւնը կսրբացնէ այս իրավունքը: Եվ կուզենք որ զանիկա մեր թոռներուն, մեր ժառանգներուն ալ անվնաս հասցնենք»:

Նույն գրութեան շարունակութեան մեջ ասված է նաև, որ այդ վիճակի առաջը հնարավոր է առնել, եթէ հայկական եպիսկոպոսութիւնը վերահաստատվի, այլապես «Հայ եկեղեցիվուն վրա կործանում և փճացում կսպառնացվի»<sup>201</sup>: Նրանք հայտնում էին նաև, որ տարբեր քաղաքների հայ եկեղեցիների ծեսերը տարբեր են. և հայերը լատինածես են դառնում զանազան վայրերում. և օտարանում, իսկ ապագայում հայ ծեսը պիտի բոլորովին ջնջվի և լատինականի մեջ է ձուլվելու, ապա անհրաժեշտ է դրա առաջն առնելու համար ամեն միջոցի դիմել<sup>202</sup>: Հայերը ի վերջո գրում էին, որ «Զեն կարող երևակայել ու ենթադրել, թե որ հազարամյա ծեսը փշանալ... Մենք օրինավոր արդարութիւն կուզենք...»<sup>203</sup>:

Սեպտիգի հայ համայնքի ղեկավարութիւնը մեծ ոգևորութեամբ է պատասխանում Գեղարայի կոչին և ջերմորեն խոսում իր հին հայրենիքի, Արարատի, Հայկ նահապետի մասին և շնորհակալութիւն հայտնում գեղացիներին հայ եպիսկոպոսութեան հարցում նրանց ժրաջան գործունեութեան համար: Սեպտիգի հայ ղեկավարութիւնը ի վերջո բազմաթիվ հայտնի անձանց ստորագրութիւններով դարձյալ դիմում է Մշակույթի

նախարարին, հայտնելով նաև, որ իրենք միահամուռ կերպով և բուռն ոգևորութեամբ պաշտպանում են գեղացիների դիմումը և խնդրում են նախարարից իր աջակցութիւնը բերել արքունիքում այս հարցի վերաբերյալ: Նույնպես Զուրաբի հայ ղեկավարութիւնը 1868 թվականի ապրիլի 30-ի գրութեամբ իր միահամուռ աջակցութիւնն է հայտնում Գեղարային և դիմում Մշակույթի նախարարին: Բոլոր դիմումները հայերը տանում են Բուդապեշտ և հանձնում երկրի ավագաժողովում գործող Գեղարայի պատգամավորներ Ս. Ղումոն Կաղսագոյանին և Գրիգոր Սիմայանին՝ այս գործին միջամտելու համար:

Գեղարայի հայաքաղաքի ղեկավարները նախարարութեանը գրած իրենց դիմումում ուղղակի գրում էին, որ «Եթէ հայ եպիսկոպոսութեան վերականգնումը չօգնեն, ապա հիմա մեր ազգութեանը և եկեղեցուն վտանգ է սպառնում»: Հայերը բացահայտում էին այս հարցում ավելի քան 150 տարի շարունակ իրենց վատնած մեծ ջանքերին միշտ ձախողվելու բուն պատճառը, ասելով, որ Տրանսիլվանիայի լատին եպիսկոպոսները, որոնք ցանկացել են կաթոլիկ անհովիվ հայ եկեղեցիին իրենց թեմին կցել և ղրկել նրան ազգային ծեսից և հին ավանդութիւններից, միշտ կարողացել են խանգարել ինչպես վիեննայում, այնպես էլ Հռոմում հայերի բոլոր ձգտումները եպիսկոպոսութեան վերականգնման վերաբերյալ<sup>204</sup>:

Նդիսաբեթուպոլսի հայերը գեղացիներին հայտնել էին նաև, որ սույն գործի հաջողութեան համար իրենք դիմել են Կալոչայի և Վիեննայի հայածես արքեպիսկոպոսին և Տրանսիլվանիայի լատինածես եպիսկոպոսի օգնութեանը, ինչպես նաև Նդիսաբեթուպոլսի բարեկամներից համարվող մի քանի երկրների երեսփոխանների օժանդակութեանը: Սակայն իրականում լատինամոլ օտար կղերականութիւնը օգնելու փոխարեն ամեն տեսակ միջոցների դիմեց կրկին վիժեցնելու համար այս հարցը: Մյուս կողմից Բուդապեշտի ավագաժողովի վերահիշյալ հայ պատգամավորները, օգտվելով 1868 թվականի օրենքի № 9 հոդվածի 14-րդ հատվածից, ըստ որի Տրանսիլվանիայի հայ կաթոլիկ եկեղեցին էլ օրենքով ճանաչված դավանութիւնների շարքում էր դասվում, հայ եպիսկոպոսութիւնը վերականգնելու նպատակով, դիմեցին կրոնի և մշակույթի նախարար Հովհաննես Էդրոպեչին: Չնայած հայերի սույն դիմումը թագավորի հավանութեամբ հասավ Հունգարիայի կառավարութեանը և

<sup>201</sup> Հ. Գ. Գովրիկյան, «Շալա լեդիսաբեթուպոլս...», Գ, էջ 411—413:

<sup>202</sup> Նույն տեղում, էջ 415:

<sup>203</sup> Նույն տեղում, էջ 419:

<sup>204</sup> Szonqott Kristóf, նշված աշխատութիւնը, 2 325—341:



սրա մասին գրավոր ու անձնական և թերթերի կողմից միջամտություններ էլ եղան, «այսուամենայնիվ մատուցված աղերսագիրք ֆառասուն տարիի շափ անպատասխանի մնաց» (ընդգծումը մերն է—Ս. Ք.)<sup>205</sup>։

Շատ թերի կլինեիր այսքանով փակել հայերի 1850—1870-ական թվականների իրենց ինքնուրույնության համար մղած պայքարի պատմությունը, առանց հիշատակելու հիշյալ ժամանակաշրջանի շարժման գլխավոր ոգևորողը հանդիսացող Գեորգի հոգևոր հովիվ, հայտնի պատմաբան և բարերար խաչիկ Լուբաչյանի (1804—1876 թ. թ.) աշունը, Սուլյն ժամանակաշրջանի հայերի գործունեության համար կարևոր նշանակություն ունեցավ Լուբաչյանի 1867 թվականին հրատարակած «Տվյալներ Տրանսիլվանիայի հայերի պատմությանը» հունգարերեն լեզվով գիրքը<sup>206</sup>, որը նրա 1859 թվականի լույս տեսած «Տրանսիլվանիայի հայերի պատմություն» լատիներեն կարևոր աշխատությունից հետո գալիս էր ոչ միայն նոր տվյալներով ճշտացնելու հայերի պատմությունը, այլև հատկապես կանգ էր առնում Տրանսիլվանիայի հայերի առաջնորդական աթոռի վերականգնման հրատապ հարցին, Լուբաչյանը իրեն հայ ավանդությունների ջերմ պաշտպան, հայ զաղութի ուժացման վտանգից փրկելու իբրև միակ միջոցը համարում էր հայերի ազգային ինքնուրույնության պատվարը հանդիսացող հայ եպիսկոպոսության վերականգնումը։ Նա չնայած իր առաջացած տարիքին իր փայփայած երազը իրականացնելու հույսով, Տրանսիլվանիայի չորս հայաբնակ կենտրոններից հանձնարարականներ վերցնելով մինչև իսկ Հռոմ գնաց և 1872 թ. ներկայացավ պապին։ Սակայն այս անգամ էլ որևէ դրական լուծում չստացավ հայերին այնքան հուզող այս հարցը, և ինչպես գրում է Գեորգիյանը «Լուբաչյանի հետ գերեզման գնաց Հունգարահայոց եպիսկոպոսության վերականգնվելուն վերջին հույսն ալ»։ Նա նույնիսկ իր մահից հետո կտակել էր, որ իր ունեցվածքը տրամադրվի այդ դործի նպաստավոր լուծման համար, իսկ հակառակ դեպքում. եթե իր մահից 10 տարի անցնելուց հետո դեռևս չլուծվի այն, ապա խնդրում էր իր ստացվածքը տալ որբանոցին<sup>207</sup>։

Ինչպես երևում է կողմնակի փաստերից, 1848 թվականին հեղափոխությանը հաջոր-

դող տարիներին կայսրությունը ցանկացել է վերականգնել հայոց եպիսկոպոսությունը և Լուբաչյանին էլ առաջարկել է տալ եպիսկոպոսական Աթոռը, սակայն այն թանկ պայմանով, որ հայերը ուրանային «ազատության պատերազմին մեջ հունգարացվոց համար ինկած դավաճաններուն թափած արյան սրբությունը»<sup>208</sup>, Սակայն հայերը նկատի ունենալով իրենց գերագույն նվիրվածությունը և րացառիկ սերը դեպի իրենց երկրորդ հայրենիքն ու դեպի հունգարացիները, ստիպվեցին մերժել այն։ Այլապես հայերը պետք է ուրանային իրենց փառահեղ անցյալը և հեղափոխության գործում իրենց ցուցաբերած գերմարդկային զոհողությունները։ Սակայն հակառակ այս բոլորի, հետագայում ազգայնամուլ կառավարող շրջանները նկատի չառին հայերի հիշյալ զոհողությունները։

Տրանսիլվանիայի հայերի հետագա շրջանի պատմությանը բնորոշ է մի կողմից լատինամոլության հետզհետե ուժեղացումը, իսկ մյուս կողմից ավանդապահների իրավունքների սահմանափակումը։ 1874 թվականին Եղիսաբեթուպոլսի հայոց մայր եկեղեցին այցելող մի հայ նկարագրում էր, որ հայ հոգևորականների գործածած զգեստները ևս լատինական էին. նրա այն հարցին, թե «հայու պատարագի զգեստ մը չկա՞րք դուք...», պատասխանող ծերունի քահանաներից մեկը ահաբեկվելով ասել է. «Լիսեդերեմ, ասոր վրա շատ հարցում մի՛ բնեք, մեր Թրանսիլվանիո աբեպիսկոպոսը շուգեք որ հայ զգեստով պատարագ բլլվի (ընդգծումը մերն է—Ս. Ք.)։ նորեն օրթան բան մի՛ հանեք, կաղաչեմ»։ Նույն ուղևորի ասելով, «Հայտնի կտեսնվի, որ ատենոք այս խնդիրը շարժեր է մեջերսին, ու շատ մաքառում ու տակնուվրայություն ըլլալն ետև, հայ զգեստները ծալեր, ծալըտրկեր, եկեղեցվույն վերնատունը պահեր են գուցե ապագա ժամանակի մը համար»<sup>209</sup>։ Այս շրջանում մուտք է գործել նաև հունգարերեն քարոզը հայկական եկեղեցում։ Սակայն ի. Լուբաչյանը թույլ չի տվել այդ անել և այդ պատճառով դեռևս շարունակվել են Գեորգի հայ եկեղեցում Տրանսիլվանիայի հայերի բարբառով տրված քարոզները։

Նույն ժամանակներին, հետզհետե թուլանում է նաև հայ դպրոցի դերը։ Մխիթար արքան և նրա հաջորդներից մի քանիսը, ժամանակին հետևողական կերպով ուղադրություն էին դարձրել Տրանսիլվանիայի հայկական դպրոցների վրա և հմուտ ուսուցիչ-

<sup>205</sup> «Հանդես ամսորհայ», 1910, էջ 353—358։

<sup>206</sup> Lukacs Kristof, Adelékok az erdelyi orménye' iortiene'e haz. Kolozsvár, 1867

<sup>207</sup> Հ. Գ. Գեորգիյան. «Գրանսիրությանի Հայոց մեծապալիսը», էջ 145—147։

<sup>208</sup> Հ. Գ. Գեորգիյան, «Հայք յեղիսաբեթուպոլիս...», Գ, էջ 425—426։

<sup>209</sup> «Մասիս», Կ. Պոլիս, 1874, № 1611, էջ 3։

ներ էին ուղարկել՝ հայ դպրոցի ճրագը անշեջ պահելու համար: Հետագայում ո՛չ Ռաֆայել Ղարամյանի կողմից Եղիսաբեթուպոլսում հայկական մեծ դպրոց բաց անելու նպատակով կատարած նվիրատվությունը և ո՛չ էլ Վենետիկի և Վիեննայի Մխիթարյանների հետգհետեթ թուլացող ջանքերը ի վիճակի չեղան ամրապնդելու Տրանսիլվանիայի հայ գաղթավայրերի լուսավորության գործը: Վերոհիշյալ ուղևորը, խոսելով Եղիսաբեթուպոլսում գործող վենետիկցիների վանատան դպրոցի մասին, 1874 թվականին գրում էր. «Բայց լատին կղերին՝ մանավանդ նույն ատենվան հնարքներն ու բանասարկություններն զրգոված, մաքառած ու ետքը հոգնած ետքաշվելու ստիպված են (իմա՝ Մխիթարյանները) վարձու տալով իրենց այն գեղեցիկ վանատունը Հոնվեթ ըսված հունգարացի ազգային կամավոր զինվորացը ձեռք, ուր միանգամայն նույն զինվորաց դիվանատուն եղած է...»: Հիշյալ ուղևորը նույն տխուր գույներով նկարագրում է նաև Ռաֆայել Ղարամյանի հիմնադրած մեծակառույց շենքի վիճակը: 1874 թվականին հայերեն լեզվի ուսուցիչը փոխանակ դասավանդելու ըստ կտակի Ղարամյանի կառուցած շենքում, հայերենի դասը դասավանդում էր փրկվելած մի սենյակում, իսկ հիշյալ «ուշիմ անձին ձեռքերը կապված են, (մնում), նույն դպրոցին վերատեսուչը հունգարացի քահանա մը ըլլալուն համար»<sup>210</sup>: Ինչ վերաբերում է Ռաֆայել Ղարամյանի հիմնած մեծ դպրոցին, նույն ուղևորը գրում էր, որ «... նույն շենքին խցերուն մեջ կախված Մեսրոպյան այբբենարանի տախտակներն միայն մնացած են. հայ մանկտվույն տեղ՝ հավերն ճավերն խուցերուն մեջ տարմատարմ կտրածին, ու անոնց մնտուղթենեն տղու ոտք դնելու տեղ չկա...»<sup>211</sup>:

Ժողովուրդը ոչ միայն հոգևոր հովիվներից, այլև վանքերից խնդրել էր իրենց հայերենի ուսուցիչներ տրամադրել, սակայն այդ դիմումները անպատասխան էին մնացել: Իսկ մյուս կողմից Տրանսիլվանիայի հայ հոգևորականները առհասարակ լատինական միջավայրում ստանալով իրենց ուսումը, հաճախ հայերենից գրեթե անտեղյակ և կամ քիչ ծանոթ էին և հասնելով այդ վիճակում ղեկավար աստիճանի, «իրենց ծանրաբեռնություն մը սեպած են հայերեն լեզուն գիտնալը և իրենց միմիայն դյուրությանը միտ դնելով՝ աս մայրենի լեզուն ու ծեսը կամացկամաց անհետ ընելու ջանացած են»<sup>212</sup>:

<sup>210</sup> «Մասիս», Կ. Պոլիս, 1874, № 1628, էջ 2—3:

<sup>211</sup> Նույն տեղում, էջ 3:

<sup>212</sup> «Մասիս», 1874, № 1611, էջ 3:

Նկատի ունենալով Տրանսիլվանիայի հայ գաղութի ներսում տիրող այս դրությունը, վերոհիշյալ ուղևորը արդարացի կերպով եզրակացրել է, որ «Այսպես աս կողմերը մեր ազգային ամենանվիրական իրավունքները բռնադատված են, ազգերնիս լատին կղերին ձեռքը խաղալիք մը դարձած է...»<sup>213</sup>:

Հայերի մոտ լատինամոլության հետզհետե ուժեղացման է նպաստում նրանց կողմից լատին եպիսկոպոսից երկար ժամանակ կախման մեջ մնալը: Օրինակ, Եղիսաբեթուպոլսի եկեղեցականներից ոմանք իշխանությունից պատիվ և գովություն ընդունելու և լատին եպիսկոպոսի առջև հաճելի լինելու համար, սաստիկ լատինականության միտքն են: Հունգարներն լեզվով քարոզելուց բացի նրանք նույնիսկ հայկական շարականները լատին եղանակի վրա հարմարեցված էին երգում<sup>214</sup>:

Սակայն, հակառակ այս բոլորին, պետք է նշել նաև, որ հարյուր ութսուն տարվա պարպության միջոցին մեջ պատահած չէ, որ լատին եպիսկոպոս մը հայաժես կղերիկոսի մը վրա ձեռք դրած ու գինք օծած ըլլա»<sup>215</sup>: Սակայն մյուս կողմից պետք է բացահայտել նաև այն իրողությունը, որ լատին եպիսկոպոսը աշխատել է, որ հայ պատանիները լատին Եկեղեցու անդամ լինեն և լատինաժես քահանա ձեռնադրվեն: Գովրիկյանը, խոսելով իր ժամանակի մասին, (ԺԹ դարի վերջին և Ի դարի սկզբին) գրում էր. «Դժբախտ իրականությունը կվկայե, թե այսօրվան օրս՝ Դրանսիլվանիոյ մեջ շատ ավելի է հայազգի լատինաժես քահանայից՝ քան հայաժես քահանայից թիվը... Զարմանալու չենք: Լատինաժես քահանան կրնա զանազան եկեղեցական աստիճանի ու թոշակի հասնիլ, ուր որ հայաժես քահանայից առջև՝ որևէ եկեղեցական աստիճանի բարձրանալու դուռը գոցված է»<sup>216</sup>: Հայաժես քահանան կարող էր միայն հոգևոր հովիվ ընտրվել, եթե պատահմամբ չորս հայաշատ կենտրոններից մեկի հոգևոր հովիվը մահանար և նրա տեղը բախտը վիճակվեր իրեն ժողովրդապետ ընտրելին, այլապես նա ցմահ կարող էր մնալ քահանայի օգնականի պաշտոնում:

<sup>213</sup> «Մասիս», 1874, № 1628, էջ 3:

<sup>214</sup> «Հանդէս ամսօրեայ», 1903, էջ 14:

<sup>215</sup> Հ. Գ. Գովրիկյան, Դրանսիլվանիոյ Հայոց մեռուպոլիսը, էջ 99:

<sup>216</sup> Հ. Գ. Գովրիկյան, «Հայք յեղիսաբեթուպոլիս...», Գ, էջ 639:





## Մ Ա Յ Ր Հ Ա Յ Ր Ե Ն Ի Գ Ո Ւ Մ

### Լ Ո Ւ Ր Ե Ր Մ Ա Յ Ր Հ Ա Յ Ր Ե Ն Ի Գ Ո Ւ Ց

Արձեքավոր ժողովածու.— Հայաստանի Գիտությունների ակադեմիայի Հնագիտության և ազգագրության ինստիտուտը սկսել է «Նյութեր հայ ազգագրության և քանադասության» մատենաշարի հրատարակումը: Այդ մատենաշարի առաջին ժողովածուն է քանահավաք Խաչերևու Փորձյանի կազմած գիրքը՝ «Նոր Նախիջևանի հայ ժողովրդական քանադասությունը» վերնագրով: Ժողովածուի մեջ տրված են Նոր Նախիջևանի հայ գաղութի ծիսական, կենցաղային, սիրո երգերը, հետաքրքիր տեղեկություններ գաղութի պատմության վերաբերյալ, ինչպես նաև ազգագրական այլ նյութեր, առակներ, ասացվածքներ, հանելուկներ և այլն:

Աշխատություն հայկական ձեռագործության մասին.— Հայկական ձեռագործության հայտնի գիտակ է Սերիկ Դավթյանը: Ավելի քան 20 տարի է, ինչնա զբաղվում է կիրառական արվեստի այդ ճյուղով: Իր կարամյա պրպտումների արդյունք է նրա «Հայկական ժանյակ» աշխատասիրությունը, որի մեջ քննության է առնված ժանյակագործության ծագման, զարգացման և տարածման պատմությունը Հայաստանում: Իր ուսումնասիրության համար հեղինակը հիմք է ընդունել ո՛չ միայն մեր թանգարաններում եղած պատմական զարդանուշեղներն ու հագուստները, այլ և մեր մանրանկարչությունը, որմնանկարչությունը, ճարտարապետությունը:

Գիրքը սկսվում է Մ. Սարյանի երկու խոսքով. նա բարձր է գնահատում հեղինակի աշխատությունը:

Տիգրան Պետրոսյանը Հայաստանում.— Իր փառավոր հաղթանակից մի քանի օր հետո շախմատի աշխարհի կրկնակի չեմպիոն Տիգրան Պետրոսյանը այցելեց նաև Լենինական, Կիրովական, Դիլիջան, Արտաշատ, Հոկտեմբերյան և այլ վայրեր, ամենուրեք արժանանալով ջերմ, սիրալիկ և խանդավառ ընդուն-

մելության: Տ. Պետրոսյանին ընկերացել էր նրա մարտավա և մարզիչ Իսահակ Բոլեսլավսկին:

Երևանում աշխարհի չեմպիոնը եղավ մի շարք խոշոր գործարաններում, քարծրագույն ուսումնական հաստատություններում, Գիտությունների ակադեմիայում և այլուր, ինչպես նաև Հայֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճում հանդիպում ունեցավ մայրաքաղաքի սպորտասեր հասարակության հետ:

Գիտությունների ակադեմիայում ողջունելով Տ. Պետրոսյանին, ակադեմիկոս Վ. Համբարձումյանն ասաց.

— Ծախմատը թերևս միակ քնազավառն է, որտեղ կոնկրետ կերպով կարելի է ի հայտ բերել, թե՛ ո՛վ է ուժեղ և ո՛վ՝ թույլ, որտեղ կարելի է ճշգրիտ որոշել մտքի ուժը: Մեր երիտասարդությունը պետք է հետևի Պետրոսյանի օրինակին:

Հունիսի 28-ին Տ. Պետրոսյանը ներկա եղավ Երևանի շախմատային ակումբի շենքի հիմնարկեքին և իր ձեռքով դրեց հիմքի առաջին քարը: Մեկնելուց առաջ աշխարհի չեմպիոնը իր տիկնոջ հետ այցելություն տվեց Վեհափառ Հայրապետին, արժանանալով Նորին Սրբության ջերմ ընդունելությանը:

Հայ հեղինակները վրացերեն թարգմանությամբ.— Վրաց գրողները և գրասեր հասարակությունը միշտ էլ հետաքրքրություն են տածել դեպի հայ գեղարվեստական գրականությունը դեռ անցյալ դարից սկսած: Ջանազան ժամանակներում լույս են տեսել Պոռչյանի, Աղայանի, Սունդուկյանի, Թումանյանի, Իսահակյանի, Ծիրվազադեի, Նար-Դոսի և այլ հեղինակների առանձին գործերը: Ռաֆֆու «Խենթը» լույս է տեսել դեռևս 1903 թվականին:

Սովետական շրջանում հայ հեղինակները ավելի հաճախ են լույս ընծալվել վրացերեն: Չարենցի, Ակսել Բակունցի, Ստ. Զորյանի, Դ. Դեմիրճյանի,



Գ. Սարյանի, Հր. Քոչարի, Հ. Ղուկասյանի և ուրիշ գրողների առանձին գործերը միշտ էլ թարգմանվել ու տպագրվել են և մեծ ընդունելություն գտել վրաց. ընթերցողների շրջանում:

1964 թվականին Վրաստանի Պետհրատի հրատարակությամբ լույս տեսավ Ռաֆֆու հատընտիր ժողովածուն: Ծուռով մանկա-պատանեկան հրատարակչությունը առանձին գրքով լույս է ընծայելու Ռաֆֆու «Խենթը» նոր թարգմանությամբ, 15000 տպաքանակով:

Արժեքավոր աշխատություն հայ երգի մասին.— «Հայ ժողովրդական երգը»—այսպես է կոչվում վերջերս Մոսկվայում ռուսերեն լեզվով լույս տեսած երաժշտագետ Ռոբերտ Աթայանի աշխատությունը: Գիրքը արժանացել է ռուս և հայ հասարակության լայն խավերի ուշադրությանը:

Հեղինակը հակիրճ ու մատչելի ձևով տվել է հայ ժողովրդական երգի ձևերն ու ժանրերը: Առանձին գլուխներ են նվիրված աշխատանքային, կենցաղային, սիրային և գուսանական երգերին, ինչպես նաև հայրեններին ու տաղերին:

Ընդունելությունները բարձրագույն ուսումնական հաստատություններում.— Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում սկսվել են ընդունելության նախապատրաստությունները: Այս տարի ընդունելության պայմանները շատ ավելի դժվար են, քան անցյալ տարիներին, քանի որ միջնակարգ ուսումնական հաստատություններում ավարտողների թիվը կազմեց 34 800 հոգի:

Որպեսզի այս շրջանավարտները դուրս չմնան միջոցներ են ձեռք առնվել հնարավորին չափ շատ մարդ ընդունել ԲՈՒՀ-երում և տեխնիկումներում: Լեհնականում բացվելու է ինքնուրույն մանկավարժական ինստիտուտ, Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտում ստեղծվում է նոր ֆակուլտետ, բոլոր ԲՈՒՀ-երում և տեխնիկումներում ուսանողության թիվն ավելացվելու է մեկ երրորդով անցյալ տարիների հետ համեմատած: Համապատասխան չափով ավելանալու է նաև երեկոյան և հեռակա ԲՈՒՀ-երում ընդունվողների թիվը:

«Մարտիրոս Սարյան» ֆիլմը.— Հանրապետության կինո-թատրոններում մեծ հաջողությամբ ցուցադրվում է «Մարտիրոս Սարյան» գունավոր ֆիլմը, որը պատրաստել է «Հայ ֆիլմ» կինոստուդիան: Նկարը պատմում է մեծատաղանդ նկարչի կյանքի և ստեղծագործական աշխատանքների մասին:

Ֆիլմը ցուցադրվում է նաև Սովետական Միության մյուս հանրապետությունների կինո-թատրոններում, ամենուրեք արժանանալով հանդիսականների բարձր գնահատականին:

Նկարիչ Հովհաննես Զոմյանի ցուցահանդեսը.— Երևանում, ճարտարապետների տանը տեղի ունեցավ նկարիչ Հովհաննես Զոմյանի ստեղծագործությունների ցուցահանդեսը: Ներկայացված են շուրջ

հարյուր կտավներ՝ ջրաներկ և գրաֆիկական աշխատանքներ: Ցուցահանդեսը արժանացավ արվեստասեր հասարակության ջերմ ընդունելությանը:

Նկարիչ Հովհաննես Զոմյանը հայրենադարձ է: Նա հայրենիք է վերադարձել Լիբանանից և բնակություն հաստատել Երևանում:

Հա եպի Բայկական էստրադային նվագախումբը.— Հունիսի վերջերին Երևանում մի շարք համերգներով հանդես եկավ Հալեպի հայկական էստրադային նվագախումբը, որը կոչվում է «Ռուբի»: Խմբի բոլոր անդամները, ներառյալ նաև ղեկավարը (Սուրեն Գահվեճյան) սիրողներ են՝ տարբեր զբաղմունքի տեր մարդիկ: Համերգային ծրագրի մեջ մտնում էին հայկական, արաբական և եվրոպական երգեր:

Երևանցիները ջերմ ընդունելություն ցույց տվին խմբի անդամներին գնահատելով նրանց կատարողական արվեստը:

«Պեպոն» օպերային ներկայացմամբ.— Երևանի Ծառույցյան թատրամասի կուլտուրայի տանը տեղի ունեցավ հետաքրքիր ներկայացում՝ քեմադրվեց «Պեպոն» օպերան, որի երաժշտությունը գրել է կոմպոզիտոր Ա. Հովհաննիսյանը: Ներկայացմանը մասնակցում էին և՛ դերասաններ, և՛ սիրողներ: Բեմադրությունը կատարել էին թոշակառու Կ. Բաղդասարյանը և հանրապետության ժողովրդական արտիստ Ս. Ծախիջանյանը: Ա. Սպենդիարյանի անվան թատրոնի դիրիժոր Ֆ. Ֆլոդորովը, ժողովրդական նկարիչ Ա. Ծաքարյանը, բալետմեյստեր Հ. Ղա-րիբյանը և կոմերտմեյստեր Օ. Վազեմզեյանը իրենց սիրալիր մասնակցությունը քերին ներկայացման հաջողությանը:

«Պեպոն» դերը կատարեց պետօպերայի մեներգիչ Հ. Բարաջյանը, Կեկելի դերը՝ տնային տնտեսուհի Է. Խաչատրյանը, Զիմզիմովի դերը՝ Ս. Ծախիջանյանը: Մյուս դերերը կատարեցին կուլտուրայի տան սիրողները: Ներկայացումն անցավ հաջողությամբ:

«Բարեկամություն» թատրոնի նոր հյուրերը.— Երևանի «Բարեկամություն» թատրոնի հերթական հյուրերն էին Թբիլիսիի Ծոթա Ռուստավելու անվան Վրացական պետական ակադեմիական թատրոնի դերասանները: Հունիսի 15-ին և 18-ին նրանք Սունդուկյանի անվան թատրոնի շենքում խաղացին «Արքա Լիր» ողբերգությունը: Լիր արքայի դերը կատարում էր Սովետական Միության ժողովրդական արտիստ, պետական և լեհիզյան մրցանակների դափնեկիր Սերգո Զաքարիաժե:

Երկու ներկայացման ժամանակ էլ դահլիճը լեփ-լեցուն էր Երևանի թատերասեր հասարակությամբ: Հանդիսականները չափազանց ջերմորեն ընդունեցին ներկայացումները:

Վրաց դերասանները Երևան ժամանելու հաջորդ օրը ամբողջ խմբով եղան Էջմիածնում: Այցելություն տվին Վեհափառ Հայրապետին: Հանդիպումը Նորին Սրբության հետ անցավ ջերմ, բարեկամական մթնոլորտում:



**Ջրոսայգի թանգարան.**— Երևանի մոտ է գտնվում հռչակավոր Կարմիր Բլուրը կամ հին ուրարտական Էրիբունի ամրոցը: Շուրջ 25 տարի է, ինչ այստեղ պեղումներ են կատարվում, հայտնաբերելով մորաճոր մյուսեր հին ուրարտացիների վերաբերյալ:

Կարմիր Բլուրն այժմ առնված է մայրաքաղաքի սահմանների մեջ: Քաղաքի իշխանությունները որոշել են բլուրը և մոտ շրջակայքը վերածել թանգարան-գրոսսսյգու, որի նախագիծը արդեն կազմված է: Ուրարտական միջնաբերդը և հին բնակելի թաղամասերը կկազմեն ապագա գրոսսայգու կենտրոնական մասը: Ծրագրվել է մի քանի շինություններ վերականգնել իրենց նախկին տեսքով: Բլուրի լանջերին և շուրջը կստեղծվի անտառ 15 հեկտար տարածությամբ: Անտառում կաճեցվեն այնպիսի ծառատեսակներ, որոնք, ըստ գիտնականների վկայության, այստեղ աճել են ուրարտական շրջանում: Անտառում կլինի նաև լճակ:

Ջրոսայգին կունենա թանգարանի մասնավոր շենք, ուր ցուցադրվելու են Էրիբունիում հայտնաբերված առարկաները:

**Ծարունակվում է Պետական համալսարանի կառուցումը.**— Շուրջ տասը տարի է, ինչ շարունակվում է Երևանի Պետական համալսարանի մոտ շենքի կառուցումը, փոխարենը այն երեք հարկանի միակ շենքի, ուր տեղավորված էր համալսարանը, ավելի քան 80 տարի: Այժմ համալսարանի մոտ ուսումնական շենքերը կազմում են մի ամբողջ ավան Այգեստան կոչվող թաղամասում:

Անցյալ տարի ավարտվեց կենտրոնական 7 հարկանի շենքը, ուր տեղավորված են մեծ հանդիսասրահը, միստերի դահլիճը, գրապահոցը, վարչական հաստատությունները և այլն: Մինչև այս տարվա վերջերը կավարտվեն 2 մոտ, խոշոր շենքերի կառուցումները:

Եկող տարի Նորքում կսկսվեն մի ամբողջ շարք շենքերի շինարարությունները, ուր տեղավորելու են համալսարանի լաբորատորիաները՝ հագեցված ժամանակակից սարքավորումներով: Այս շենքերում են տեղավորվելու մաթեմատիկայի, քվանտային օպտիկայի, ֆիզիկայի, անալիտիկ քիմիայի, կիբեռնետիկայի և այլ լաբորատորիաները: Բոլոր այդ շենքերը միասին կգրավեն 75 հեկտար տարածություն:

**Արվեստի շաքաթ Ջանգեզուրում.**— Արդեն կարծեթ թե ավանդական բնույթ է ստանում Հայաստանի գանազան շրջաններում արվեստի շաքաթներ կալմակերպելը: Այդպիսի շաքաթներ են անցկացվել Լենինականում, Կամոյում (Նոր Բայազետ), Իջևանում:

Հունիսի վերջերին արվեստի շաքաթ անցկացվեց Ջանգեզուրի կենտրոնում՝ գողտրիկ Գ. րիսում և Սիսիանում: Լենինային Հայաստանի ժողովրդին հյուր էին եկել Հայֆիհարմոնիայի լավագույն խմբերը և մենակատարները, ժողովրդական արտիստներ Գոհար Գասպարյանը, Արթուր Այդինյանը, Սուդոուկյանի և Պարոնյանի անվան թատրոնների դերասանական խմբերը և ուրիշներ: Ինչպես Գորիսում և Սիսիանում, այնպես էլ այդ շրջանների գյուղերում և ավաններում տեղի ունեցան ճոխ համերգներ, որոնք անցան բացառիկ խանդավառ մթնոլորտում: Լեոնաշխարհի մարդիկ ամենուրեք չատ ջերմ և սրտաքաց ընդունելություն ցույց տվին արվեստի վարպետներին:

Միաժամանակ Գորիսում և Սիսիանում կազմակերպվել էին ժողովրդական ցուցահանդեսներ:

**Ղափանի զարգացման հեռանկարները.**— Տարեց տարի աճում, զարգանում և գեղեցկանում է Հայաստանի լեռնագործների քաղաքը՝ Ղափանը:

Այս տարի շահագործման կհամըմվի պղնձահանքաքարի վերամշակման ու հարստացման մոտ գործարանը: Հին գործարանը կառուցվել էր 35 տարի առաջ: Նոր գործարանը հնարավորություն կտա պղնձահումքի արտադրությունը գրեթե կրկնապատկել: Առաջինս մի քանի տարում կառուցվելու է հանքաքարի մանրացման ու տեսակավորման գործարան, լեռնահանքային մեքենաների վերանորոգման ու տեսակավորման գործարան, լեռնահանքային մեքենաների վերանորոգման գործարան, բոլոր տեսակի հարմարություններով, ինչպես նաև ասֆալտբետոնի և երկաթբետոնի շինվածքների գործարաններ՝ քաղաքի պահանջները բավարարելու համար: Նախատեսվում է Ղափանում ևս կառուցել պղնձաձուլական գործարան:

Խոշոր աշխատանքներ են տարվում քաղաքի բարեկարգման և բնակարանային շինարարության գծով: Էլեկտրականացվելու է Ղափան—Մինջևան երկաթուղագիծը, ընդարձակվելու է երկաթուղային կայարանը և բարեկարգվելու ու լայնացվելու է Ղափան—Քաջաքան—Մեղրի խճուղային ճանապարհը:

